

Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ
Ֆ. Հ. ԽԵՂԱԹՅԱՆ



ԼՅՈՅ ԼԵՉՎԻ ՈՇԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկ միջնակարգ դպրոցի
ճախասիրական պարապմունքների համար

Երկրորդ հրատարակություն

ԵՐԵՎԱՆ «ԼՈՒՅՍ» 1988

ԳՄԴ 81. 24-7

Ջ 229

Հաստատված է Հայկական ՍՍՀ լուսավորության մինիստրության կողմից որպես ձեռնարկ միջնակարգ դպրոցի նախասիրական պարապմունքների համար

Ջանուկյան, Գ. Բ., Խլղարյան, Ֆ. Հ.

Ջ 229 Հայոց լեզվի ոճաբանություն. — Եր.: Լույս, 1988. —


161 էջ.

2502564 Յ 7 А

4806020200 (16) 77.1988

81. 24-7

Ջ 702 (01) 1988



Г. Б. Джаукян, Ф. О. Хлгатын

СТИЛИСТИКА АРМЯНСКОГО ЯЗЫКА

**Пособие для факультативных занятий
средней школы**

(на армянском языке)

Ереван «Луйс» 1988

© «Լույս» հրատարակչություն, 1976

ISBN 5-545-00008-8

ԳԱՂԱՓԱՐ ՈՃԻ ՄԱՍԻՆ

Հայերեն ռե բառը համապատասխանում է հունարեն ստի-լոս բառին, որ շատ լեզուների մեջ մտել է ստիլ ձևով: Հունա-րեն և հայերեն բառերն ունեցել են իմաստային գրեթե միևնույն զարգացումը: Ոճ բառը նախապես նշանակել է ծղոտ, ցողուն: Հին ժամանակներում իբրև գրիչ էին ծառայում սրածայր ձողիկներ, որոնցով գրում էին մոմապատ տախտակների վրա: Քանի որ տարբեր մարդիկ և տարբեր ձողիկներ միևնույն նշաններն արտահայտում էին իրարից փոքր-ինչ տարբեր ձևով, ռե ասելով սկսեցին հասկանալ նախ գրության, ապա նաև ընդհանրապես խոսքի մի որոշակի ձև, տվյալ մարդուն, տվյալ բնագավառին հատուկ արտահայտության եղանակների մի որոշակի ամբողջություն:

Լեզուն տարբերվում է ոչ միայն անհատից անհատ, այլև ըստ հասարակական խմբերի և գործունեության բնագավառների: Միևնույն անհատն էլ միևնույն միտքը տարբեր պայմաններում տարբեր ձևով է արտահայտում՝ նայած այն բանին, թե ինչի՞ մասին է խոսում, ո՞ւմ հետ և ի՞նչ նպատակով: Հաղորդակցման բնագավառի առանձնահատկություններով, խոսողի (գրողի) անհատական լեզվական հակումներով, ճաշակով ու սովորություններով, խոսքի իրադրությամբ, առարկայի բնույթով, նպատակադրությամբ և ներգործուն լինելու պահանջով պայմանավորված լեզվական տարբերությունները ոճական բնույթ ունեն:

Ոճը մտքերն արտահայտելու ճամբար ընտրվող լեզվական միջոցների ու եղանակների տարբերությունն է:

Լեզվաբանության այն ճյուղը, որն զբաղվում է ոճի ուսումնասիրությամբ, կոչվում է ոճաբանություն:

Յուրաքանչյուր գրական լեզու ոճականորեն շերտավորված է՝ հանդես է գալիս ոճական որոշ տարատեսակներով:

Ոճերը լինում են երեք տեսակ՝ գործառական, անհատական և իրագրական:

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՈՇԵՐ

Լինելով հաղորդակցման միջոց՝ լեզուն հաղորդակցման տարբեր ոլորտներում, հասարակական կյանքի առանձին բնագավառներում յուրահատուկ ձևեր է ընդունում: Մարդիկ միատեսակ չեն խոսում ընտանիքում ու շուկայում և հրապարակային ելույթների ու դասախոսությունների ժամանակ: Միևնույն իրադարձությունը տարբեր ձևով են նկարագրում արձանագրություն կազմում դատական քննիչը, գեղարվեստական ակնարկ գրողը և հասարակագիտական հարցերով մասնագիտորեն զբաղվող գիտնականը: Նրանցից յուրաքանչյուրը կատարում է լեզվական միջոցների ու եղանակների, բառերի ու քերականական ձևերի տվյալ նպատակին համապատասխան ընտրություն: Քանի որ այդ ընտրությունը կապված է հասարակական կյանքում լեզվի կատարած դերերի կամ, ինչպես ասում են, գործառությունների հետ, ուստի և լեզվական նման տարբերություններն ընդունված է կոչել գործառական ոճեր:

Գործառական ոճերը գրական լեզվի այն տարատեսակներն են, որոնք կապված են հասարակական կյանքի առանձին բնագավառների հետ:

Գործառական ոճերը լինում են առօրյա խոսակցական, վարչագործարարական, գիտական, հրապարակախոսական, գեղարվեստական:

Առօրյա խոսակցական ոճը հատուկ է հիմնականում բանավոր խոսքին: Մյուս ոճերը նույնպես կարող են հանդես գալ բանավոր խոսքում (բանավոր ելույթներ, դասախոսություններ, դատավարություն, գիտական հարցազրույց, ժողովրդական բանահյուսություն և այլն), բայց նրանք հատուկ են առավելապես գրավոր խոսքին: Դեռ ավելին. բանավոր շատ ելույթների և դասախոսությունների տեքստերը նախա-

պես գրվում են և հետո ընթերցվում: Գեղարվեստական ստեղծագործությունները բանավոր ձևով ունենդիրներին մատուցելը պահանջում է որոշակի ունակություն ու արվեստ և հայտնի է ուսմունք անունով:

Գործառական ոճերը իրարից լիովին անջրպետված չեն: Մի ոճի տարրերը կարող են հանդես գալ մյուսի մեջ՝ երբեմն ակամա, երբեմն, ինչպես կտեսնենք, հատուկ դիտավորությանմբ: Այդպես էլ փոխադարձաբար կարող են միմյանց վրա ազդել գրավոր խոսքը և բանավոր խոսքը: Կան որոշ կարգի բառեր ու արտահայտության եղանակներ, որոնք հատուկ են գրավոր խոսքին և այնտեղից են թափանցում բանավոր խոսքի մեջ: Դրանք հայտնի են գրեպյին անունով:

ԱՌՈՐՅԱ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՈՃ

Առօրյա խոսակցական ոճը հանդես է գալիս առօրյա կյանքում՝ ընտանիքի անդամների, ծանոթների, բարեկամների սովորական խոսակցության մեջ, կենցաղային ոլորտում, առևտուր անելիս և այլն:

Առօրյա խոսակցական ոճի դրսևորման ձևը երկխոսությունն է: Այդ ոճին հատուկ են հուզականությունը և պատկերավորությունը, արտահայտչականությունը և անմիջականությունը: Նրանում մեծ թիվ են կազմում հարցական, պատասխանական և բացականչական նախադասությունները. հաճախակի են կրկնությունները, ընդմիջարկումները, թերասումները, գրական լեզվից կատարվող շեղումները. շատ են գործածվում առօրյա կյանքի բառեր, ձայնարկություններ և եղանակավորող բառեր: Առօրյա խոսակցական ոճը կարող է ընթանալ հանդարտ պատմողական ձևով, վերածվել վեճի՝ խոսող կողմերի վերաբերմունքի բուռն արտահայտությամբ և արագ տեմպով, ստանալ հարց ու պատասխանի ձև:

ՎԱՐՉԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՈՃ

Վարչագործարարական ոճը հանդես է գալիս պետական գործունեության ոլորտում, պաշտոնական գրագրության մեջ

Ն գործնական գրություններում՝ դիվանագիտական փաստաթղթերում, օրենքներում, հրամանագրերում, արձանագրություններում, դիմումներում և այլն:

Վարչագործարարական ոճն իր բնույթով գրեթե հակադրվում է առօրյա խոսակցականին: Այն զուրկ է հուզականությունից և պատկերավորությունից. բառերը գործածվում են ուղղակի իմաստով. խոսքը հակիրճ է, ձևակերպումները՝ ճշգրիտ, բացակայում են բացականչական նախադասությունները և ձայնարկությունները, պարտադիր է քերականական կանոնավորությունը: Ըստ հնարավորին բացառվում է երկիմաստ արտահայտությունների գործածությունը: Հաճախադեպ են գրաբարյան նախդիրները՝ ի, առ, ըստ, ընդ (համապատասխան կառույցներով հանդերձ), այլև ենթարկվել, ունենալ, առնել բայերով կապակցությունները (պատասխանատվության ենթարկել, նկատի ունենալ, հաշվի առնել և այլն), վերո-, ներքո- կազմիչներով բաղադրությունները և այլն: Ընդհանրապես շատ են նույնատիպ, այսպես կոչված, կաղապարային արտահայտությունները:

ԳԻՏԱԿԱՆ ՈՃ

Գիտական ոճը հանդես է գալիս գիտական աշխատություններում, դասախոսություններում, զեկուցումներում և ելույթներում:

Գիտական ոճին հատուկ են վարչագործարարական ոճի այն բոլոր էական հատկությունները, որոնք վերջինս տարբերում են առօրյա խոսակցականից՝ հուզարտահայտչական միջոցների բացակայությունը, խոսքի հակիրճությունն ու կանոնավորությունը, ձևակերպումների ճշգրտությունը և այլն: Սակայն գիտական ոճը տարբերություններ ունի վարչագործարարականից: Նախ՝ նրան բնորոշ է ավելի շատ դատողական, քան նկարագրական խոսքը, թեև գիտատեխնիկական որոշ աշխատություններում, զեկուցումներում, դասախոսություններում նկարագրությունը դառնում է խոսքի հիմնական նպատակը: Երկրորդ՝ գիտական խոսքի մեջ մեծ տեղ են գրավում մասնագիտական բառերն ու տերմինները, գիտակցա-

բար խուսափում են վարչագործարարական ոճին հատուկ կա-
ղապարային արտահայտություններից:

Գիտական ոճին հատուկ են դատողական տիպի բառերն ու շաղկապները՝ այսպիսով, հետևաբար, ուրեմն, որովհետև, քանի որ, այսինքն, սրանով իսկ (դրանով իսկ) և այլն:

Գիտական ոճի մի տեսակն է գիտահանրամատչելի ոճը, որ բնորոշ է ոչ մասնագետ ընթերցողների համար գրված աշ-
խատություններին, լայն զանգվածների համար նախատեսված գրքերին, գրքուկներին, հոդվածներին, հանրամատչելի գե-
կուցումներին ու դասախոսություններին: Այս դեպքում ավելի քիչ են օգտագործվում նեղ մասնագիտական տերմինները, խոսքն ավելի ազատ է և կառուցվում է այնպես, որ ընթեր-
ցողին կամ ունկնդրին հասկանալի ու հետաքրքրական լինի-
կարող են հանդես գալ առօրյա խոսակցական և գեղարվես-
տական ոճերի տարրեր:

ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ՈՃ

Հրապարակախոսական ոճը հանդես է գալիս պարբերա-
կան մամուլում և հրապարակային ելույթներում:

Հրապարակախոսական ոճը համատեղում է գիտական և
գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները: Նրա
նպատակն է ազդել ընթերցողի կամ ունկնդրի ոչ միայն մտքի
ու դատողության, այլև կամքի, զգացումների ու երևակայու-
թյան վրա, նրան գործի մղել, հուզել: Եթե համոզիչ լինելու
համար հրապարակախոսությունը պետք է կառուցված լինի
ճշգրիտ դատողությունների և փաստերի վրա, ապա ավելի ազ-
դեցիկ ու ներգործուն լինելու համար պետք է լինի արտահայ-
տիչ, պատկերավոր, հուզական: Այն յուրահատուկ մենախոսու-
թյուն է՝ օժտված արտահայտչական համապատասխան մի-
ջոցներով:

Որքան հրապարակախոսական գրավոր խոսքը կոչվում է
հրապարակագրություն և այս դեպքում հրապարակախոսու-
թյուն բառը կարող է գործածվել նեղ իմաստով՝ միայն բա-
նավոր խոսքի համար:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃ

Գեղարվեստական ոճը հանդես է գալիս գեղարվեստական գրականության մեջ՝ ինչպես արձակ, այնպես էլ չափածո խոս-
ֆում:

Գեղարվեստական ոճին հատուկ են պատկերավորությունը և հուզականությունը: Այս տեսակետից նա մոտենում է առօր-
յա խոսակցական ոճին և հակադրվում վարչագործարարական
ու գիտական ոճերին: Սակայն գեղարվեստական ոճը և նրա-
նով բնորոշվող խոսքը մի շարք տարբերություններ ունեն առ-
օրյա խոսակցական ոճից և նրանով բնորոշվող խոսքից:

Ամենից առաջ, առօրյա խոսակցական ոճը կապված է
իրականության առօրյա պահանջների հետ, բխում է հաղոր-
դակցման անմիջական կարիքներից: Գեղարվեստական ոճը
պայմանավորված է գեղարվեստական երկի ստեղծագործա-
կան բնույթով և գեղագիտական արժեքով, որոնց համապա-
տասխան երկի հեղինակը լեզվական միջոցների որոշակի
նպատակադիր ընտրություն է կատարում:

Երկրորդ՝ առօրյա խոսակցական ոճի դրսևորման հիմնա-
կան ձևը երկխոսությունն է: Գեղարվեստական խոսքը, ուղղղ-
ված լինելով մեծաքանակ ընթերցողների կամ ունկնդիրների,
կարող է հանդես գալ և՛ մենախոսության, և՛ երկխոսության
ձևով, ընդ որում վերջինիս նպատակն այս դեպքում իրակա-
նության ստեղծագործական վերարտադրությունն է:

Երրորդ, ինչպես նշվել է, առօրյա խոսակցական ոճը բնո-
րոշ է գերազանցապես բանավոր խոսքին, մինչդեռ ժամանա-
կակից գեղարվեստական ոճը ամենից ավելի հատուկ է գրա-
վորին. գեղարվեստական բանավոր ստեղծագործության ոլոր-
տըն այժմ զգալիորեն նեղացել է:

Չորրորդ՝ գեղարվեստական խոսքը կարող է հանդես գալ
թե՛ արձակ և թե՛ չափածո ձևով, մինչդեռ առօրյա խոսակ-
ցությունը չափածո չի լինում:

Հինգերորդ՝ գեղարվեստական խոսքը, որպես կյանքի բազ-
մակողմանի արտացոլում, կարող է ընդգրկել և ընդգրկում է
մնացած բոլոր ոճերի տարրերը: Երկի հեղինակը մյուս ոճերը
կարող է ընդօրինակել հատուկ դիտավորությամբ, պատմա-
կան այս կամ այն դարաշրջանին հատուկ միջավայր ստեղ-

ծելու համար օգտագործել արդեն հնացած բառեր ու արտահայտություններ, տվյալ վայրը և նրա կենցաղը նկարագրելիս դիմել այդ վայրին հատուկ բառերի և արտահայտության հղանակների, հերոսներին խոսեցնել բարբառային կամ բարբառամոտ լեզվով. որևէ հասարակական խավի կյանքը նկարագրելիս նա կարող է տեղ տալ այդ խավի ներկայացուցիչների համար բնորոշ լեզվական միջոցների, նույնությամբ վերարտադրել հերոսների լեզվական առանձնահատկությունները:

Ոնավորումը խոսքի տվյալ տեսակի համար ոչ սովորական և տվյալ ոճից տարբեր լեզվական միջոցների ու ռեբրիկ օգտագործումն է հատուկ դիտավորությամբ՝ ավելի մեծ նշմարտության և նմանության հասնելու, խոսքն ավելի ուժեղացնելու, երբեմն էլ զավեշտական տպավորություն ստեղծելու նպատակով:

Առաջադրանք 1. Հետևյալ հատվածներում ցույց տալ առօրյա խոսակցական ոճի առանձնահատկությունները, նշել այդ ոճին հատուկ բառապաշարային և քերականական տարրերը, բերել առօրյա խոսակցական ոճի ուրիշ օրինակներ:

1. «...Դուռն շնմին երևաց կինը, մաշված դեղին շուտերը ոտներին և ծծի մանուկը գրկին:

— Ըհը՛, էս էլ էկա, ի՞նչ ես ուզում,— ասաց նա համարձակորեն:

— Ի՞նչ եմ ուզում,— ասաց Հոպոպը, մոտեցավ, բռնեց կնոջ ձեռքից, ներս քաշեց և սպառնական դիրք բռնեց նրա առջև:— Որտե՞ղ էիր:

— Բագրատանց տանը,— պատասխանեց կինը:

— Ի՞նչ իր շինում ընտեղ:

— Ի՞նչ պիտի շինեի: Լվացք ունեն անելու, կանչել ին, որ էգուց գնամ լվանամ:

— Լվա՞ցք... Լվա՞ցք... Տո՛՛՛ ես քու... անտեր մունդոի՞կ ես մնացել, քաղցած-տկո՞ր ես մնացել, որ ուրիշների համար լվացք ես անո՞ւմ: Հաա՛: Բա ես չկա՞մ, բա իմ գլուխը շներն ու դեբրն են կերե՞լ: Հաա՛: Տո՛՛՛, իմ կնիկն ինչի՞ պիտի ուրիշի լվացքն անի, հը՞: Տո՛՛՛, Բագրատն ո՞ւմ շունն ա, որ իմ կնիկը գնա նրա հմար լվացք անի, հը՞: Տո՛՛՛, ի՞նչ լվացք, ի՞նչ

դես, ի՞նչ դեն, ո՞ւմ ես ուզում խաբի, հազիր ասես... գնացել
իր նրա հետ շնութին անելու... հը՞, սուտ ա՞... էլի կասե՞ս
սուտ ա՞...

— Ի՛, հողեմ գիժ գլուխդ,— ասաց կինը արհամարհան-
քով և շանչելով ետ դարձավ, որ դուրս գնա:

— Կա՛ց,— գոռաց Հոպոպը,— ո՞ւր ես գնում: Հենց գիտաս
ձեռիցս կարծնե՞ս: Գիժը հըմի կտեսնես: Ընչկլի հոգիդ չհա-
նեմ, կթողա՞մ: Հոպոպը սկսեց կնոջը անխնա ծեծել, հայհո-
յանքի տարափ թափել:

(ՆԱՐ-ԴՈՍ, «ՀՈԱՊՈՎ»)

լուծումը:

2. Եկավ վիթխարի ծերունի մի մարդ,
Կանգնեց վրդոճված տղերանց միջին,
Մատը դեպի ձոր մեկնելով հանդարտ
էսպես նա պատմեց զոռ տալով չիբխին.

— էս գիշեր, կեսը կըլներ գիշերվա,
Դեռ չէի կըպցրել աչքս տեղի մեջ:

Քունս էլ է. կորել, ջանս էլ էն վաղվա,
Ամեն մի բանից մընացել եմ խեղճ...

Հա, հալալ կեսը կըլներ գիշերվա,
Շունը վեր կացավ էս կըռան վրա.

Հեյ-հե՛յ, կանչեցի, ձեն տըվող շելավ.

Շունը գազազեց, շունը վեր կալավ...

Հե՛յ գիտի, ասի ինքս իմ միջում,

Ի՛նչ է մընացել առաջվան տըղից.

Քնում էի վաղ մենակ արխաջում,

Մի ձեն լըսելիս վեր թռչում տեղից...

էն էի ասում, քընել չէի դեռ.

Կըլիներ դառը գիշերվան կեսը,

Երկու մարդկային սև կերպարանքներ

Շան առջև փախած՝ ցած իջան դեսը...

(Հ. Քումանյան, «Անուշ»)

3. «...էն է՝ ախպեր ջան, ախպորս որ ասեմ՝ ձիս նստել
գնում էի Դումանլու, Չամլըբել: Էնպես գիշերվա դառը կեսը
կըլներ, մին էլ տեսա, որ ընկել եմ Ղարանլուխ մեջի ջահնամ-
դարասին: Հիմի, ախպեր ջան, ականջս ձենի՝ ձիուն հարա-
քյաթ, դամշուն բարաքյաթ՝ գնում եմ: Ամա՝ մի մթնագիշեր
էլ է, որ աչք աչքի չի գալիս: Մին էլ մի ձեն ընկավ ականջս:

Ասի, յա գազան է, յա ավազակ: Ականջ դրի, որ՝ գազանի, ավազակի բան չի, սելավի պես գալիս է: Այ տղա, էս ի՞նչ բան է: Մտքով էի, մին էլ տեսնեմ ի՞նչ, մի զորք է գալի, մի զորք է գալի, ոնց որ ղիամաթ: Ձեն տվի, ադա էդ ո՞ւմ զորքն է: Ձեն չտվին: Էն է՝ թուրս պլոկեցի, ձիս կրակեցի, ընկա էդ զորքի մեջըն ու սկսեցի ղամշիլը: Էդպես ղամշեցի մի վախտ, մին էլ տեսնեմ մթան մեջ մի ձիավոր ձեն է տալիս. «Սախկալ-Թութան, ջամուշ պատռանք, խփի»: Հո իմանալս էր: Որ ձիս շթոցրի՞, չհասա ու սրան հենց էսպես ձեռքով ձիախառն գետին չգարկի՞... Սա փաթաթվեց սրիս ու մենակ էսքանը գոռաց. «Աման, Քյոոօղլի, բաշխի»: Տո, քու Քյոոօղլու ըսենց ընենցը... Ախպեր ջան, սրան գցեցի ոտքերիս տակ, ըմ, հիմի ոնց եմ տալի փորին, գլխին, մեջքին... մեջքին, փորին, քթին... շինեցի քյուֆթա... էստեղ լուսնյակը դուրս եկավ: Մտիկ տվի որ՝ քաջ նազարն է»:

(Դ. Դեմիրեյան, «Քաջ նազար»)

Առաջադրանք 2. Բերված տեքստում ցույց տալ վարչագործարարական ոճին բնորոշ երևույթները, տրված օրինակով գտնել այդ ոճի ուրիշ օրինակներ:

Պայմանավորվող Բարձր Կողմերը հայտարարում են, որ երկու երկրների և իրենց ժողովուրդների միջև գոյություն կունենա անխախտ բարեկամություն, և կզարգանա բազմակողմանի համագործակցությունը քաղաքական, տնտեսական, առևտրական, գիտատեխնիկական, կուլտուրական և մյուս բնագավառներում՝ պետական սովերենության, տերիտորիալ ամբողջականության հարգման և միմյանց ներքին գործերին չմիջամտելու հիման վրա...

Պայմանավորվող Բարձր Կողմերը, հետևողականորեն վարելով հասարակական տարբեր սիստեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության քաղաքականություն, իրենց խաղաղասեր արտաքին քաղաքականությունը համապատասխան, այսուհետև ևս հանդես կգան հանուն ամբողջ աշխարհի խաղաղության, միջազգային լարվածության թուլացման, ընդհանուր և լրիվ զինաթափման, որը արդյունավետ միջազգային վերահսկողության ներքո ընդգրկի ինչպես միջուկային, այնպես էլ սովորական սպառազինությունները...

Սույն պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ կմտնի վավերագրերի փոխանակման օրվանից... (թերթից)։

Առաջադրանք 3. Հր. Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» վիպակի հետևյալ հատվածում նշել լեզվական այն տարրերը, որ հատուկ են դատաքննչական գրագրություններին։

Միլիցիան դուրս եկավ կենտրոնից, գնաց, փնտրեց ու գտավ Գետամեջ գյուղը։ Գետամեջ գյուղում հետախուզությանը գտավ Ռեազ Մովսիսյանի տունը, գոմը, գոմի դուռը։ Ռեազի (կարծեցյալ կորստատեր Ռեազ Մովսիսյանը կտրակառնապես հայտարարեց, որ ինքը լավ չի հիշում, թե իրենք երբևէ ունեցել են ոչխարներ) և մանավանդ նրա կնոջ մանրակրկիտ հարցաքննությանը պարզեց, որ երկու օր առաջ (ս. թ. օգոստոսի 24-ին, երեկոյան ժամը հինգի մոտերքը, ոչ շուտ չորսնանց երեսունից, ոչ ուշ հինգն անց երեսունից) կորել են Գետամեջ գյուղի բնակիչ քաղաքացի Ռեազ Գևորգի Մովսիսյանի չորս ոչխարները, երկուսը՝ չորս տարեկան, մեկը՝ երեք, մեկը՝ երկու. երկուսը սպիտակ, երկուսը սև, տեղական տեսակին պատկանող. մեկը՝ մեկ տարեկանը՝ խրտնող, երեքը՝ հանգիստ բնավորության պատկանող (առաջինի պատճառով էլ, — հաշվի առնելով կորստատիրուհի Թագուհի հորենական ազգանվամբ Կարապետյանի կարծիքը — վերոհիշյալ չորս ոչխարները հեռացել են տիրոջական դռնից)։

Առաջադրանք 4. Համեմատել, թե միևնույն դեպքը ինչպես է նկարագրված գեղարվեստական խոսքում և քննիչի արձանագրության մեջ, նշել վարչագործարարական ոճին հատուկ բառերը, արտահայտություններն ու խոսքի կառուցման ձևերը։

Իշխանը նստեց քարին։ Վայրկենական մի ենթագիտակցությանը միլիցիոները ենթադրեց, որ այդ նստելը «կանգնի՛ր» հրամանի կատարումն է։ Դրանից հետո անելիքդ պարզ է. մոտ ես վազում, ձեռքը ոլորում և տանում քաղաքամաս՝ քաղաքում։ Իսկ սարերո՞ւմ. հրահանգների մեջ ինչ-որ մի կետ պակաս է։ Այդ կետը հպարտությանը գրեց միլիցիոները՝ բռնվածին տանելով կրակի մոտ՝ նախկին տեղը։ Բայց այդտեղ եղավ մի այնպիսի բան, որ կուզես լեյտենանտ եղիր, կուզես ենթագիտակցություն եղիր, կուզես մայոր եղիր՝ գլուխ

չես հանի. միլիցիոներին գլխարկը գլորվեց: Գլխարկը կտր էր, մեջը պողպատալարի օղակ կար, և լանջը թեք էր, իսկական գլխարկ գլորելու տեղ: Գլխարկը գլորվեց, գնաց, ցատկոտեց և քարի գլխից թռավ:

(Հր. Մաթևոսյան, «Մենք ենք, մեր սարերը»)

Առաջադրանք 5. Բերել գործնական գրությունների օրինակներ, գրել արձանագրություն, ակտ, տեղեկանք, դիմում:

Առաջադրանք 6. Որոշե՛լ, թե ստորև բերվող հատվածներից որոնք են բուն գիտական ոճով գրված և որոնք՝ գիտահանրամատչելի: Յո՛ւյց տալ գիտական ոճի առանձնահատկությունները, գուրս գրել տերմինները և այդ ոճին հատուկ բառերն ու արտահայտությունները:

1. «Եթե ապրանքի արժեքը որոշվում է նրա արտադրության տեղոթյան ընթացքում ծախսված աշխատանքի քանակով, ապա կարող էր թվալ, թե ապրանքի արժեքն այնքան ավելի մեծ է, որքան ավելի ծուլ կամ անհմուտ է այդ ապրանքն արտադրող մարդը, որովհետև նրան այնքան ավելի շատ ժամանակ է պահանջվում ապրանքը պատրաստելու համար... Տվյալ ապրանքի արտադրության վրա գործադրվում է միայն միջին հաշվով անհրաժեշտ կամ հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակը:

Հասարակականորեն անհրաժեշտ աշխատաժամանակը այն աշխատաժամանակն է, որ արտադրության հասարակականորեն նորմալ առկա պայմաններում և տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող աշխատանքի հմտության ու ինտենսիվության միջին մակարդակի պարագայում պահանջվում է մի որևէ սպառողական արժեք պատրաստելու համար»:

(Կ. Մաբս, «Կապիտալ»)

2. «Սրտամկանի ինֆարկտն առաջանում է կորոնար զարկերակի որևէ ճյուղի լուսանցքի կա՛մ խցանման, կա՛մ արտահայտված և լուսական սպազմի հետևանքով, երբ սրտամկանի տվյալ տեղամասում դադարում է արյան շրջանառությունը և զարգանում է նեկրոտիկ պրոցես: Կլինիկորեն սրտամկանի ինֆարկտն արտահայտվում է որպես յուրահատուկ ձևի ծանր ստենոկարդիա»:

(Տ. Ս. Մնացականյան, Գ. Գ. Գևորգյան, «Անճեռած գեղի քերապիա»)

1. «Լեղապարկը, ուր հավաքվում է լյարդում առաջացած լեղին, օժտված է նրբահյուս նյարդամկանային մեխանիզմով, որը կարգավորում է լեղիի մուտքը աղիները:

Քիչ շարժվող մարդկանց մոտ լեղապարկի գործունեությունը խանգարվում է, լեղին երկար ժամանակ կանգնած է մնում, առաջանում է բորբոքում, և աստիճանաբար քարեր են գոյանում: Լեղապարկի քարերը լյարդի ծակոցներ են առաջացնում այն դեպքում, երբ քարն սկսում է անցնել լեղատար ուղիներով: Մինչև կես սանտիմետր մեծություն ունեցող քարերը կարող են առանց ցավ պատճառելու անցնել տասներկու մատնյա աղին:

Լեղապարկում քարերի գոյացման պատճառ-կարող են դառնալ լյարդի հիվանդությունները: Ծթե մարդն առողջ է, լյարդում առաջացող լեղաթթուների շնորհիվ խոլեստերինը լեղապարկում մնում է լուծված: Իսկ երբ լյարդը հիվանդ է, լեղաթթուների քանակը նվազում է, որից խոլեստերինը կարող է նստվածք տալ:

Քարեր կարող են առաջանալ նաև նյութափոխանակության խանգարման հետևանքով, հատկապես, երբ մարդ շարաշահում է յուղոտ կերակրատեսակները և քաղցրավենիքը:

2. «Կարելի է արդյոք լույսը հաղորդել լարերով այնպես, ինչպես էլեկտրական հոսանքը հաղորդալարերով:

Գիտնականները երկար ժամանակ շարժարվում էին այդ խնդրի վրա: Նրանք բացառիկ խնամքով պատրաստում էին բարակ խողովակներ, նույն խնամքով էլ մշակում էին խողովակի ներսի պատերն ու արծաթապատում, որպեսզի խողովակի ներսում լույսն անդրադառնա այդ պատերից ու տարածվի միայն նրա երկայնքով:

Երկար ժամանակ շարժարվում էին և... ապարդյուն: Բավական էր, որ խողովակի պատերը մի քիչ անողորկ լինեին կամ ծռված, մի ծայրից ուղարկված լույսը մյուս ծայրից դուրս էր գալիս մեծ կորուստներով...»:

3. «Հայտնի է, որ մինչև 1000° տաքացրած մետաղը լույս է արձակում: Այս երևույթը կոչվում է ջերմային ճառագայթում: Լյումինեսցենցիան նյութերի սառը ճառագայթումն է: Այդ ճառագայթման ժամանակ ջերմաստիճանը շատ բարձր չի լինում: Լյումինեսցենցիայի հանրահայտ օրինակ կարող են

ժառայել փտող ծառերի, լուսատուիկների, ցերեկային լամպերի և նեոնային ռեկլամների լուսարձակումը: Լյումինեսցենցիան առաջանում է, երբ ատոմը զրգուլած վիճակից նորից անցնում է չզրգուլած վիճակի»:

(«Գիտություն և տեխնիկա»)

Առաջադրանք 7. Նշել այն հատկանիշները, որոնցով հետևյալ հատվածներում հրապարակախոսական ոճը մերձենում է գեղարվեստականին, միաժամանակ ցույց տալ, թե ինչով է տարբերվում նրանից:

1. Որքան էլ հալածեն մեզ, որքան էլ ատեն ու զրպարտեն մեր հասցեին, մեր համոզմունքների համար մղվող պայքարի մեր դրոշը, մեր գաղափարների ու լոզունգների պրոպագանդան մենք չենք դադարեցնի: Ընդհակառակն, որքան հակառակորդները ավելի ջանան խաբել բանվորների լայն զանգրվածներին և խեղաթյուրել մեր պահանջների իմաստը, այնքան ավելի մեծ եռանդով կպարզաբանենք մեր իսկական նպատակները, հեղափոխական պրոլետարիատի նպատակները: ...Մենք կապրենք ողջ սարսափը, կընդունենք այն բոլոր հարվածները, որ վիճակված են մեզ՝ որպես ինտերնացիոնալ պրոլետարական կուսակցության,— այն կատարյալ վստահությանմբ, որ դեմոկրատիան կճանաչի մեր կատարյալ իրավացիությունը, վաղը կգնա այն ուղիով, որ մենք ենք ցույց տալիս:

2. Ընտրությունները ցույց տվին, որ Բաքվի կայազորը համարյա ամբողջովին գնում է մեր կուսակցության հետևից: Զինվորների և նավաստիների քաղաքական համակրանքը և քաղաքական վստահությունը բուլշևիկների կողմն է:

Ասում են, թե զինվորները մեր հետևից են գնում նրա համար, որ հոգնել են պատերազմից: Ճիշտ է, որ զինվորները հոգնել են և որ այս հսկայական նշանակություն ունի, բայց մի՞թե այդ հոգնածությունը սկսեց զգացվել միայն վերջին ամիսներին: Մի՞թե այս երեք տարվա պատերազմից հետո, երբ զինվորները գնում էին պահպանողականների հետևից, նրանք դեռ չէին հոգնել և տանջվել պատերազմից, չէ՞ որ նրանք, այնուամենայնիվ, գնում էին նրանց հետևից:

Ասում են, թե զինվորները բուլշևիկների հետևից են գնում նրա համար, որ վերջիններս նրանց շատ հաց են խոստանում,

առհասարակ խոստանում են երկրում նրանց համար դրախտ ստեղծել: Դա սուտ է: Բուլշևիկները ոչինչ չեն խոստանում, ոչ ոքի չեն խաբում: Բուլշևիկները իրենք բանվորներ են, իրենք զինվորներ են. ինչո՞ւ պետք է նրանք իրենք իրենց խաբեն:

Բուլշևիկները ոչինչ չեն խոստանում, նրանք ասում են հենց բանվորներին, զինվորներին և գյուղացիներին՝ վերցրե՛ք իշխանությունը ձեր ձեռքը: Բարեկամեցե՛ք ձեր տնտեսական և իրավական դրություներ: Գրավեցե՛ք հողը կալվածատերերից: Բանը խոստումների մեջ չէ, պարոնա՛յք համաձայնականներ, պարոնա՛յք պահպանողականներ (Ստ. Շանովյան):

Առաջադրանք 8. Բերե՛լ հրապարակախոսական ոճի կիրառման օրինակներ մամուլի տարբեր ժանրերից (առաջնորդող, ռեպորտաժ, հաղորդում, հոդված, գրախոսություն):

Առաջադրանք 9. Ուսումնասիրել որևէ լրագրի մի քանի համարների վերնագրերը, դիտել, թե ինչպիսի լեզվական դժուարություններ ունեն դրանք:

Առաջադրանք 10. Գրական երկերից ընտրել համապատասխան օրինակներ և նրանցում ցո՛ւյց տալ գեղարվեստական ոճի առանձնահատկությունները:

Առաջադրանք 11. Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպից բերված հետևյալ հատվածներում ցույց տալ, թե հեղինակը ոճավորման ի՛նչ ձևեր ու միջոցներ է օգտագործել և ինչո՞ւ: Նշել դարաշրջանի և պատկերվող անձանց ազգային խառնվածքի առանձնահատկություններն արտահայտող լեզվական տարրերը:

1. Չկա այլևս պարտություն, երբ մարդ գրված է մահվան: Այնպիսին ուժ է անսպառ և կործանիչ ամեն հակառակի: Մահվամբ կհաղթի նա մահվան և կպարի անմահ ոգի: Կյանքը մահով է անցնում՝ դեպի իր գոյը հետագա... Սակայն կույր է՝ այն մահը, որ շունի ոգու ներշնչում: Պետք է գիտակից ընդունել մահը: Եվ ճշմարիտ է ասել ոմն մեր հներից, թե՝ «Մահը ոչ գիտակցված՝ մահ է, մահը գիտակցված՝ անմահություն»:

— Տարապարտուց դսրովեցիր: Չեմ տեսնում իմաստություն հայհոյանքիդ մեջ: Եվ ոչ համատեղ էր դա մեր վշտին՝ հանդեպ հայրենյաց թշվառության: Ստրկության ուղիներո՞վ ես ազգը տանում ոգեկան ազատության և պետության:

2. Արքան պատմեց, որ իրենք եկել են «արևելյան երկնքի

տակից», որ ինքը հիշում է իր հոր պատմած իրենց արոտավայրերի մասին «ավելի արեւելյան երկնքի տակ...»:

— Հիմա երկնայինը ճանապարհ է բաց անում արեւմտյան երկինքների տակ:

— Ո՞ր ծով ու ցամաքից ես, ո՞ր աշխարհից ես եկել մեր աշխարհը,— հարցրեց Աթըլը:

— Հայոց աշխարհից եմ, Վրկանա և Պոնտական ծով ու ցամաքից: Պարսից արքան, որ մեր ու ձեր թշնամին է՝ ոչընչացնել է կամենում...

— Իրավունք է՝ թե կարողանա,— հեգնեց, թե լուրջ ընդհատեց Աթըլը:

— Կդիմադրենք, մեծ խաքան, թույլ չենք տա:

— Իրավունք է՝ թե կարողանաք,— նույն եղանակով ասաց Աթըլը և ապա հարց տվեց.

— Հիմա ի՞նչ ես որոնում մեր աշխարհում:

— Ես եկել եմ պատերազմի դաշինք կռելու մեր և ձեր արքայի միջև:

— Դաշինքը սրի ծայրին է, օտար իշխան: Ունե՞ք սուր:

— Ունենք: Մենք ոչնչացրինք պարսիկ զորագունդը Աղվանքում, եկանք գրավեցինք Ճորա պահակը:

Աթըլը մտածում էր: Հետո հանդարտ ասաց.

— Իսկ դուք ի՞նչ կարող եք պարսից դեմ ու մեզ հետ:

— Մենք կավերենք Ճորա պահակը, թող ձեր զորքը լցվի՝ այդտեղից Երան:

— Լավ: Հիմա ասա ինձ ազնվորեն: Եթե ես կամենամ Բյուզանդիա գնալ նրանց արքային հյուր՝ կա՞ ճանապարհ՝ ձեր երկրի վրայով:

— Կա ճանապարհ,— պատասխանեց Վարդանը խռովյալ հոգով,— բայց միայն գնալու: Վերադարձ չկա: Քեզ կհանդիպի քո թիկունքում քո պատճառած սովը: Իսկ ձմեռը շատ է երկար:

— Բարի,— ասաց Աթըլը,— մեր Հորդայի արքան կգա ձեր երկիրը ձեզ օգնության պարսիկների դեմ:

— Կհրամայե՞ս կռենք դաշինք: Մենք մեր պարտքը պիտի կատարենք,— ասաց Վարդանը:

— Կռեցեք դաշինք, եթե հավատում ես դաշինքին,— ծիծաղեց Աթըլը,— ահա դաշինք ունենք մեր աշխարհի հոգմերի

հետ, որ քշում են ավազը, ավազն էլ մեզ, մենք էլ կա՛մ ձեզ, կա՛մ Բյուզանդիային: Ամենքը ամենքի թշնամին են, հա՛, հա՛, հա՛: Ապա՛: Մենք էլ ունենք մեր թշնամին. ամենաուժեղից ամենաուժեղը: Ավազը, նա էլ մեզ է դուրս անում: Գնա, դաշինք կոիր հետը:

Արարողությունը վերջացավ: Վարդանը և մյուս իշխանները խոնարհություն արին Աթըլին և ընկրկելով հետ-հետ՝ դուրս ելան:

— Վա՛յ մեզ, վա՛յ մեր դաշինքին հողմերի ու ավազի հետ,— քմծիծաղեց Վարդանը, երբ գնում էին իրենց ուրթը»:
(Դ. Դեմիրճյան)

Առաջադրանք 12. Ա. Բակունցի «Մուրոյի «զրույցը»» պատմըվածքի հետևյալ հատվածում նշել տեղական ոճավորման արտահայտությունները: Կարդալ ողջ պատմվածքը և ցույց տալ լեզվաքերականական և արտահայտչական այն միջոցները, որոնց շնորհիվ հեղինակը պատմվածքին ժողովրդական ասքի ձև է տվել: Դո՛ւրս գրել բարբառային բառերն ու արտահայտությունները:

«— Լենին ուռուս էր: Յուր հեր լե չքավոր էր, պապ լե. գնաց կարդալու, էս յան, էն յան, մի հուսումնարան ուստ էկավ, ասավ՝ չքավոր եմ, ինձի կառնե՞ք, կուզեմ կարդացվոր էղնիմ: Առան. մի քանի վախտ կարդաց, որ ուսում թամմեց, խելքի էկավ:

Որ խելքի էկավ, իմացավ, թե աշխարքի վնաս ուստից կեղնի: Մտածեց, մտածեց, տեսավ, որ վնաս ուռուսի թագավորից կեղնի: Թոփ արեց իրենց հուսումնարանի տղոց, թե՛ ընկերներ, էնքան որ կարդացվոր եք, իմա՛լ կեղնի, որ չքավոր դառը դատի, հարուստ ուտի, ինքը մնա շուտ, սոված, ութ, մի կարկատած լեֆ լե չունի, որ մեջ պառկի:

Ընկերներ ասին. էղեր-չէղեր է, էդպես էղեր է, էդպես լե մացել է: Լենին ասավ. աշխարհն էդպես չի մնա, էսօր ամպ է, էգուց պարզ արև: Մինչի մենք ընկերություն չանենք գիրար, թագավոր լե մզի կմորթե, հարուստ լե մզի կճնշե, հող լե մզի չօգնի: Մկրատ իրեն է, կտոր լե իրեն է: Զուգոր ուղիղություն կասեմ, որ մինչի թուր հարուստի բերան չառնի, պարզ խոսք չի ասի...

էդ վախտը թագավոր մի հավատարիմ մարդ կունենա:

Կկանչի էդոր, կասի, որ երթա պտուտ գա երկիր, կուգեր իմանա, թե ժողովուրդն ի՞նչ կասի, չի ասի թագավորից: Էդ մարդը յոթ տարի ման կգա, վերջը կգա թե՛ թագավոր, լավ խոսք քիչ իմացա: Թագավոր թախտից կիջնի, թե ինչ տեսել ես, չես տեսել՝ զմմեն լե պատմի:

Կասի՝ թագավոր, իմացած եղիր, որ էսպես տավերկու տարեկան մի՛տղա, անունն Լենին, քեզ փորձանք կբերի: Թագավոր վախուց հրաման էտուր, թե տավերկու տարեկան Լենինին քշեք աքսորյան...»:

Առաջադրանք 13. Նշել, թե Ս. Կապուտիկյանի և Գ. Սարյանի ո՞ր ստեղծագործությունների օրինակով են գրված հետևյալ պարոդիաները. համեմատել դրանք և ցո՛ւյց տալ երգիծական ոճավորման նպատակով օգտագործված միջոցները»

Ես քո սիրով, դու՝ արևի

Քո մասին եմ նորից երգում,
Մոռացել ես ինձ երևի,
Թափառում ենք տիեզերքում
Ես քո սիրով, դու՝ Արևի:

Այս նոր, այս նոր հրաշքներով
Ուրախ ես դու, ես՝ ավելի.
Ապրենք այսպես կրակվելով
Ես քո խանդից, դու՝ Արևի:

Երգ կձոնենք նաև Մարսին,
Թեկուզ նա մեզ չբարևի,
Շուտով պիտի նստենք, Լուսին,
Ես քո ուսին, դու՝ Արևի:

(Հ. Սահյան)

Թանխանդա

1

Է՛յ, թանի երկիր, մածունի՛ երկիր,
Շիրազի երգում այդ թանից չկա,
Այդ մածունի պես՝ Թեհրանի երգիչ,

«Թեհրանի» ոչ մի հատորում չկա...

Մի գեղջուկ էր ապրում Իրանում,
Մանրածախ մի գեղջուկ էր նա,
Նա մածնի առևտուր էր անում,
Քեռի էր անունը նրա:

II

Կճուճները ջարդվեցին,
Պարանները բաց եղան,
Մածունի մոտ լացեցին
Քեռին, ընթերցողն ու... նրա տղան:
(Գ. էմին)

Առաջադրանք 14. Յո՛ւյց տալ, թե մամուլից բերված հետևյալ հատվածներում պահպանված են արդյոք այս կամ այն ոճին բնորոշ հատկությունները, նշել այն տեղերը, ուր խախտված է ոճի միասնությունը: Կաղապարային արտահայտությունները փոխարինել համապատասխան բառերով ու կապակցություններով:

1. Յեխոտ մի ճանապարհ էր սկսվում բակի կենտրոնից ու ձգվում դեպի արտադրամասերը: Ծանապարհի աջ ու ձախ կողմերում թափթփված էին պատրաստի արտադրանքի նմուշներ, զանազան ձուլվածքներ, մեքենաների մասեր... Դրանցից շատերը ընկած էին ցեխի մեջ, մի մասն էլ ծածկվել էր հողով և ժանգի հաստ շերտերով:

Եթե միայն բակում այսպիսի վիճակ տիրեր: Ցավոք սրբա՜տի, թափթփվածությունը իր հաստատուն տեղն է գտել Երեվանի ամրանների գործարանի շատ գործերի մեջ և հատկապես կոմերիտական կազմակերպության աշխատանքներում: Դժվար է մեկ առ մեկ թվարկել բոլորի մասին: Վերցնենք միայն մի բնագավառ, որը և բավականին ակնառու կերպով պատկերացում կտա այդ կոլեկտիվի գործերում տեղ գտած թերությունների մասին: Օրինակ, ի՞նչ վիճակում են գտնվում գյուտողացիոնալիզատորական աշխատանքների դրվածքը և այդ բնագավառում արված առաջարկությունների արմատավորման գործը:

Երիտասարդ ռացիոնալիզատոր Ս. Խաչատրյանին դուր չէր գալիս այն հանգամանքը, որ փոքր տրամաշափերի ամրանների ձողերի պտուտակները հանվում էին ունիվերսալ խառատային հաստոցի վրա, հետո տեղափոխվում էին մեկ ուրիշ հաստոց. վերջնական մշակման: Եվ ահա նրա մոտ միտք է հղանում այս երկու պրոցեսները կատարել մեկ հաստոցի վրա: Հունվարի 25-ին նա գյուտնաբերական բյուրո է ներկայացնում իր մտահղացումը: Փետրվարի 10-ին գյուտնաբերական բյուրոյի նիստում քննարկման է ենթարկվում այդ առաջարկությունը և արժանանում հավանության: Բյուրոյի նիստից շաբաթներ ու ամիսներ են անցել, բայց առաջարկությունը կյանքի ուղեգիր չի ստացել, իսկ հեղինակն էլ չի ենթարկվել խրախուսանքի: Այդպիսի բախտի է արժանացել նաև նրա մեկ այլ առաջարկություն, շնայած որ այդ մասին նա բազմիցս հիշեցումներ է արել համապատասխան օղակներին:

Նույն վիճակում է նաև Մ. Պողոսյանի առաջարկությունը: Թեպետ պատրաստ է առաջարկության առաջին նմուշը, բայց նրա արտադրության մեջ արմատավորման գործը շատ դանդաղ է ընթանում:

Եվ այսպես, քիչ չեն խելացի առաջարկությունները, որոնք դեռևս մնում են թղթապանակում կամ զանազան պատճառներով ձգձգվում է դրանց արտադրության մեջ արմատավորելու հարցը:

Կարո՞ղ էր կոմերիտական կազմակերպությունը այս բնագավառում ցույց տալ իր դեմքը: Կարո՞ղ էր, և դրա համար առանձնակի մեծ ջանքեր չէին պահանջում: («Ավանգարդ»)

2. Հանրապետությունում տարեցտարի ավելանում են պարբերականներն ու նրանց տպաքանակը: Մամուլի ընդհանուր աճը պայմանավորված է բաժանորդների թվի ավելացմամբ: Չէ՞ որ մամուլը մեր բարեկամն է, խորհրդատուն: 1968 թվականի համեմատությամբ մեզ մոտ տարածվել է 175 հազար օրինակ ավելի թերթ ու ամսագիր: Բայց մամուլի հագեցվածության տեսակետից հանրապետությունն ընդհանուր առմամբ հետ է մնում: Ինչո՞ւ բացատրել դա. ամենից առաջ նրանով, որ «Սոյուզպեչատի» շրջանային և քաղաքային որոշ

գործակալություններ, կապի հանգույցներ տվյալ շրջանի կամ քաղաքի բնակչությանը լրիվ չեն ընդգրկում բաժանորդագրության մեջ:

Բաժանորդագրության հաջող իրականացման գործում լուրջ անելիքներ ունեն մամուլի հասարակական տարածողները: Սակայն շատ կազմակերպություններում անհրաժեշտ ուշադրություն չի նվիրվում այդ օղակին, իսկ որոշ շրջաններում էլ դա իսպառ դուրս են թողել տեսադաշտից:

Մամուլի տարածման գործում առանձնակի տեղ են գրավում Երևան, Լենինական, Կիրովական քաղաքները, բայց այդ ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքներն ամենևին էլ չեն խոսում նշված քաղաքների կուսակցական, արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունների օգտին: («Սով. Հայաստան»)

ԻՐԱԴՐԱԿԱՆ ՈՃԵՐ

Լեզվական միջոցների օգտագործման տարբերությունները շատ դեպքերում կախված են այն կոնկրետ պայմաններից և իրադրություններից, որոնց մեջ գտնվում են խոսողը և ունկընդիրը, գրողը և ընթերցողը: Լեզվական միջոցների ընտրության համար առանձնահատուկ նշանակություն ունեն խոսքի առարկայի և խոսակցի նկատմամբ խոսողի ունեցած վերաբերմունքը, խոսակիցների անձնական փոխհարաբերությունը, խոսքի անմիջական նպատակադրությունը: Տարբեր պայմաններում խոսքն ընդունում է արտահայտության տարբեր ձևեր, ստանում հուզաարտահայտչական զանազան երանգներ:

Ոճական այն տարբերությունները, որոնք կախված են խոսքի իրականացման անմիջական պայմաններից, խոսողի և խոսքի առարկայի, խոսակցի և խոսողի փոխհարաբերությունից, կոչվում են իրադրական ոճեր:

Իրադրական ոճերը լինում են պաշտոնական, հանդիսավոր, հորդորական, մտերմական-փաղաքշական, կատակաբան, ծաղրական և այլն:

Պաշտոնական ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը աշխատում է ըստ հնարավորին հեռու մնալ

իր անձնական վերաբերմունքի արտահայտությունից: Այս ոճը բնորոշ է հատկապես գործնական գրագրություններին, պաշտոնական զրույցներին, գիտական շարադրանքին: Խիստ ընդգծված լինելու դեպքում այն դառնում է չոր կամ սառն:

Հանդիսավոր ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը ցանկանում է ընդգրկել առարկայի վեհությունն ու կարևորությունը, նկարագրվող անձի, երևույթի իրադարձության նկատմամբ առաջ բերել հարգանք և հիացմունք: Այս ոճը բնորոշ է հանդիսավոր զեկուցումներին, այս կամ այն անձին կամ իրադարձությանը նվիրված երկերին, հոբելյանական հոդվածներին:

Հորդորական ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը հորդորում է, խրատում, գործողության մղում կամ, ընդհակառակն, աշխատում է հետ պահել որևէ գործողությունից: Այս ոճը բնորոշ է ուսուցողական խոսքին, բարոյախոսական զրույցներին: Եթե խոսողն արտահայտվում է ավելի խիստ և կտրուկ տոնով, հորդորական ոճը վերածվում է հրամայականի:

Մտեմական-փաղափշական ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը ընդգծում է իր մտեմական վերաբերմունքը խոսքի առարկա անձի խոսակցի նկատմամբ, արտահայտում իր համակրանքը: Այս ոճը բնորոշ է մտեմական զրույցներին, անձնական նամակներին, գեղարվեստական որոշ ստեղծագործություններին:

Կատակարան ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը բարեկամական կատակ է անում, աշխատում առաջ բերել մտեմական ժպիտ, հարաբերությունները չսրել: Այս ոճը բնորոշ է առօրյա խոսակցության որոշ դրսևորումների, հումորիստական ստեղծագործություններին: Եթե խոսքն ստանում է որոշ արհամարհական երանգ, խոսողն աշխատում է ցույց տալ իր գերազանցությունը, ապա կատակարան ոճը վերածվում է հեգնականի:

Մաղբական ոճը գործադրվում է այն դեպքում, երբ խոսողը կամ գրողը բացասական վերաբերմունք ունի դեպի խոսքի առարկան կամ խոսակիցը, նրանց ծաղրում է, նշավակում, խայտառակում: Այս ոճը բնորոշ է որոշ կարգի ելույթների և երգիծական երկերին:

Որոշակի կապ կա իրադրական ոճերի առանձին տեսակների և գործառական ոճերի միջև: Պաշտոնական ոճը, ունենալով համեմատաբար շեղոք բնույթ, հանդես է գալիս վարչագործարարական ու գիտական ոճերին բնորոշ ոլորտներում: Իրադրական մյուս ոճերը, որոնց դեպքում առաջին պլան է մղվում անձնական վերաբերմունքի արտահայտությունը, հանդես են գալիս հատկապես առօրյա-խոսակցական, գեղարվեստական և հրապարակախոսական ոճերին բնորոշ ոլորտներում:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՃԵՐ

Մարդիկ միևնույն ձևով չեն խոսում և միևնույն ձևով չեն գրում: Ոմանք գերադասում են երկարաշունչ, մյուսները՝ համեմատաբար կարճ նախադասությունները: Ոմանք խոսում են բարդ ու մանվածապատ, մյուսները՝ պարզ ու հասկանալի ձևով: Ոմանք սիրում են գործածել գրքային ու հազվադեպ բառեր, մյուսները գերադասում են դրանց սովորական համանիշները և այլն և այլն: Այս բոլորը կապված են անհատների հակումների, բնավորության, կրթության, դաստիարակության հետ և այլն:

Ոճական այն տարբերությունները, որոնք հանդես են գալիս լեզվական միջոցների անհատական օգտագործման մեջ՝ կապված անհատների հակումների, բնավորության, խառնվածքի, կրթության, դաստիարակության ու ճաշակի, իրականության նրանց ընկալման հետ, կոչվում են անհատական ոճեր:

Տարբերում են անհատական ոճի երեք հիմնական տեսակ՝ բարձր կամ վսեմ, միջին կամ խառն և պարզ կամ հասարակ:

Բարձր կամ վսեմ ոճին բնորոշ է ծավալուն ու բարդ նախադասությունների, դարձվածքների ու փոխաբերությունների, հանդիսավոր ու գրքային բառերի ու արտահայտությունների գործածությունը:

Եթե բարձր ոճի հատկությունները շարաշահվում են, ապա խոսքը դառնում է դժվար հասկանալի: Այս դեպքում ասում են, որ լեզուն խրթին է:

Միջին կամ խառն ոճի դեպքում ծավալուն ու բարդ նա-

խաղասությունները, դարձվածներն ու փոխաբերությունները համեմատաբար չափավոր են օգտագործվում, բառերի ընտրությունը մեծ մասամբ կատարվում է ըստ նյութի բնույթի՝ առանց գրքային, հանդիսավոր ու գեղեցիկ բառերին հատուկ գերադասություն տալու:

Պարզ կամ հասարակ ոճին հատուկ են արտահայտության պարզ ու սովորական միջոցներն ու եղանակները, պարզ համառոտ կամ քիչ երկրորդական անդամներ ունեցող նախադասությունները, սովորական բառերն ու արտահայտությունները:

Պարզ կամ հասարակ կարող են լինել բոլոր գործառական ոճերի գրավոր ու բանավոր դրսևորումները, սակայն այդ ոճը բնորոշ է հատկապես առօրյա-խոսակցական ու վարչագործարարական բնույթի խոսքին: Բարձր կամ վսեմ և միջին կամ խառն ոճերը հանդես են գալիս հատկապես գեղարվեստական, գիտական և հրապարակախոսական երկերում:

ԳՐՈՂԻ ՈՃ .

Անհատական ոճական տարբերությունները առավել ցայտուն կերպով դրսևորվում են գեղարվեստական գրականության մեջ: Որքան ավելի խորն է գրողի անհատականությունը, և որքան ավելի է մշակված ու հղկված նրա լեզուն, այնքան ավելի հստակ է նրա ոճը, և այնքան ավելի պարզորոշ են դրսևորվում այդ ոճի առանձնահատկությունները:

Գրողի ոճը ռեալական այն տարբերությունների ամբողջականությունն է, որ հանդես են գալիս գեղարվեստական ոճի ներսում՝ պայմանավորված այդ գրողի աշխատհայացքով, իրականության նրա ընկալմամբ, խառնվածքով, ճաշակով և այլն:

Մեր դասական և ժամանակակից շատ գրողներ աչքի են ընկնում իրենց ուրույն ոճով, որ նկատելի է նույնիսկ պարզ համեմատության դեպքում: Բավական է համեմատել ԲաժՖու լեզուն Շիրվանզադեի, Թումանյանի լեզուն՝ Իսահակյանի կամ Տերյանի, Բակունցի լեզուն՝ Զորյանի կամ Դեմիրճյանի, Շի-

րազի լեզուն՝ Սեակի կամ Սահյանի լեզվի հետ, որպեսզի իսկույն նկատենք նրանց ոճական տարբերությունները:

Հեղինակի ստեղծագործական զարգացման հետ միասին կարող է փոփոխվել նրա ոճը: Գրողը երբեմն իր լեզուն մշակելու ընթացքում հաղթահարում է ուրիշ գրողների ազդեցությունը, հեռացնում օտարամուտ տարրերը և, ինչպես ասում են, գտնում է ինքն իրեն: Սրանում հեշտությամբ կարելի է համոզվել համեմատելով Թումանյանի «Անուշի» առաջին և երկրորդ տարբերակները:

Առաջադրանք 15. Համեմատել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Զանգի», Բաֆֆու «Սամվել» վեպի «Արատյան դաշտի առավոտը», Շիրվանզադեի «Քաոս» վեպի նավթահանքերի հրդեհի հատվածները կամ Հովհ. Թումանյանի «Անուշ», Ավ. Իսահակյանի «Արու-լալա Մահարի» պոեմների որոշ մասերն ու Վ. Տերյանի առանձին բանաստեղծությունները և ընդհանուր գծերով բնութագրել այդ հեղինակների ոճերը (առաջադրանքը կատարել դասարանում, առուցչի օգնությամբ):

Առաջադրանք 16. Կարդալ Ծ. Զարենցի «Լուսամփոփի պես աղջիկ» («Ծիածան» շաբթից), «Ինչքան կանչես ու տաղ ասես, խելքի արի՛ բավ է էլի» («Տաղարան» շաբթից) բանաստեղծությունները, համեմատելով «Սոմա», «Ամբոխները խելագարված» պոեմների առանձին հատվածների հետ: Նշված բանաստեղծություններից դո՛ւրս գրել այն բառերն ու արտահայտությունները, որ հատուկ չեն Ծ. Զարենցի պոեմների և ուշ շրջանի երկերի լեզվի տարրերին:

ՈՃԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԱՂԱՓԱՐ ՈՃԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպես ամեն առարկա, երևույթ, հասկացություն, այնպես էլ ոճը ունի իր հատկությունները: Որոշ հատկություններ ոճի համար դրական են, մյուսները՝ բացասական:

Ոճի դրական հատկություններն են ճշգրտությունը, պատեհությունը, սեղմությունը, պարզությունը, բովանդակությունը, բազմազանությունը, կանոնավորությունը, արտահայտչականությունը, պատկերավորությունը, ճուշականությունը, տրամաբանությունը և այլն: Դրական հատկություններից մի քանիսը (ճշգրտություն, պատեհություն, կանոնավորություն և այլն) սլարտադիր են խոսքի համար ընդհանրապես և պետք է տեղ գտնեն բոլոր կարգի ոճերում, մյուսները բնորոշ են որոշ տեսակի ոճերի:.. այդ ոճերում նրանք տեղին են և անհրաժեշտ, այլ ոճերում կարող են լինել անտեղի և անցանկալի: Այսպես, օրինակ, պատկերավորությունն ու հուզականությունը գեղարվեստական ոճի մեջ տեղին են և դրական, վարչագործարարական ոճի մեջ՝ անտեղի և անցանկալի:

Ոճի բացասական հատկություններից են ձգձգվածությունը, անկանոնությունը, փգոնությունը, ճոռոմությունը, բառապաշարի աղքատությունը և այլն:

ԾՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԵՀՈՒԹՅՈՒՆ

Խոսողը կամ գրողը պիտի կարողանա յուրաքանչյուր դեպքում ընտրել լեզվական այնպիսի միջոցներ, որոնք ամենից ավելի լավ են արտահայտում տվյալ բովանդակությունը:

Ճշգրտությունը ոճի այն հատկությունն է, որ պահանջում է տվյալ բովանդակությունը արտահայտել ամենից ավելի համապատասխան լեզվական միջոցներով:

Լինում են դեպքեր, երբ խոսողը կամ գրողը ակամա դուրս է գալիս իր սովորական ոճից, հետևում ուրիշներին, խոսում իր համար ոչ սովորական եղանակով: Այսպիսի անցումներից պետք է խուսափել:

Ոճի ճշգրտության արտահայտություններից մեկը պատեհությունն է, որ պահանջում է ամեն մի նպատակի, նյութի և լսարանի (ունկնդրի, ընթերցողի) համար ընտրել լեզվական համապատասխան միջոցներ:

Ոճի ճշգրտության լավագույն պայմանը այնպիսի բառերի ընտրությունն է, որոնք այլ բառերով փոխարինելու դեպքում կառաջացնեն իմաստի աղճատում: Պետք է խուսափել երկ-

դիմի արտահայտություններից, բառերի անտեղի կամ սխալ օգտագործումից: Լեզվական միջոցների ռճական անհամապատասխանությունը թույլատրելի է միայն հատուկ դեպքերում՝ հատկապես երգիծական նպատակներով:

ՍԵՂՄՈՒԹՅՈՒՆ

Միևնույն միտքը կարելի է արտահայտել շատ կամ քիչ բառերով: Որքան ավելի քիչ բառերով է մարդ արտահայտում իր մտքերը, այնքան ավելի շատ է խնայում իր և ունկնդիրների կամ ընթերցողների ժամանակը:

Սեղմությունը ռճի այն հատկությունն է, որ պահանջում է տվյալ բովանդակությունը արտահայտել համեմատաբար ավելի քիչ բառերով:

Մարահեղ սեղմության հասնող ռճն ընդունված է կոչել լակոնական:

ՊԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Եթե մարդ լավ է պատկերացնում նյութը, մտքերը կարող է շարադրել պարզ ու հասկանալի ձևով: Պարզ ու հասկանալի խոսքը գերադասելի է խրթին ու մթին խոսքից, որը հասկանալը պահանջում է մտքի լարում և հոգնեցնում է ունկնդրին կամ ընթերցողին: Խրթնությունը խոսքը դարձնում է սակավ ազդեցիկ:

Պարզությունը ռճի այն հատկությունն է, որ պահանջում է տվյալ բովանդակությունը արտահայտել ունկնդրին կամ ընթերցողին ըստ հնարավորին ավելի հասկանալի ձևով:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի խոսք պետք է ունենա որոշակի առարկա և բովանդակայնություն, որոնք պետք է հետաքրքրական լինեն ունկնդիրների կամ ընթերցողների համար: Չի կարող ազդեցիկ

լինել այն խոսքը կամ ճառը, որ վերածվում է առանց որոշակի առարկայի իրար հաջորդող նախադասությունների շարքի։

Բովանդակայնությունը ոճի այն հատկությունն է, որ պահանջում է խոսողին ու գրողին լավ ծանոթ և ունկնդիրների ու ընթերցողների համար հետափրհական խոսքի առարկա ու բովանդակություն։

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Միատեսակ մտքերը կամ գաղափարները խոսքի մեջ կարելի է արտահայտել տարբեր ձևերով։ Փորձը ցույց է տալիս, որ միևնույն միտքը տարբեր միջոցներով արտահայտելը ավելի է գրավում ունկնդրի կամ ընթերցողի ուշադրությունը, նյութը դարձնում ավելի հետաքրքրական։ Միօրինակությունը հոգնեցնում է և ձանձրացնում։ Այսպես, եթե նախադասությունը արդեն կառուցվել է ոչ միայն — այլև շաղկապական բառերով, ապա չի կարելի իրար հետևից կրկնել այդ կառույցը։ Հարկավոր է գտնել արտահայտության ուրիշ միջոցներ, դիմել իմաստի արտահայտման ըստ հնարավորին տարբեր եղանակների։

Բազմազանությունը կամ պեսսպիսությունը ոճի այն հատկությունն է, որ պահանջում է միատեսակ մտքերն ու գաղափարները խոսքի մեջ արտահայտել տարբեր միջոցներով ու եղանակներով։

ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Մտքերը արտահայտելու համար լեզվական ինչպիսի միջոցներ էլ որ օգտագործվեն, դրանք պետք է համապատասխանեն գրական լեզվի նորմաներին։ Քերականական կանոնների խախտումները, ոչ գրական բառերի հաճախակի գործածությունը անթույլատրելի են։

Ոճի կանոնավորությունը նրա այն հատկությունն է, որ պահանջում է գրական լեզվի նորմաների պահպանում, փրականական կանոնավորություն, ոչ գրական բառերի հաճախակի օգտագործման քացառում։

ԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Եթե ոճի պարզության նպատակն է ըստ հնարավորին հասկանալի դարձնել խոսքը, մտքերը լավ հասցնել ունկնդրին կամ ընթերցողին, ապա արտահայտչականությունը նպատակ ունի ազդել ունկնդրի կամ ընթերցողի զգացմունքների և երեվակայության վրա, նյութը նրան ներկայացնել դիպուկ և առարկայական ձևով, այնպես անել, որ նա անտարբեր չմնա խոսքի հանդեպ:

Արտահայտչականությունը ոճի այն հատկությունն է, որ ազդում է ունկնդրի կամ ընթերցողի զգացմունքների ու տրամադրության վրա, թույլ չի տալիս նրան անտարբեր լինել խոսքի և խոսքի նկատմամբ:

Խոսքն արտահայտիչ է դառնում ոչ միայն հուզական բաների, դիպուկ արտահայտությունների և դարձվածների օգտագործմամբ, հուզական հնչերանգով, կրկնություններով և ընդհանրապես լեզվական այնպիսի միջոցներով, որոնք ծառայում են զգացմունքների արտահայտմանը, այլև պատկերավորությանը: Այս դեպքում առարկան կամ հատկությունը ներկայացվում է ոչ թե ուղղակի, սովորական անվանումով, այլ անուղղակի ձևով, կողմնակի միջոցներով. այնպես է արվում, որ ունկնդիրը և ընթերցողը լարի երևակայությունը, գլխի ընկնի, առարկան ընկալի ավելի տեսանելի ու շոշափելի, կերպով, այն պատկերացնի:

Պատկեր է կոչվում առարկայի կամ հատկության անմիջական անվանման փոխարեն այդ առարկայի կամ հատկության արտահայտման կողմնակի միջոցների օգտագործումը:

Պատկերի համար առանձնապես կարևոր է վերացական գաղափարների արտահայտումը ավելի կոնկրետ և շոշափելի միջոցներով:

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԵՐԸ

ՄԱԿԴԻՐ

Որոշիչ բառերը սովորաբար դրվում են այս կամ այն գոյականի վրա՝ նրա նշանակած առարկան մի այլ առարկայից տարբերելու, որոշելու համար՝ բարի մարդ, բարձրահասակ աղջիկ, ծանր ֆար և՛ այլն։ Սակայն որոշիչ բառերը և հատկապես ածականները՝ կարող են գործածվել խոսքն արտահայտիչ դարձնելու, նրան հուզականություն և պատկերավորություն հաղորդելու համար՝ բոցավառ սիրտ, ոսկեղեն դաշտ, նուսավառ կանչ և այլն։

Այն որոշիչ բառերը, որոնք սովորականներից տարբերվում են արտահայտչականությամբ, հուզական կամ պատկերավոր բնույթ ունեն, կոչվում են մակդիրներ։

Մակդիրները բնորոշ են գեղարվեստական ոճին և առանձնապես հաճախակի են հանդես գալիս բանաստեղծական խոսքում։ Ժողովրդական երգերն ունեն իրենց սիրած մակդիրները՝ կեռ ճռնֆեռ, ոսկեթել մագեր, շինարի բոյ, խորոտիկ յար, անուշ յար, սևավոր սիրտ, ջիվան կյանք, ոլոր ճամփա և այլն։

Առաջագրանք 17. Գտնե՛լ մակդիրները, ցո՛ւյց տալ նրանց ոճական դերը։

Դու, Արագա՛ծ, ալմաստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գազաթներդ՝ բյուրեղ վրան
Թափառական ամպերի,

Սեգ ժայռերդ՝ արծվի բույն,
Լճակներդ՝ լույս-փերուզ.
Առուններդ՝ մեջքիդ փայլուն
Պերճ գոտիներ ոսկեհյուս։

Ծիրանավառ դո՛ւ թագուհի,
Բուրումների դո՛ւ աղբյուր,
Ծաղիկներդ հազար գույնի,
Հազար անուն, հազար բույր։

(Ավ. Խաճակյան)

Առաջագրանք 18. Յո՛ւյց տալ մ՛ակդիրները և որոշե՛լ նրանց
տեսական ըստ շարադասության (նախադաս, ետադաս):

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվազ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու Նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արեն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուժը վսեմ,
Մթնում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում:

Ուր է՛լ լինեմ,— չե՛մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր—
էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան— յա՛րն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Դնչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:
(Ե. Չարեճյ)

Ժայռեր, կարծրացած հողմ ու շանթի տակ,
Ժայռեր ամենհի, բիրտ ու քարեղեն,
Ու ժայռերի մեջ մի քնքուշ լճակ,
Երազից պոկված մի կապույտ ծվեն:

Մինչ խորհում են լուռ ժայռերը մթին
Ու մտաբերում սև հողմեր ու ամպ,
Արեն է խաղում լճի կապույտին,
Ու ջուրն է ծփում մաքուր քնքշությամբ:

Իմ հայոց երկիր, իմ հայոց աշխարհ,
Շանթերի զարկից քարեղեն ու կուռ

ինչպե՞ս ես պահել դարերում խավար
Քո սիրտը այսքան քնքուշ ու մաքուր:

Մի փոշոտ, փափուկ ճամփա,
Փշատի սաղափ ծառեր,
Մի կապո՛ւյտ, կապո՛ւյտ երկինք
Ու արև, արև, արև...

Ես սիրում եմ քեզ, իմ հայ ժողովուրդ,
Քե՛զ, որ լեռներում այս բարձրիկ ու լուրթ
Ապրել ես դարեր, դարեր մաքառել...

(Վ. Դավթյան)

Առաջադրանք 19. Դուրս գրել մակդիրները մակագրյալ բառերի հետ և խմբավորել ըստ կազմության:

1. Վարդագույն մի խնդություն տուֆ քարերիդ պես, ասես ներկել է կյանքիս տասնևմեկ տարին: 2. Խարտյաշ վարսերը փռել, լույս է տվել խավարին, հույս է տվել սրտերին շողշողուն այս պատանին (Գ. Սարյան): 3. Անհույս իմ տան հույս ձեռքեր, մրոտ ձեռքեր, կույս ձեռքեր, մեր օջախը վառ պահող մորս ձեռքեր, լույս ձեռքեր: 4. Դառն է իմ ծով խնդությունը՝ քանի վշտի մի շիթ կա դեռ: 5. Օ, ծով խելահեղ, մի՞թե չես հոգնում՝ դարեր ալիքվող նույն երգն ես երգում (Հ. Շիրազ): 6. Եվ երկուստեք տիրեց պրկված լռությունն ու կաշկանդումը: 7. Կայսրը քրտնած խմորե ձեռքերն ու նիհար ուսերը բարձրացրեց: 8. Շուտով նրա ծեր առյուծի արծաթաբաշ գլուխը խոնարհվեց մատյանի վրա: 9. Արսենը հրաժեշտի ժամի հապճեպությամբ պատրաստվեց մեկնելու ճամբար: 10. Արցունքները կախվեցին նրա կակաչի միջուկի սևության թարթիչներից: (Դ. Դեմիրճյան)

Առաջադրանք 20. Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի առաջին և երկրորդ սուրահներից դո՛ւրս գրել օգտագործված զանազան դարձույթները:

ԴԱՐՁՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԲԱՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Արտահայտչականությանը նվիրված հատվածից բխում է, որ կան խոսքն արտահայտիչ դարձնելու երկու կարգի միջոցներ:

Արտահայտչականությունը ձեռք է բերվում առաջին հերթին պատկերների միջոցով, այսինքն՝ առարկաների և երեվույթների անուղղակի արտահայտությամբ, նրանց բուն անվանումների փոխարեն կամ սրանց հետ միասին այլ կարգի բառերի ու լեզվական միջոցների օգտագործումով:

Լեզվական այն միջոցները, որոնք առարկաները և երեվույթները ներկայացնում են անուղղակի ձևով, կաշվում են զարմույթներ:

Արտահայտչականության մյուս միջոցների դեպքում գործածվում են առարկաների, երևույթների, հատկությունների սովորական անվանումներ, բայց այնպիսի ձևով, որ ունկրնդիրների կամ ընթերցողների մեջ առաջ բերեն համապատասխան հույզեր, ստեղծեն որոշակի տրամադրություն: Այդպիսի միջոցներից են կրկնությունները, նախադասության համապատասխան կառույցների գործածությունը, քերականական թույլատրելի շեղումները, քերականական միջոցների օգտագործումը սովորականից տարբեր ձևով և այլն:

Լեզվական այն միջոցները, որոնց դեպքում խոսքն արտահայտիչ է զառնում խոսքի կառուցման կամ բառերի կապակցման հատուկ եղանակներով (կրկնություն, ֆերականական ձևերի փոփոխություն կամ ոչ սովորական գործածություն, իմաստով պայմանավորված ֆերականական շեղումներ), կաշվում են բանադարձումներ:

Դարձույթներն են՝ համեմատությունը, փոխաբերությունը, փոխանունությունը, համըմբոնումը, անձնավորումը, չափազանցությունը, նվազաբերությունը, շրջասույթը, այլաբանությունը և այլն:

Բանադարձումներն են՝ կրկնությունը, աստիճանավորումը, զեղչումը, ավելադրությունը, հակադրությունը, ճարտասանական հարցը, հեզնանքը, պարադոքսը, անշաղկապությունը, շրջադասությունը և այլն:

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

Համեմատությունը մի առաքելայի կամ երևույթի նմանեցումն է մի ուրիշին՝ նրանց համար ընդհանուր հատկությամբ նման վրա:

Համեմատությունը սովորաբար կատարվում է նման, պես, ինչպես, այլև խոսակցական-բարբառային զերթ, հանց, ոնց և բառերի օգնությամբ: Համեմատությունները շատ են օգտագործվում հատկապես գեղարվեստական խոսքի մեջ: Դիպուկ են այն համեմատությունները, որոնք անժանոթ կամ քիչ ծանոթ երևույթները ներկայացնում են նրանց նման, բայց լավ ծանոթ երևույթների միջոցով: Մեծ տպավորություն են գործում անսպասելի, բայց տեղին համեմատությունները:

Առաջադրանք 21. Որոշել համեմատությունների ոճական դերը: Ցույց տալ, թե ինչպիսի միջոցներով են արտահայտված դրանք:

I. Արշալույսների նման շքեղ և շուշանների նման մաքուր նրանց մարմինները բուրում են անուշ յուղերով և կնդրուկներով: Գիշերների պես սեւաթույր են և արևի պես ոսկի են նրանց մազերը: Ինչպես հազարան բլբուլները Ջինմաչինի արքայական վարդարաններում, այնպես երգում են փերինները կարոտի և անուրջների երգերից: Ջմրուխտե ու հակինթե գավերի մեջ եռում է գինին երիտասարդ գինվորի բորբոքուն արյան պես:

(Ավ. Իսահակյան)

II. Երբ նայում եմ ծաղիկներին,
Քնքշանում եմ ծաղկի նման,
Երբ նայում եմ վեր՝ աստղերին,
Բարձրանում եմ աստղի նման,
Երբ նայում եմ ծաղկած հողին,
Խոնարհվում եմ մայր հողի պես,
Ժպտում անգամ իմ ոսոխին,
Միրտս կուգեմ պոկել, տալ քեզ,
Միրտս՝ հողի մի ծաղկի պես...

(Հ. Շիրազ)

III. 1. Յորենի ալիքները, կարծես խրտնելով, ոսկեգեղմ ոչ-խարեների պես, փախչում էին արտի մի ծայրից մյուսը: 2. Ավագյանը ծառի վրա թառած ուրուրի պես ատելությամբ նայում էր կոլխոզային դաշտերին: 3. Նա լցվում է պարծանքի զգացումով, նման այն երիտասարդ բանաստեղծին, որի ոտանավորի մասին խոսում են աղջիկները: 4. Մացակ Ավագյանը միաժամանակ ուրախ տրամադրության մեջ էր՝ զգալով ինչ-որ մի խանդաղատանք դեպի ազնիվ և միամիտ մեղրածորեցին: Այդպիսի զգացմունք է տածում ավազակը դեպի իր հարուստ ուղեկիցը, որին ամայի տեղ հասնելուց հետո մտադիր է սպանել ու կողոպտել նրա հարստությունը: (Ն. Զարյան)

ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Փոխաբերությունը այն դարձույթն է, որի դեպքում առարկաների կամ երևույթների նմանեցման հիման վրա մի բառի կամ արտահայտության փոխարեն օգտագործվում է մի այլ բառ կամ արտահայտություն:

Փոխաբերության հիմքում ընկած է համեմատությունը. փոխաբերությունը փաստորեն կրճատ համեմատություն է՝ առանց համեմատության կողմերից մեկի մատնանշման և առանց նման, պես, ինչպես բառերի օգտագործման: Այսպես, օրինակ, ծովի ծիծաղը արտահայտության մեջ ծովը նմանեցվում է մարդուն. մարդու ծիծաղելու ժամանակ նրա աչքերը փայլում են, և դեմքը կարծես լուսավորվում է. արևոտ օրերին ծովը փայլում է և լուսավորվում՝ հիշեցնելով մարդուն՝ նրա ուրախ տրամադրության ժամանակ:

Առաջադրանք 22. Գտնել փոխաբերությունները, նշել, թե ինչի վրա են դրանք հիմնված:

I. 1. Հալվեց գիշերը լճի հայելում (Գ. Սարյան): 2. Դու դեռ մի օր էլ չկա, որ եկել ես, արդեն հասկանում ես, թե ում բանալին որի կողպեքում է (Ն. Զարյան): 3. Մեր տան աղբյուրն է մայրս, մեր հացն ու ջուրն է մայրս, մեր տան ծառան է մայրս, մեր տան արքան է մայրս (Զ. Շիրազ): 4. Հայոց նախարարներին մի հավատարիմ ականջ է հարկավոր ունե-

նալ Տիգրանում: 5. Բազմության միջից մեկի ձայնը պատռեց
թանձրացած օդը: 6. Հազկերտի խոսքերը բոցի ցուքումներով
նետվեցին դեպի պալատականները, և սրահը հրդեհվեց:
7. Երեկոն բացեց իր սև թավիշները: 8. Նա զգաց, որ պետու-
թյան անիվը դուրս թռավ սոնուց և կատաղի թափով գնում
է դեպի անդունդը: Շատ գիրթ շրջվեց պետության կառքը
ուրանում: (Դ. Դեմիրճյան)

11. Քամին քշում է ամպերի մետաքս
Առագաստները...

Արևն իր ոսկե հովհարն է բացում

Երկնքի կապույտ երեսի վրա...

Միծեռնակները՝ կտցած արևի

Շողերը մեկ-մեկ ներքև են բերում,

Նվիրում խռով սիրահարներին,

Հաշտություն ցրում:

Աչքերն են բացում բողբոջ ու մանուկ՝

Արևածագի խնդացումն ավետող.

Մեծ առավոտ է իմ Հայաստանում

Գիշերից հետո:

(Հր. Հովհաննիսյան)

Իրիկվա հովն է հորովել երգում,

Նոր բացվող ցել է գիշերը, կարծես,—

Լուսինն ամպերի խոպանն է հերկում՝

Խրվելով ամպը ոսկե խոփի պես:

Եվ ծովանում է ցելը գիշերվա

Սև ակոսներով սև ծով ամպերի,

Եվ մեկը, կարծես, հույսով իմ վաղվա

Լուռ սերմանում է հերկը խավարի:

Նա հոծ աստղերն է մթնում սերմանում,

Ամեն աստղ՝ ոսկե հունդ է ցորենի,

Մթնավախ սրտիս հոգսն է արթնանում,

Թե ցանքսը մեկեն յոթը կծնի...

Քայց մեկ է ծնում հազարն էլ հսկա,
Մեկ է ծնունդը անսահման ցանքսի,
Քանզի արևն է իր հունձքը ոսկյա՝
Այսպիսի ծով հունձ ո՞վ չի երազի:

(Է. Շիրազ)

ՓՈԽԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Փոխանունությունը այն դարձույթն է, որի դեպքում իրար
փետ կապված առարկաների կամ երևույթների անվանումներից
մեկի փոխարեն օգտագործվում է մի ուրիշը:

Փոխանունությունը հանդես է գալիս բազմազան տեսակ-
ներով. իրար փոխարեն կարող են օգտագործվել պարունա-
կողի և պարունակելիի, պատճառի և հետևանքի, գործողի և
գործի անունները: Այսպես, երբ ասում են «Մի թաս խմեց»,
հասկանում են թասի պարունակությունը. երբ ասում են
«Ծրկիրը մեզ սնում է», համկանում են, որ մեր սնունդը երկրի
տված բերքն է և այլն:

Առաջադրանք 23. Ցույց տալ, թե ինչի վրա է հիմնված
փոխանունությունը հետևյալ նախադասություններում:

1. 1. Իսկ սարի սովոր սգավոր նանը սևեր կհագնի, կնստի
տանը (Է. Քումանյան): 2. Արճնով խոցված պառկած են հո-
ղոմ: 3. Գեղը կանգնի գերան կկոտրի: 4. Լսարանն աղմկում
էր: 5. Չնխոսլովակիան ծափահարում է: 6. Հայաստանը շատ
է տառապել օտար բռնակալների լծի տակ:

II. Ամեն մի տոնի, զգացմունքով վառ,

Ծրկու գինու գավ խփվում են իրար.

Հայաստանը մեր գինով փրփրուն

Աշտարակն է իր ձեռքին երկարում.

Իսկ Վրաստանը իբրև գավ լեցուն,

Կախեթն է ահա իր ձեռքը վերցնում:

Այսպես խփվում են բաժակներ երկու,

Ծրկու եղբայրներ կենաց մեկ մեկու:

Ձայնում են քեզ քույրերի պես
Թբիլիսին ու Բաքուն:
Հեովից ժպտում է քեզ հանդարտ
Քաղաքների մայր Մոսկվան.
Մեր լուսավարդ քանդակազարդ
Ու միշտ զվարթ երևան:
(Գ. Սարյան).

III. 1. Եվ ողջ Սյունյաց աշխարհը իրար անցավ: 2. Մարտիրոսը, զամբյուղից հանելով ձկները, ընտրում էր.— Արաքս է, մենակ խորվիրապ:— Մեծամոր է, Արաքս չէ: Արաքսը բեր: 3. Սուր շեփորը զարթեցրեց քնած զորաբանակը: 4. — Դե որ իլիկ մանող չեք, վճիռը դրեք, վեր կացեք,— ասաց Առաքելը: (Դ. Դեմիրճյան)

ՀԱՄԱՐՄԱՐՈՒՄ

Համըմբռնումը փոխանունության այն տեսակն է, որի հիմքում ընկած է ֆանակային կամ ծավալային որևէ հաճախություն:

Համըմբռնումը ամբողջի անվան փոխարինումն է մասի անվամբ, հոգնակիի փոխարեն եզակիի, հասարակ անվան փոխարեն հատուկի և հատուկի փոխարեն հասարակի գործածությունը: Այսպես, «Ֆրանսիացին մտավ Մոսկվա» (փոխանակ՝ «Ֆրանսիացիները մտան Մոսկվա»), «Հինգ գլուխ» (փոխանակ՝ «Հինգ անասուն») արտահայտությունների մեջ եզակին գործածված է հոգնակիի, մասի անունը՝ ամբողջի անվան փոխարեն:

Առաջադրանք 24. Կազմել նախադասություններ, որոնցում լինեն համըմբռնման օրինակներ:

ԱՆՁՆԱՎՈՐՈՒՄ

Անձնավորումը այն դարձույթն է, որի դեպքում անշունչ առարկաներին և կենդանիներին վերագրում են մարդկային հատկություններ:

Անձնավորումը սերտորեն կապված է փոխաբերության հետ, և փաստորեն նրա մի դրսևորումն է: «Մովը ծիծաղում է», «Մութը տիրեց երկրին» արտահայտությունների մեջ առկա է փոխաբերություն, որն ուղեկցվում է ծովի, մութի անձնավորությամբ:

Առաջադրանք 25. Ցո՛ւյց տալ, թե անձնավորման ժամանակ ինչ հատկանիշներ են օգտագործված:

Չկնիկն առվին խուտուտ տվեց,
Ծվ առուն պարզ ու անբիծ
Քրքջալով ուշաթափվեց
Ու ձորն ընկավ քարափից...
Զարկվեց քարին, ուշքի եկավ,
Շուրջը նայեց կասկածով
Ծվ մի կապույտ ժպիտ շուրթին՝
Համաժա ընկավ դեպի ծով:
(Հ. Սանյան)

Որոտացին ամպերը թուխ,
Հեկեկացին ու լաց եղան:
Հեկեկոցից այդ սրտաբուխ
Անձրև տեղաց ու լո՛ւյս տեղաց:

Այգիներով անձրևն անցավ,
Անցավ դաշտով, անցավ հանդով
Ծվ ուր գնաց, որտեղ եղավ՝
Զուգեց լույսով, ադամանդով:

Ավիշ տվեց ծիլ ու տունկին,
Առուներին՝ կարկաշ ու ձայն,
Մաղկին՝ երանգ ու երկնքին՝
Կարմիր-կապույտ մի ծիածան:

Իսկ ինքը դեռ շողում հստակ,
Հազնը գույնի ցոլք է տալիս,
Պահանում է արևի տակ
Ու ժպտո՛ւմ է մահանալիս...
(Վ. Դավթյան)

ՉԱՓԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ

Չափազանցությունը այն դարձույթն է, որի դեպքում հատկությունը ներկայացվում է ծայրահեղության հասցված չափերով:

Հ. Թումանյանի «Ծով են աչքերը Ջավախքի դստեր, և կորչում է մարդ նրա հայացքում» նախադասության մեջ աղջրկա հայացքի խորությունը ներկայացված է չափազանցությամբ:

Առաջադրանք 26. Ղ. Աղայանի «Տորք Անգեղ» պոեմից: դո՛ւրս գրել չափազանցությունները:

ՆՎԱԶԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Նվազաբերությունը չափազանցության հակառակ երևույթն է, երբ իրական վիճակը մեղմացվում է, չափը նվազեցվում: Այսպես, երբ մեռնող մարդն ասում է, որ ինքն այնքան էլ լավ չէ, իր վիճակը մեղմացնում է, դիմում նվազաբերությանը:

Նվազաբերությունը այն դարձույթն է, որի դեպքում, երբև՛իցս ներկայացվում է մեղմացված ձևով, նվազեցված չափերով:

ԾՐՋԱՍՈՒՅԹ

Շրջասույթը այն դարձույթն է, որի դեպքում առարկայի ուղղակի անվանումը փոխարինվում է նկարագրական արտահայտությամբ:

Շրջասույթը փաստորեն փոխանունության մի տեսակն է: Առարկան այս դեպքում ներկայացվում է այդ առարկայի որևէ հատկանիշը նկատի ունեցող բնորոշումով, նկարագրական եղանակով: Այսպես, Հովհերոս անվան փոխարեն կարող է գործածվել «Տրոյայի պատերազմի երգիչ» արտահայտությունը, «Խաչատուր Աբովյանը» ասելու փոխարեն կարելի է ասել «Հայ նոր գրականության հիմնադիրը» և այլն:

Առաջադրանք 27. Գտնել շրջասույթները և բացատրել:

Իսկ մենք՝ ես ու դու... արվեստ ենք խաղում,
Եվ... մի այնպիսի համոզվածությամբ,
Որ Սերվանտեսի հերոսն էլ չուներ...

Ուշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած,
Մնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտոհմ չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված՝
Մերում են նրանք և այն վայրենուց,
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:

Մերում են նրանք և ա՛յն ժերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում,
Մերում են նրանք և ա՛յն պատանուց,
Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:

Մերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թե անե՛ն մտածածն իրենց,
Ի՛նչ փույթ թե մեռնեն ժամանակից շուտ:

(Պ. Սևակ)

Առաջադրանք 28. Կազմել շրջասույթներ, նրանցով փոխարինելով ա) գրողների, նկարիչների, գիտնականների անուններ, բ) կենդանիների անուններ:

ԱՅԼԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այլաբանությունը փոխաբերությունների մի շարք է, որտեղ երևույթը ներկայացվում է բոլորովին այլ գործողների միջոցով:

Այլաբանությունը բնորոշ է հատկապես առականերին, որոնց մեջ մարդկանց փոխարեն այլաբանորեն կարող են հանդես գալ կենդանիները, բույսերը և այլն:

Առաջադրանք 29. Կարդալ մի քանի առականեր և ցույց տալ նրանցում օգտագործված այլաբանությունները:

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Կրկնությունը այն բանադարձումն է, որի դեպքում միևնույն բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը ասվում է երկու կամ ավելի անգամ՝ խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու, նրա հուզականությունն ուժեղացնելու նպատակով:

Բառակրկնությունները կարող են լինել մի քանի տեսակ՝ ըստ այն բանի, թե կրկնվող բառը կամ բառերը խոսքի, նախադասության, ոտանավորի տողի մեջ ի՞նչ դիրք են գրավում: Նույնասկիզբը բառի կրկնությունն է նախադասությունների կամ տողերի սկզբում, նույնավերջը՝ վերջում, հանգույցը՝ միաժամանակ և՛ սկզբում, և՛ վերջում. կցուրդը բանաստեղծության տողի վերջին բառի կամ բառերի կրկնությունն է նախորդի սկզբում:

Կրկնության դրսևորում պետք է համարել նաև զուգահեռությունը՝ շարահյուսական կառուցվածքի կրկնությունը: Սրա հակառակն է խաչաձևումը, որի դեպքում կառուցվածքը շրջվում է:

Գեղարվեստական և հատկապես բանաստեղծական խոսքում կատարվող նպատակադիր կրկնությունները պետք է տարբերել այն կրկնություններից, որոնք հետևանք են գրողի կամ խոսողի անփութության: Այս դեպքում գրողը կամ խոսողը պարզապես չեն գտնում արտահայտության տարբեր միջոցներ: Նման կրկնությունները խոսքը դարձնում են միօրինակ, այն զրկում աշխուժությունից ու կենդանությունից, խախտում ոճի բազմազանության պահանջը:

Առաջադրանք 30. Ստորև բերվող հատվածներում գտնել բառակրկնությունները և որոշել, թե ինչ բանադարձումների օրինակներ են դրանք: Որոշել նրանց ոճական-արտահայտչական դերը:

I. Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը.
 Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
 Պայտերը խփում են, խփում են հողին.—
 Անծա՛յր է գիշերը, անհա՛յտ է ուղին:
 Գնո՛ւմ են, գնո՛ւմ են, գնո՛ւմ են ձիերը,
 Մոտիկ են, հեռու են, դոփում են պայտերը,
 Պայտերը դոփում են քունքի՛ս մեջ հիմա.—
 Անհա՛յտ է աշխարհը՝ անցնում է ու մահ...
 (Ե. Չարեճց)

II. Անհույս իմ տան հույս ձեռքեր,
 Մրոտ ձեռքեր՝ կույս ձեռքեր,
 Մեր օջախը վառ պահող
 Մորս ձեռքերը, լույս ձեռքերը:
 Մեր տան բախտը ջաղացքար՝
 Դուք ջաղացի ջուր ձեռքեր,
 Մեր խրճիթը սուրբ տաճար՝
 Դուք խունկ ու մոմ, հուր ձեռքեր:
 Ժս կորած եմ առանց ձեզ,
 Ավուր հացիս բույր ձեռքեր:
 Մեր տան վազան աղբյուրներ,
 Մշտածարավ, ծոմ ձեռքեր:
 Մանկությունից մինչև այսօր
 Մութ ճամփեքիս լույս ձեռքեր,
 Ինձ մի թողեք վիրավոր՝
 Աստվածամոր կույս ձեռքեր: (Հ. Շիրազ)

III. 1. Բայց միաժամ հիշեց Հազկերտին: Վերակենդանացավ նրա նախանձափրփուր կերպարանքը, նրա օձական հայացքը, նրա վիշապաձայն գոչը՝ Հայաստանի բնաջնջման: 2. Այս հավատից չեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, ո՛չ սուր: 3. Այդ հավատը չի կարելի քանդել և հեռու նետել ո՛չ այժմ և ո՛չ ապա, և ո՛չ հավիտյան, և ո՛չ հավիտենից հավիտյանս: 4. Արշակը լիովին աչքեր էր դառել, որ մղկտացնում էր նայողին: Արշակը պետք է մեռնեիր, Արշակը պիտի մնար այս շարագութ, աճսիրտ օտարության մեջ: 5. Թերևս իշխանները չգիտեն, որ նա հետ է մնա-

ցել, թերևս գիտեն և չեն կարողանում կապվել հետը, որոնել նրան: Թերևս անտարբեր են: Թերևս իրենք ոչնչանում են: 6. Զխոսեցին: Արշակը իր խոր աչքերը դարձրեց Գարեգինին և աղաչական նայեց նրան: Գարեգինը ևս նայեց նրան: Այլևս անհնար էր նայել: (Դ. Դեմիրճյան)

IV. Ինձ ասում են ինչո՞ւ անվերջ գլխակոր ես, պոետ,
Այնինչ երգով ու ամենքից բախտավոր ես, պոետ,
Ինչո՞ւ դու մերթ մանկաժպիտ, մերթ արցունք ես թվում,
Մերթ ծովանդունդ մարգարիտ ես, մերթ փրփուր ես ծովում,
Մերթ ճակատդ կնճոված է, ինչպես վանքի խաչքար,
Մերթ բարձունք ես մշտաձյունի, մերթ անդնդից էլ վար,
Մերթ զեփյուռ ես դու սիրաշունչ՝ նուրբ էօլյան տավիղ,
Մերթ հովիկ ես, մերթ փոթորիկ, մրրիկ մթնաբավիղ.
Մերթ կակաչի կուրծքն ես կարմիր, մերթ սևանդունդ սիրտ,
Մերթ քնքուշ ես մանուշակից, մերթ իր փշից բիրտ...
(Հ. Շիրազ)

V. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ:
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրոտմ
Սեփական հոգին խորովել չկա,
Ախր ուրիշ տեղ
Սեփական բախտից խռովել չկա...
(Հ. Սաճյան)

VI. Երբ իմ տունը կըգաք դուք, ու տանը չեմ լինի ես,
Դռները բաց կըգտնեք, երբ իմ տունը կըգաք դուք,
Ու լույսը վառ կլինի, վարագույրները բեհեզ
Բաց կըլինեն ձեր առաջ, երբ տանը չեմ լինի ես:
(Գ. Սարյան)

VII. Հարուն ալ-Ռաշիդի ժամանակները Բաղդատ քաղաքում կար մի մարդ, որի անունը Սինդիբատ-բեռնակիր էր: Եվ դա աղքատ մի մարդ էր ու վարձով բեռներ էր կրում գրել-

խին դրած: Եվ այնպես պատահեց, որ մի օր էլ ժանր բեռ էր տանում: Նա, իսկ այդ օրը սաստիկ շոգ էր: Եվ ուժասպառ եղավ Սինդիբադը ծանր բեռան տակ ու քրտնեց, և տոթն ուժեղացավ նրա շուրջը: Եվ անցնում էր Սինդիբադը մի վաճառականի տան մոտով, որի առաջ ավլած էր ու ջրջնած, և օդն այդտեղ խաղաղ էր ու դարբասի կողքին մի լայն նստարան էր դրված: («Սինդիբադ-ծովագնացի հեփիաթը»)

VIII. Մանուշակներ ոտքերիս, ու շուշաններ՝ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս,
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,—
Ու քայլեցի խայտալուով ու շաղ տալով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նրբաբույր...
(Հ. Շիրազ)

Առաջադրանք 31. Յո՛ւյց տալ, թե բառակրկնությունից բացի ի՞նչ հավելյալ երևույթներ կան հետևյալ օրինակներում: Ուղղակի՞, թե փոխաբերաբար են գործածված կրկնվող բառերը և պատճառաբանված են արդյոք կրկնության բոլոր դեպքերը: Գտնել անհարկի կրկնությունները և վերացնել դրանք:

I. Կանգնել եմ կապույտ ամայության մեջ
Ես մեն ու մենակ... Եվ կապո՛ւյտ-կապո՛ւյտ
Մոլորակներ են բախվում ճակատիս:
Կապույտ հողմերը զայրույթով կապույտ
Իմ կրծքի վրա բախվում են իրար
Եվ բաժանվում են կապույտ սուլոցով
Եվ չքվում կապույտ ամայության մեջ:
Կապույտ սուլոցով սաստում եմ կապույտ
Սարսուռը սրտիս... բայց միևնույն է,
Բարձրության կապույտ սարսուռների մեջ
Մի կապո՛ւյտ-կապո՛ւյտ գլխապտույտից
Օրորվում եմ ես...

Գարունդ հայերեն է գալիս,
Զյուներդ հայերեն են լալիս,
Հայերեն են հորդում ջրերդ:

Հավքերդ երգում են հայերեն,
Խոփերդ հերկում են հայերեն,
Հայերեն են տոկում գրերդ:

Արևդ հայերեն է ծագում,
Ծառերդ հայերեն են ծաղկում,
Հայերեն են պայթում բառերդ...

Ուր որ նայում եմ, քարե բարձունք է,
Քարե արցունք է, քարե ժպիտ.
Քարե սարսուռ է ու քարե սունկ է,
Քարե ծաղկունքի քնքշանք է բիրտ...
(Հ. Սանյան)

II. 1. Այդ ուրախ ու տարօրինակ ցուցանակի տակ, ծղոտե աթոռին նստել էր մի տխուր մարդ, տխուր գիրովթյամբ, տխուր աչքերով և տխուր ուսերով (Ա. Իսահակյան): 2. Պառկեց քնելու, բայց երկար ժամանակ քունը չտարավ, և նա կրկին դուրս եկավ և սկսեց ման գալ մենակ ու երջանիկ: Միհրնեսին հըլսեց լուռ և հոգնած դեմք շինելով և շարտահայտելով ոչինչ ավելի (Դ. Դեմիրճյան): 3. Մի այլ ընթերցող իր խորհրդածություններում վերլուծում է ականատեսի իր տպավորությունները (մամուլից):

Առաջադրանք 32. Հ. Թումանյանի «Անուշ» և «Սասունցի Դավիթ» պոեմներից դուրս գրել բառակրկնության վրա հիմնված բանադարձումների օրինակներ:

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄ

Աստիճանավորումը այն բանադարձումն է, որի դեպքում իրար են հաջորդում իմաստով մեծավոր բառեր՝ իմաստի աստիճանական ուժեղացմամբ:

Ի տարբերություն կրկնության, որտեղ հուզականությունն ու արտահայտչականությունը ձեռք են բերվում միևնույն բաների, բառամասերի, բառակապակցությունների կրկնությամբ, աստիճանավորման դեպքում իրար են հաջորդում համանիշ բառերը. ոչ թե բառերն են կրկնվում, այլ տարբեր բառերի միջոցով արտահայտվող մերձավոր իմաստները՝ սկզբնական իմաստի աստիճանական ուժեղացմամբ:

Առաջադրանք 33. Ցոլյց տալ աստիճանավորում կազմող բառերը, որոշել նրանց իմաստային ներություններն ու աստիճանավորման արտահայտչական դերը:

1. Այդ ջրհեղեղը, աղետը, սարսափը գալիս էր անվերադարձության ծանրությամբ, ճնշում, ոչնչացնում էր մարդկային կամքը, հոգին: 2. — Կողոպտեցի՞ի՜ն, մերկացրի՜ն, կլպեցին Դենշապուհի հարկահանները: 3. Երկինք-գետին դառավ միազանգված մի քառս, որի մեջ սանձակոտոր քամին զարկում էր, ծեծկում, ցնցահարում, գզգզում: 4. Բա մենք քա՛ր ենք, ծե՛ռ ենք, հո՛ղ ենք: 5. Ավերն ու ավարը պիտի անցնեն մեր երկրի մի ծայրից մյուսը, ինչպես ժանտախտ, ինչպես մորիկ, ինչպես երկրաշարժ: 6. Այդ անարվեստ, բայց ոգելից, ոգեխառն ցասումնալի կոփվր խժռում էր ամեն ինչ: 7. Սև հագիր, սուգ մտի՛ր, ռզբա, սառը ջուր ածիր գերեզմանին, սիրտդ պաղեցրու: 8. ...և կոկորդալի՛ր քրքիջով լցնել սրահը, ամրոցը, ողջ հայոց աշխարհը, այդ անիծյալ Երանը: (Դ. Դեմիրճյան)

ԶԵՂՉՈՒՄ

Զեղչումը նախադասության այնպիսի բառերի բացթողումն է, որոնք հեշտությամբ հասկացվում են ընդհանուր իմաստից:

Զեղչումը սովորաբար բխում է սեղմության անհրաժեշտությունից՝ ինքնին հասկանալի բառերը ավելորդ կերպով չկրկնելու պահանջից: Սակայն կան դեպքեր, երբ զեղչումը գործադրվում է հատուկ նպատակով՝ հույզ առաջացնելու, երևակայության վրա ազդելու համար. մտքերի լրացումը թողնվում է ունկնդրին կամ ընթերցողին, որն է բան դիտումնավոր կերպով լռության է մատնվում: Օրինակ՝ Այո՛, Հակոբյանն ի՞ր խոստումը կատարեց, իսկ Գրիգորյա՛նը:

ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ավելադրությունը այն բանադարձումն է, որի դեպքում գործածվում են արտաֆնապես ավելորդ բառեր և արտահայտություններ՝ արդեն ասվածը ուժեղացնելու նպատակով:

Ավելադրությունը զեղչման հակառակ երևույթն է. եթե զեղչման դեպքում բառերը բաց են թողնվում որպես ինքնին հասկանալի, ապա այդ դեպքում ավելացվում են բառեր՝ արտահայտված միտքը ուժեղացնելու համար: Այսպես, օրինակ՝ «Սա այդ բոլորը տեսա իմ աչքերով և լսեցի իմ ականջներով» նախադասության մեջ իմ աչքերով և իմ ականջներով բառերը գործածված են ավելադրությամբ:

ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հակադրությունը այն բանադարձումն է, որի դեպքում իրար մոտ հանդես են գալիս հակադիր իմաստ ունեցող բառեր և արտահայտություններ:

Հակադրությունը հաճախակի է հանդես գալիս գեղարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ՝ ուժեղացնելով հակադրվող երևույթների, առարկաների, հատկությունների ընկալումը: «Պատերազմ և խաղաղություն», «Կարմիր և սև» վերնագրերը դրված են հակադրությամբ:

Առաջադրանք 44. Գտնել հակադրությամբ կազմված արտահայտությունները, որոշել, թե ինչ բանադարձման օրինակներ են դրանք:

1. Դու հողածին, դու և աստված,
Դու և հաղթող, դու և պարտված:
Դու անտակ վիհ, դու և բարձունք,
Դու և ժպիտ, դու և արցունք...
Դու տնակյաց ու թափառիկ,
Գու և կրակ, դու և ծաղիկ,
Խեղճ ու կրակ և անառիկ,
Դու բնություն անքննելի
Նվ բնության մի պատառիկ.

Դու հնություն հնամենի

Ու դեռ գալիք...

(Պ. Սեալ)

Կաթանները ճշում են այնտեղ,

Ջրվեժները լռում են:

Ծաղիկները թռչում են այնտեղ,

Թիթեռները բուրում են:

Սավերները խեղդվում են շոգից,

Բարդինները մրսում են...

Մեր տանը՝ մեռածներն են, հոգիս,

Ապրողները դրսում են:

(Հ. Սաճյան)

II. Ա՛խ, այս Մասիսը,

Որից փափկո՛ւմ են սրտերը բոլոր,

Երբ ինքը... քա՛ր է.

Որ ջերմացնո՛ւմ է սրտերը մոլոր,

Երբ ինքը... սա՛ռն է.

Որ աշխարհներից հեռավոր-հեռու

Բոլոր հայերին այստեղ է բերում,

Երբ ինքն... այստեղ չէ՛:

Միաբանության քարոզ է կարդում

Աշխարհում ցրված հայերին անտուն,

Երբ որ կիսվա՛ծ է.

Որ, մեծ սիրո պես,

Ոչ հեռանո՛ւմ է,

Ոչ էլ գալի՛ս է...

Ա՛խ, այս Մասիսը:

(Գ. Էմին)

III. Օ, գարնա՛ն ամիս, ապրելու ապրիլ,

Դու, որ բերում ես ծաղիկներ ու կյանք,—

Ինչո՞ւ դու դարձար մահվան տարելից,

Մահով մնացիր մեր պատմության մեջ...

Զյուն-սառույցները գարնան Եփրատի
Մեր տաք արյունի ջերմից էր հալչում...
(Ս. Կապուտիկյան)

IV. 1. Տեսա՝ աշխարհը այնքան մեծ, և զգացող արարածը այնքան փոքր, բայց նրա տենչանքն ու տանջանքը աշխարհից մեծ: 2. Նայում է խանր հուրիների շողշողուն մարմիններին: Նայում է, բայց չի տեսնում, տեսնում է, բայց սառած սիրտը չի այեկոծվում (Ավ. Իսահակյան): 3. Պատերը սահում են վեր, խցիկը նետվում է վար (Լ. Միրիջանյան): 4. Ես սիրով կնստեի նրա դիմաց ու կլսեի նրա լուռթյունը: Այդ իմաստությամբ լցված մի խոր լուռթյուն էր, որից ոչ ոք չէր կարող ձանձրանալ (Աբ. Ավագյան): 5. Արագիլը, բական ու բարդին մութի հետ են առնում: 6. Զաղացի հույսն սպիտակ՝ գետակը տարավ ծովին (Հ. Սահյան): 7. Անբացատրելի անուշ լացը հանգստացնում էր Անահիտին: 8. Հանկարծ մի կծու, ապտակ շառաչեց տաղավարի լուռթյան մեջ: 9. Մովսես վանականը հպարտ վշտով նայում էր Եդիշերին և շարունակում էր լսել: 10. Երկրում խաղաղ խռովք էր և շարագուշակ խաղաղություն: 11. Օղասպարի սառը հպումը կոշտ շոյեց նրա ճակատը: 12. — Ծշմարիտ է խաբում,— ասաց Աշուշան: 13. Լուրերը լուռ են, իշխանի՛կ: 14. Մութը սև սաթի պես փայլեց դուրսը: 15. Ո՛վ եղավ պատճառ այս պարտված հաղթության: 16. Նա դիմեց իշխաններին և անկեղծություն կեղծելով խոսեց: 17. Երբ փորձում էր նրանից փախչել, զգում էր նրա կաշկանդիչ թեթև... պողպատը: (Դ. Դեմիրճյան)

Առաջադրանք 35. «Առածանիից» դո՛ւրս գրել մի շարք առածներ, ու ասացվածքներ, որոնք ստեղծված լինեն հակադրության սկզբունքով:

ԾԱՌՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՐՑ

Ճարտասանական հարց է կոչվում հարցական նախադասության օգտագործումը ոչ թե պատասխան ստանալու, այլ միտքն ուժեղացնելու, խոսքին անմիջականություն և արտահայտչականություն հաղորդելու համար:

Սովորական հարցը տրվում է այն դեպքում, երբ հարցնողըն ուզում է որևէ բան իմանալ կամ պարզել ունկնդրի կարծիքը: Ճարտասանական հարցի դեպքում խոսողը կամ գրողը պատասխանի չի սպասում, այլ իր միտքն արտահայտում է հարցի ձևով: Ճարտասանական հարցը փաստորեն պարունակում է իր պատասխանը: Երբ մեկն ասում է, «Մինչև ե՞րբ համբերենք այս խնարդարությունը», նա ոչ թե ուզում է պատասխան ստանալ, այլ արտահայտել իր վրդովմունքը, ունկնդիրներին կամ ընթերցողներին գործողության մղել անարդարության դեմ, իր վրդովմունքը փոխանցել նրանց: Ճարտասանական հարցը խոսքին արտահայտչականություն է հաղորդում մենախոսությանը տալով երկխոսության ձև:

Առաջադրանք 36. Դիտել հոետորական հարցի արտահայտչական դերը հետևյալ օրինակներում:

Շատ եմ տեսել, երբ սըգվոր
Մայրը մենակ, սևաշոր,
Կորանալով էն քարին՝
Ձեն է տալիս Մարոյին...
— Ո՞վ քեզ ծեծեց, Մարո՛ ջա՛ն,
Ո՞վ անիծեց, Մարո՛ ջա՛ն,
Ո՞ւր փախար դու, Մարո՛ ջա՛ն,
Տուն արի՛, տո՛ւն, Մարո՛ ջա՛ն,
Խո՞ր ես քընել, Մարո՛ ջա՛ն,
Ձե՛ս զարթնում էլ, Մարո՛ ջա՛ն...

Քեկուզ և մենակ լինի փարախում
Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում:

Սրընթաց պախրա՞, թե գայլ գիշատիչ
Շեշտակի անցավ փարախի մոտով,
Այծյա՞մը հանկարծ մոտակա ժայռի՞
Անդունդը մի քար գլորեց ոտով,
Գիշերվան հովից տերև՞ն էր դողում,
Երկշոտ մուկի՞կը վազեց պուճախում,

Թե՞ ոչխարների թույլ մընչոցն էր այն,—
Սաքոյին թըվաց, թե մի ոտնաձայն
նկավ ու կանգնեց փարախի վըրա...

էսպես է ասել հընուց էդ մասին
Ֆարսի բյուբյուլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին,
Թե չըլինին
Կինն ու գինին:

Արևի նման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպես սար,
Ո՞վ կանի նրան գետնին հավասար,
Թե չըլինին
Կինն ու գինին:

— էն մըթին ամպից արծի՞վն է իջնում,
Սարի արծիվը շեշտակի թափով:
— էն Թըմկա բերդից Թաթուլն է իջնում,
Թըշնամու հոգին լըցնում սարսափով:

— էն Թըմկա ձորում սև ա՞մպն է գոռում,
էն շա՞նթն է ճայթում էնպես ահարկու:
— էն Թըմկա ձորում Թաթուլն է կըռվում,
էն թուրն է շաշում էնպես ահարկու:

Ի՞նչ սարի արծիվ կըհասնի քաջին,
Ի՞նչ շահ կըկանգնի նըրա առաջին:
(Հ. Թումանյան)

ՀԵԳՆԱՆՔ

Հեգնանքը բառերի կամ առտաճայտությունների օգտագործումն է հակառակ իմաստով:

Հեգնանքի դեպքում բառերի իմաստը փաստորեն որոշվում է խոսողի գործածած հնչերանգով: Հեգնողը ասում է խելոք և հասկանում է հիմար, ասում է բարի և հասկանում է շար:

ՊԱՐԱԴՈՔՍ

Պարադոքսը արտաֆնապես կամ ներֆնապես նախասական, ընդհանրապես տարօրինակ և անսովոր արտահայտությունն է:

Պարադոքսը գրավում է ունկնդիրների կամ ընթերցողների ուշադրությունը նրանով, որ առաջին հայացքից տարօրինակ է թվում, բայց ավելի լավ քննելու դեպքում հանդես է բերում թաքնված ճշմարտություն կամ, ընդհակառակն, արտաքնապես ճիշտ է թվում, բայց ներքնապես պարունակում է հակասություն: Պարադոքսային են, օրինակ, «Դանդաղ գնաս, շատ կգնաս» առածը կամ կղզիներից մեկի այն բնակչի պընդումը, թե այդ կղզու բոլոր բնակիչները ստախոս են (եթե բոլորը ստախոս են, ապա ինքն էլ ճիշտ չի ասում):

Առաջադրանք 37. 2. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վիպակից գտնել հեղինակը և պարադոքս պարունակող հատվածներ:

ԱՆՇԱՂԿԱՊՈՒԹՅՈՒՆ

Անշաղկապությունը այն բանադարձումն է, որի դեպքում շաղկապներ և շաղկապական բառեր չեն գործածվում, այլ մտքով նասկացվում են:

Անշաղկապությունը հատուկ է խոսակցական լեզվին և գեղարվեստական գրականության մեջ օգտագործվում է խոսքին աշխուժություն տալու, այն հուզական դարձնելու, արտահայտչականությունն ավելացնելու և սառը դատողականությունը նվազեցնելու նպատակով:

ՇՐՋԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շրջադասությունը նախադասության կամ բառակապակցության անդամների շարադասության սովորական կարգի փոփոխությունն է:

Շրջադասությունն արտաքնապես արտահայտվում է նրանով, որ նախադասության անդամների տեղերը փոխվում են,

Քրար հետ կապված բառերը հեռացվում, նախադասության մի անդամը իր սովորական տեղից շարժվում է մի այլ տեղ՝ սկզբից վերջը կամ ընդհակառակն: Շրջադասությունը սովորական է բանաստեղծությունների մեջ՝ կապված արտահայտչականության ուժեղացման պահանջի, չափի կամ հանգի հետ, բայց հանդիպում է նաև այլ դեպքերում՝ միտքն ընդգծելու, խոսքի հանդիսավորությունն ուժեղացնելու, այս կամ այն բառի իմաստը շեշտելու նպատակով:

Առաջադրանք 38. Ցո՛ւյց տալ շրջադասության դրսևորումները, որոշել նրանց արտահայտչական դերը:

I. Որպես քուրմը Գանգեսի,
Կարոտակեզ, սիրակեզ—
Կյանքս տվե՛լ եմ լույսիդ
Եվ երգում եմ քեզ:
Քե՛զ եմ երգում այս կարմիր
Աշխարհում հիմա,—
Քե՛զ եմ երգում, քա՛ղցր քույր,
Խելագա՛ր, Սո՛մա:

Նետե՛լ է երկաթե մի ձեռք
Դեպի վեր ոսկի մի ծնծղա.
Բռնկվել է ոսկի ծնծղան,
Դարձել է արնածոր մի վերք:
Վառվել է երկնքում հակինթ
Ու ծորում է արյունը յուր կեզ,—
Զոհվե՛լ է երկնքում վճիտ.—
Ինչքան լա՛վ է հատնումը հրկեզ...
(Ե. Չառենց)

II. Այս գավուվ էլ եկեք հարգենք
Եվ անթառամ հիշատակը
Կամար-կամուրջ քաշողների,
Սյուն ու խաչքար տաշողների,
Սանդ ու երկանք կտրողների,
Ելք ու ճամփա փնտրողների,

Վանք ու պալատ շինողների...
Ինչպես նաև հիշատակը
Նրանց հիշող հարգողների...

Խմենք կենացն անդավաճան ընկերության
Հնկերների ա՛յն սերության,
Որ մինչև իսկ չի ընդհատվում
Աքսորի մեջ ու գերության:
Հնկե՛ր լինի
Նույն հուզմունքի,
Համոզմունքի՛,
Նույն ճաշակի՛,
Դրոշակի՛,
Ոչ թե ընկեր լոկ բաժակի...
(Պ. Սևակ)

III. Նազում ես ու շորորում զմրուխտի քո շորերում,
Շուք արած ճամփի վրա մանկության կանաչ արտի,
Քո կանաչը զնգում է զիլ իմ սրտի խոր ձորերում,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ նաիրյան կանաչ բարդի:

Ա՛խ, ասես խարույկ լինես՝ բռնկված կանաչ բոցով,
Ես հեռվից քեզ եմ գգվում կարոտով կրակ սրտի.
Լցնում ես դաշտերն ամեն հարազատ քո խշշոցով,
Իմ հեռո՛ւ, հեռո՛ւ, հեռո՛ւ նաիրյան դալար բարդի:
(Հ. Սաճյան)

Առաջադրանք 39. (կրկնություն). Գեղարվեստական երկե-
րից շո՛ւրս գրել զանազան բանադարձումների օրինակներ,
բացատրել դրանց արտահայտչական դերը:

ԲԱՌԱՅԻՆ ՈԾԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՌԱՅԻՆ ՈԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Արդեն ասվել է, որ ամեն մի ոճ բնութագրվում է միևնույն միտքն արտահայտելու համար լեզվում եղած զուգահեռ միջոցների ընտրության տարբերություններով: Այդ միջոցները երկու կարգի են՝ բառային և քերականական: Սրանց ուսումնասիրությամբ զբաղվում են բառային ոճաբանությունը և քերականական ոճաբանությունը:

Բառային ոճաբանությունը ոճաբանության այն բաժինն է, որ ուսումնասիրում է բառերի ոճական հատկությունները:

Բառային ոճաբանությունը քննում է բառերի ոճական շերտերը, պարզում նրանց գործածության պայմանները, որոշում, թե բառային ի՞նչ միջոցներ ունի լեզուն՝ միտքը տվյալ քնազավառին, իրադրությանը և նպատակին ամենից ավելի համապատասխան ձևով արտահայտելու համար: Լեզվի հարստության չափանիշը ոչ միայն բառերի քանակի մեծությունն է, այլև բառային այնպիսի զուգահեռների առկայությունը, որոնց միջոցով մտքերը տարբեր պայմաններում կարելի է արտահայտել տարբեր կերպ, ամենից ավելի նպատակահարմար ձևով:

ՀԱՄԱՆԻԾ ԲԱՌԵՐ

Համանիշ են կոչվում այն բառերը, որոնք իմաստով իրար մոտ են, ձևով՝ տարբեր:

Համանիշները մեծ մասամբ արտահայտում են միևնույն առարկան, երևույթը, հատկությունը, հարաբերությունը, բայց իրարից ունեն ոճական և իմաստային նուրբ տարբերություններ:

Համանիշների տարբերությունը մի դեպքում այն է, որ նրանք պատկանում են գործառական տարբեր ոճերի: Այս առումով պետք է առանձնացնել բառերի երկու շերտ՝ ոճականորեն չեզոք և ոճականորեն տարբերակված: Ոճականո-

րեն չեղոք բառերը կարող են հանդիպել գործառական բոլոր ոճերում, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքում, այսինքն՝ ընդհանուր գործածական են՝ բերել, տանել, գալ, գնալ, ուտել, հաց, ջուր, տուն, ուր, մեջ և այլն: Ոճականորեն տարբերակված բառերը գործածությամբ սահմանափակված են և ոճաբանորեն չեղոք բառերի ու իրար հետ կարող են կազմել հոմանիշների շարքը: Այսպես, ձի-ն ոճականորեն չեղոք է, նժույգ-ը բնորոշ է առավելապես բանաստեղծական խոսքին. կատարել-ը ընդհանուր բնույթ ունի, ի կատար ածել-ը՝ հատուկ է վարչագործարարական ոճին. ման գալ-ը առօրյա-խոսակցական լեզվի բառ է, զբոսնել-ը՝ ընդհանուր գրական, նեմել-ը՝ բարձր ոճի. իսկապես-ը ընդհանուր գրական է, հի-րավի-ն հատուկ է բարձր ոճին, կարող է գործածվել հանդիսավոր խոսքում և այլն և այլն:

Համանիշների երկրորդ տարբերությունն այն է, որ նրանք արտահայտում են երևույթի կամ հատկության դրսևորման տարբեր չափեր. այսպես, հով, ֆամի, փոքորիկ, մրցիկ բառերը ցույց են տալիս օդի շարժման տարբեր արագություններ. գրավիչ, հրապուրիչ, թովիչ, հափշտակիչ համանիշները՝ գրավիչ լինելու տարբեր աստիճաններ:

Համանիշների երրորդ տարբերությունն այն է, որ նրանք կարող են արտահայտել անձնական (սուբյեկտիվ) վերաբերմունքի տարբերություններ և ունենալ հուզաարտահայտչական տարբեր երանգներ: Այսպես, ուտել և խժոել, խմել և լակել, մեռնել և սատկել համանիշ զույգերի երկրորդ անդամները արտահայտում են խոսողի կամ գրողի բացասական վերաբերմունքը:

Կան համանիշների այլ տարբերություններ ևս:

Երբեմն համանիշները կարող են ունենալ միաժամանակ մի քանի տեսակ տարբերություն: Այսպես, ձի և նժույգ բառերը ոչ միայն տարբերվում են ըստ գործառության ոլորտի, այլև ցույց են տալիս միևնույն կենդանու սովորական և ավելի լավ տեսակները:

Բառի ամենից ավելի տեղին գործածությունն այն է, երբ տվյալ նախադասության մեջ և տվյալ խոսքում այն չի կարելի փոխարինել մի ուրիշ բառով՝ առանց իմաստի նրբությունների կորստի:

Միևնույն իմաստն ու գործածութիւնն ունեցող բառերը կոչվում են նույնանիշ. օրինակ՝ պատգման — լուսամուտ:

Առաջադրանք 40. Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարանից» դո՛ւրս գրել հետևյալ բառերի հոմանիշները, աշխատել դրանցով կազմել նախադասութիւններ.

վախկոտ, ուրախ, քիչ, մաքուր, պարզ, շուտ, նայել, միշտ, ասել, հանդիմանել, առարկել, ցույց տալ, ժիծաղել, բախտ, քանաստեղծ, հաղթել:

Առաջադրանք 41. Նշել հոմանիշներից յուրաքանչյուրի ոճական բնույթը.

հոսել — արտահայտվել — ճառել, անտուն — անօթևան — անապաստան, պսպղալ — փայլել — շողալ — ճառագել — ճաճանել, մոտիկ — մերձ — կից — հարակից — առընթեր, անդունդ — վիհ — խորխորատ, կողմնապահութիւն — աչառութիւն — կողմնակալութիւն — խտրականութիւն — ջոկողութիւն, ճարպիկ — աչքաբաց — ժիր, անզուսպ — հանդուգն — ըմբոստ — ապերասան — սանձարձակ, հիանալ — շլանալ — զմայլվել — սքանչանալ — ապշել — բերանը բաց մնալ, արհամարհանք — քամահրանք — արգահատանք, բաժակ — գավաթ — ըմպանակ, բարեկ — ողջունել — բարե տալ — զլուխ տալ — ձեռք սեղմել — պատվի առնել, մեծամիտ — գոռոզ — բարձրամիտ — անբարտաւան — սնապարծ — ինքնահավան, լավ — ընտիր — պատվական, գունատվել — խունանալ — գունաթափվել — գույնը գցել, լսել — ականջ դնել — ունկնդրել, գեղեցիկ — սիրուն — չքնաղ — շնաշխարհիկ, փոքր — մանր — պստիկ — պուճուր, մեռնել — մահանալ — վախճանվել — շունչը փչել — հոգին ավանդել — մահկանացուն կնքել — կյանքի թելը կտրվել, պահեստ — ամբար — շտեմարան — մթերանոց — մառան — մարագ, գժվել — ցնդել — հիմարանալ — խելագարվել — խենթանալ — ցնորվել, քաջ — արի — կրտսրիճ — խիզախ — աներկյուղ — անվեհեր — սրտոտ:

Առաջադրանք 42. Ստորև բերվող հատվածներում գտնել համանիշները և որոշել նրանց ոճական դերը:

Ծառերը ծիծաղում մանրիկ,
հփում են լուսնյակի լարին,
լճակը աստղեր է առել,
Զնգոցով զարկում է քարին,
Հայրենը տանիքից տանիք
Շշուկ ու ծիծաղ է տանում,
Տանում է լույսի պես փռում
Հանդերձին, լանջերին, սարին:

Գալիս է նա առու-առու,
Գալիս է նա վտակ-վտակ,
Խառնվում ու գետ է դառնում
Ուղտասարի ոտքերի տակ...
Ոտից գլուխ փրփուրի մեջ,
Եռում է նա ու հերսոտում,
Գազազում է ու միան ուտում...
Ինքը իրեն աղում, մաղում,
Իրեն տանջում ու շարշարում...
Նորից ճշում, նորից գոռում,
հփում ճամփի քար ու խուժին
Ու գնում է փրփուր տալով...

Ուզում եմ հիմա իմ հասակով մեկ
Ծառանալ որպես կենդանի բողոք,
Ճշալ, որոտալ, հերքել հիմնովին
Այդ անդարձության օրենք անողոք...

Քարափներ իմ, քարափներ,
Զեր շուրթերի վրա ես
Սարսուռ ու դող եմ...
(Հ. Սաֆյան)

Խոնարհ ու հեզ
Մի հոգնած եզ՝
Արորն ուսին,

Ճանճը պողին,
Մի իրիկուն
Կալիս էր տուն:

(Ա. Խնկոյան)

Ջինջ աղբյուրների, գետերի մեջ պարզ
Արցունք են թափում ընկնող աստղերը:—

(Հր. Հովհաննիսյան)

Չափարի տակ, եղինջի մեջ
Մանուշակն է գլուխ հանել:
Շուրջը փշեր, շուրջը խիճեր,
Կառ ու կոթուկ դառն ու լեղի,
Ու մացառներ չոր ու դեղին:

(Մ. Մարգարյան)

Առաջագրանք 43. Տեքստում եղած խոսակցական և բարբառային բառերը փոխարինել համապատասխան գրական համանիշներով, նշել դրա հետևանքով կատարվող իմաստային փոփոխությունները:

«Դրանք էլ ի՞նչ հավես արին ջարդվելու: Իշխան Սաքո, մի գնա փրթի էդ թշնամուն: Ժողովրդին առաջ գցեցե՛ք, թող գնա համ կովի, համ էլ հառամզադա գորքի շլեքին տա մոտս բերի: Դե՛, հիմի ուղ եղեք ու էլ զահլա մի տանեք: Տերության գործը մնաց: Կերակուրները սառեցին: Ես գործ ունեմ: Հաց պիտի ուտեմ: Հասկացա՞ք, հայվաններ: էլ սրանից դենը քանի ջարդվի՝ զարկեցե՛ք, քանի ջարդվի՝ զարկեցե՛ք: Ու մին էլ թե ներս եք եկել ու կովի վրա խոսք եք բաց արել՝ կարկածներդ միջից կկիսեմ: Իմացա՞ք: Ուստիան, մի քիչ էլ գնանք կտեր ծերին նստենք, դայլա՛ն քաշենք: Ա՛յ, հիմի բաղչում սուփրա կբանան, գնանք ծաղիկների մեջ նստենք քեֆ անենք: (Սենեկապետին) Գյադա՞: Գնա ասա լավ շարագով սուփրա գցեն: Սազանդար կանչի, գան մեզ բաղչա տանեն: Դուք էլ մեզ ճամփա կդնեք բաղչա ու հետո կերթաք ձեր գործին»: (Դ. Դեմիրճյան)

Առաջագրանք 44. Հնդգծված բառերի փոխարեն գործածել տարբեր համանիշներ, ցո՛ւյց տալ իմաստային հնարավոր տարբերությունները:

1. Մինչ ճողին կհանձնենին սպանված մինուճարին ու ետ կդառնային, մինչ հոգու հացի կնստենին ու վեր կկենային,— սպանող մինուճարի հոր տունն ու բակը դատարկվեց (Ա. Սահյան): 2. Եվ հայրենի անծայր երկրի փոշոտ ուղիները իրենց հետ տանում էին նրա հոգին դեպի արծվաբնակ լեռները, որոնց ապառաժոտ գահերից վիժող ջրընկեցների դիվական ձայնը լցնում էր լոռիթյունն անծայրածիր (Ավ. Իսահակյան): 3. Ամառվա բաց երկնքից ձյուն մաղեց մորս ծամին (Չ. Սահյան): 4. Երկինքը հանդարտ հեքիաթ էր ասում, և արևելքում ծնվում էր արփին (Գ. Սարյան): 5. Մեծ թափառականը մռայլ աչքերը նետեց քաղաքի վրա: Փողոցներում և շուկաներում խոնվում էին այրեր, կանայք, երեխաներ: Ոմանք անապարում էին մտահոգ, ոմանք արևի տակ զվարճանում էին անհոգ (Ավ. Իսահակյան): 6. Այրարատ աշխարհի այգիներն աշնան տաքագներ էին հագել: Շենքերն ու գյուղականներն իրար միացնող խճողված ճանապարհների եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները: Հեռվում արծաթին էր տալիս Երասխ գետը: Մութն ընկնում էր հանկարծ, միանգամից, իսկ այգաբացն արդեն շատ էր ուշանում: Հովնանը դուրս եկավ տնից և աննպատակ քայլեց աշնան թափուր այգիների նեղ ճանապարհներով: (Վ. Խեչումյան)

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐ

Համանուն են կոչվում այն բառերը, որոնք ձևով նույնն են, իմաստով տարբեր:

Համանուն բառերի իմացությունը կարևոր է երկու նկատառումով: Մի կողմից՝ նրանց ոչ ճիշտ գործածությունը կարող է ազդել խոսքի պարզության և ճշգրտության վրա, տեղիք տալ երկիմաստության և թյուրիմացությունների: Մյուս կողմից՝ նրանք կարող են օգտագործվել բառախաղերի ժամանակ և խոսքին աշխուժություն հաղորդել:

Համանունությունը կարող է լինել լրիվ և մասնակի: Լրիվ համանուն են այն բառերը, որոնք լիովին համընկնում են և՛ գրությամբ, և՛ արտասանությամբ, օրինակ՝ կետ (ծովային մի կենդանի)— կետ (մի, գրանշան), ճռա (բույր)— ճռա (ոչ-

խարի հոտ), փռղ (դրամ)— փռղ (խողովակ) և այլն: Մասնակի համանունները լինում են մի քանի տեսակ:

Համաձև են կոչվում համանուն բառաձևերը, այսինքն՝ արտաքնապես համընկնող քերականական տարբեր ձևերը. օրինակ՝ արի (մարդ)— արի՛ (տուն), հացի (կտոր)— հացի (ծառ), կրի (շաղախ)— (թո՛ղ) կրի, գնում է (տուն)— գնում է (թուղթ և մատիտ) և այլն:

Համագիր են կոչվում միատեսակ գրվող, բայց տարբեր արտասանվող բառերը, օրինակ՝ բարդ (հին կելտական երգիչ)— բարդ (ոչ պարզ, արտասանվում է բարք): Համաներնչյուն են կոչվում տարբեր ձևով գրվող, բայց միատեսակ արտասանվող բառերը. օրինակ՝ աղտ — ախտ, ուզտ — ուխտ, ուրդ — ուրք:

Հարանուն են կոչվում այն բառերը, որոնք ձևով մոտ են, իսկ իմաստով տարբեր. օրինակ՝ Ավստրիա — Ավստրալիա, Լիբիա — Լիբանան, Շվեդիա — Շվեյցարիա: Այսպիսի բառերի շփոթումից պետք է խուսափել, մանավանդ երբ իմաստի որոշ մերձավորություն կա, ինչպես պանդանել — պաշտպանել, խոստանալ — խոստովանել և այլն:

Առաջադրանք 45. Գտնել համանունները և հարանունները, նշել, թե ո՞ր դեպքում նրանք արտահայտչական դեր ունեն և որ դեպքում՝ ոչ: Վերացնել անհաջող գործածությունից առաջացած թերությունները:

I — Եվ ո՞ւմ ինչ մրմռուր քո ցավի:

Ախ, գոնե մի սիրտ էլ չցավի՞...

Լորագետը...

Բխում է նա երակ-երակ
Ժայռերի բաց երախներից,
Բխում է նա երակ-երակ
Նրանց քարե երակներից,
Բխում է նա երակ-երակ
Նրանց քարե երազներից:

Երբ քարափներն աչքիդ
Կարապներ են դառնում,

Ճամփորդներ են դառնում,
Ու ոգի են առնում
Ճամփաները՝
Անխմաստ է արդեն թափառելը:

Նստիր և հրճվագին
Տառապանքդ քաշիր,
Տաշիր տողերը բիրտ
Ու տքնությամբ տաշիր
Ապառները.
Անխմաստ է արդեն
Թափառելը:

Ծղան կերածը դարման ու սեղ էր,
Ինքը բարության քայլող մի դեզ էր,
Համառ էր, բայց և խոնարհ ու հեզ էր,
Ինչ աներ, եզ էր...

— Ինչպե՞ս, ինչպե՞ս հանգստանան,
Ծրբ հայրենի լեռների մեջ
Նրանք ունեն ապաստարան...
Եվ գնում են ապաստանում
Հեռու-հեռու տափաստանում:
(Հ. Սաճյան)

II. Ապա գոմում շանը վերցնել տվին ոչխարների հոտը
ու բռնեցին հետքը (Հր. Մաթևոսյան): 2. ԱՄՆ-ի պրեզիդեն-
տի այցը Պեկին, որ լայնորեն տարափոխվում է իբրև «ուղե-
վորություն հանուն խաղաղության», իրականում մի վարա-
գույր է Հնդկաչինում ԱՄՆ-ի ագրեսիվ պատերազմը քողար-
կելու համար: 3. Բրամսի կոնցերտը մենանվագում է բեյրութ-
ցի դաշնակահարը, որն իր հայրենիքում՝ Լիբիայում, մեծ
համբավ ունի: 4. Մարտի շախմատային մարտերը դեռ շա-
րունակվում են: 5. Հանդիսատեսն այս դերասանից շատ անա-
կընկալություններ ունի: 6. Հենց իր՝ Մարխհաուզի հաշվում-
ներով, Սահարան կտրել անցնելու համար հարկ կլինի անցնել

Մավրիտանիան, Մալին, Ալժիրը, Կիբանանը և Եգիպտոսը
(Թերթերից)։

ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ

Հականիշ են կռվում այն բառերը, որոնք ունեն հակադիր
իմաստներ. օրինակ՝ բարձր — ցածր, վերև — ներքև, բշտա-
մի — բարեկամ, սև — սպիտակ։

Հականիշ բառերն օգտագործվում են արտահայտչական
հակադրություն ստեղծելու համար և առանձնապես հաճախ
են հանդիպում գեղարվեստական խոսքում (այդ թվում՝ գրե-
քերի վերնագրերում) ու ժողովրդական բանահյուսության մեջ.
օրինակ՝ «Պատերազմ և խաղաղություն», «Անմեղ մեղավոր-
ներ», «Կուշտը սովածին մանր կբրդի» և այլն։

Առաջադրանք 46. Գտնել հականիշները և ցույց տալ նրանց
ոճական դերը.

1. Այնպես ես գալիս, այնպես ես գնում,
Ով դու արարող և ավերիչ,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ինչ էր, տարածդ ինչ։

Ինձ համար հերիք էր արդեն
Ժպտալդ ու լալդ,
Երբ գալդ պարգև էր մի մեծ,
Ուր մնաց մնալդ։

Եվ դարձյալ առնելիք չունեմ,
Բայց շատ է տալիքս,
Ներիր ինձ, ներիր ինձ, եթե
Ջների տարիքս։

Մի տեղ իշխան ու տեր,
Մի տեղ համեստ հովիվ,
Մի տեղ ճորտ եմ եղել,
Մեկին մոտ-մտերիմ.

Մեկին հազիվ ծանոթ,
Մեկին խորթ եմ եղել:

Անհնար է հավատալ,
Որ շկաս իրոք,
Դու իմ եղբայր, դու իմ պապ,
Իմ գիժ, իմ խելոք,
Իմ հանճարեղ, իմ հիմար,
Իմ պղտոր, իմ ջինջ,
Բահի զնգոց, խոփի վար,
Ամեն, ամեն ինչ...

Բախտի խորհուրդով եկանք-մոտեցանք,
Եվ մոտենալով այնքան հեռացանք,
Որ ետ կանչելու էլ բառ չմնաց:
Բախտի խորհուրդով թողինք-հեռացանք,
Եվ հեռանալով այնքան մոտեցանք,
Որ բաժանվելու հնար չմնաց:
(Հ. Ստեյնե)

ՀՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեզվի բառապաշարը ժամանակի ընթացքում փոխվում է:
Որոշ բառեր դառնում են անգործածական կամ քիչ գործածա-
կան, գործածություն մեջ են մտնում նոր բառեր:

Ամենօրյա գործածությունից դուրս եկած կամ, ինչպես
ասում են, հնացած բառերը երբեմն կարող են հանդես գալ
պատմական աշխատություններում, ինչպես նաև օգտագործվել
գեղարվեստական խոսքում՝ այս կամ այն անցյալ ժամանա-
կաշրջանի համար բնորոշ լեզվական միջավայր ստեղծելու,
իր ժամանակն ապրած մարդու խոսքը բնութագրելու համար
և այլն: Անտեղի գործածվելու դեպքում այդ բառերը խոսքին
տալիս են վերամբարձություն և հոետորականություն:

Սովորական գործածությունից դուրս եկած բառերն ու առ-
տաճայտությունները կոչվում են հնաբանություններ. օրինակ՝

սույն (այս), նկրտում (ձգտում), զգլխիչ (հարբեցնող), նախաբար, այրումի, ասպազեն և այլն:

Ժամանակակից հայերենի հնարանությունները գալիս են հատկապես գրաբարից:

Հնարանություններին հակառակ կան բառեր, որոնք նոր են միայն համալրում լեզվի բառապաշարը և հաճախ դեռ լիովին չեն մերվել նրան:

Լեզվի մեջ նոր մուտք գործող բառերն ու արտահայտությունները կոչվում են նորարանություններ. օրինակ՝ համալիր, մասնաշենք, տիեզերանավ, լուսնագնաց և այլն:

Նորարանությունները երկու հիմնական աղբյուր ունեն. դրանք կամ կազմվում են լեզվի սեփական միջոցներով՝ արդեն եղած բառերի օրինակով, կամ փոխ լեն առնվում այլ լեզուներից:

Առաջադրանք 47. Գտնել հնարանությունները, ցոլց տալ նրանց գործածության նպատակը:

- I. Եղել է մի հին, մի հաշտ ժողովուրդ՝
Ծվարած հողում իր թիբլիական,
Քարից է քամել իր հացը ավուր,
Քարին է տվել իր ձիրքերը բյուր,
Մեղմել մռայլը ժայռեղեն իր տան
Եվ նվիրումով այրվող իր սրտի
Կանգնել է վեմեր, սյուներ, խոյակներ,
Եվ քաղաքներն ու շեներն է հիմնել
Իր մեսրոպատառ գրերն է երկնել,
Տաղերգել վասն սիրո ու վարդի,
Հյուսել իր արդար վիպերգը Դավթի,—
Եվ միշտ իր հոգով, իր հին վիպերգով՝
Հանապազօրյա խոսք ու աղոթքով՝
Ապավինելով ճերմակ իր աստծուն
Խաղաղություն է երազել անսուտ
Աշխարհին, իրեն և ամենեցուն...
- (Ս. Կապուտիկյան)

II. 1. Հախճապակե դստիկոնի վրա, գահավորակի մետաքսե
թարձերին՝ թիկն էր տվել երիտասարդ արքան (Ավ. Իսահակ-

յան): 2. Այս անգամ պարսպադռներին տեղավոր թիկնապահներով բակը մտան երկու անձայն հեծյալներ: Մեծը Կամսարականի քեռորդին էր (Ստ. Զորյան): 3. Ինչ որ եղավ՝ մնացողաց եղավ, խեղճերի ծուխը մարեց (Ա. Սահինյան): 4. Զորանում է գիշեր ու տիվ հողը բազմադարյան... Ողջույն, ջրում կորած ռելսեր, որ ձգվում եք աջ ու ահյակ (Լ. Միրիջանյան): 5. Հորս հիացմունքը մեծավ մասամբ վաղաժամ է լինում (Վ. Գրիգորյան): 6. Ինչ իմանար պատանին, որ ծաղկող Հովնանից բացի, Անահիտը ոչ ոքի չէր տեսնում շրջապատում: Հովնանը նկարում էր ավետարանիչների միօրինակ պատկերները: Մի մռայլ, անձրևոտ առավոտ ծերունի գրիչն ու Հովնանը վանահոր մոտ տարան ձեռագիրը:— Լավ էս ծաղկել, խոսք չունեմ, բայց...— վանահայրը մի պահ վարանեց, ասես կշռում էր հետևյալ խոսքը:— Բայց դու լսիր իմ խորհուրդը, որդի՛, վանք մտիր: Եվ թող աստծու տաճարի ծառան լցվի երկնային շնորհով, և տերը թող քաղցր նայի նրան: Հովնանը գրչի հետ դուրս եկավ վանքի գավիթը: Կորամեջք ծերունին քայլում էր նրա կողքից և շորացած շուրթերով աղոթք մրմնջում իր հոգու փրկության համար: Ապա զարմանքով կանգ առավ, ինչ-որ կմկմաց և խաչակնքեց...

Այդ ձեռագիր մատյանը ապրեց դարեր շարունակ, իբրև խավար միջնադարում մի անգամ առանց հրաշքի բոցավառված կերոն (Վ. Խեչումյան):

III. (Տիրացու.— ժամանակի նշան է: (Դիտելով ճանճերին) Ո՛վ նազարե, այս ճանճերը ճանճեր չեն, այլ դյուցազններ: (Ոգևորված և ճետգնետե արագ ու մեֆենայական) Դյուցազն մի ահավոր տեսա երազիս, աջին՝ սուր, ձախին՝ դրոշ: Հայտնեցավ իբրև հուր երկնային և ջարդեց հազար դյուցազն: Ողորմությամբ աստուծո. դու ես այդ դյուցազնը: Ո՛վ կատարումն երազիս: Դու կտիրես աշխարհին, նազարիա՛ս, և թագավորք կդողան քեզանից: (Բաց է աճում գիւղը և բակի մեջ շրջան գործելով՝ սկսում է ճայել գրքին ու փնթփնթալ) Ահա՛՛ եկի, գտա, տեսի ու ստուգեցի Տիրոջն օգնականությամբ: Օրն է մեծ, երազն է բարին: Որ և՛ ստուգեմ, և՛ գուշակեմ, և՛ մեկնեմ: Ահավասիկ (ճամբում է ճանճերը), մեկ, երկու, երեք, չորս, հինգ, այսինքն՝ հազար: Նշանն է ճշգրիտ: (Մտնելով

պատին փոխած մի ճերմակ փալաքի) Ահա վասիկ և՛ գրեմ,
և՛ դրոշմեմ ի լուր աշխարհի:

Անհաղթ նազար, քաջ նազար,
Մին կզարկի, ջարդի հազար:

(Փալասը ցույց տալով օդի մեջ) Նշան աստվածային, բան
խորախորհուրդ: Որով և հույս աստված՝ կտիրես աշխարհին:
(Դ. Դեմիրճյան)

Առաջադրանք 48. Տրված նախադասություններում գտնե՛լ
նորաբանությունները:

I. 1. Իմ անակնկալ ծննդյան օրից մինչև ակնթարթն այս
գուշակելի քանի եռիլիոն շնչավորներ են եկել-գնացել (Հ.
Սահյան): 2. Պիտի անցնի, պիտի ձգվի, պիտի գնա հեքիա-
թային մի գետնուղի (Լ. Միրիջանյան): 3. Սովետական գե-
ղաշուշկի դպրոցը հոյակապ հաղթանակ նվաճեց (Թերթե-
րից): 4. Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արյունաքամ վերքե-
րը մեր, էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան յա՛րն եմ
սիրում (Ծ. Զարենց): 5. Կիջնի ահա երեկոն, կբացվեն լույսի
շուշանաթերթ լամպերի կոկոնները վառ (Գ. Սարյան):

II. Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին էրեբունի,
Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,
Վեր կամարվուն ժայռաբարուր հազարագեղ գմբեթվելով,
Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին նմանվելով,
Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ճոխ պարտեզների,
Սուրբ զանգերի ղողանջի պես ժխորն է բյուր հայ մուր-
ճերի...
Ելնում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,
Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտվում նոր
արձանով,
Վեր գմբեթվում հազարասյուն, հազարաձայն Երևանով:
(Հ. Շիրազ)

Առաջադրանք 49. «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» լրագրի

մի քանի համարներից դուրս գրել մարզական կյանքին վերաբերող նորաբանությունները:

ԳՌԵՆԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՂՄԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խոսակցական լեզվում հանդիպում են այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնց գործածությունը գրական լեզվում անթույլատրելի է, որոշ դեպքերում էլ թույլատրելի, բայց ոչ ցանկալի: Այդպիսի բառերը երբեմն-երբեմն թափանցում են գրական լեզվի և գրավոր խոսքի մեջ:

Այն կոպիտ բառերն ու արտահայտությունները, որոնք հանդիպում են խոսակցական լեզվում, բայց գրական լեզվի համար անպատշաճ կամ, նույնիսկ, անթույլատրելի են, կոչվում են գոեհկաբանություններ:

Կան բառեր էլ, որոնք թեև գոեհկաբանություններ չեն, բայց մոտենում են դրանց, կոպտության երանգ ունեն. այդպիսի բառերը կոչվում են հասարակաբանություններ. օրինակ՝ զխտկվել, շնքոկել և այլն:

Սակայն ոչ բոլոր դեպքերում է հնարավոր հասարակաբանությունները և նույնիսկ գոեհկաբանությունները արտաքսել լեզվից: Այս դեպքում վտանգ է առաջանում լեզուն դարձնել արհեստական կամ, ինչպես ասում են, «քաղցր-մեղցր»:

Կա գոեհկաբանություններից խուսափելու մի միջոց ևս՝ դրանց փոխարինումը թույլատրելի բառերով և արտահայտություններով: Այն բառերն ու արտահայտությունները, որոնցով փոխարինվում են կոպիտ, անթույլատրելի, տհաճ բառերն ու արտահայտությունները, կոչվում են մեղմաբանություններ: Մեղմաբանությունները կարող են օգտագործվել ոչ միայն գոեհկաբանություններին փոխարինելու, այլև պայմաններին համապատասխան խոսքը մեղմելու նպատակով. այսպես, մեռել-ի կամ դիակ-ի փոխարեն կարելի է ասել նեղեցյալ, մեռնել բայի փոխարեն գործածել վախճանվել բայը և այլն:

Առաջադրանք 50. Գտնել գոեհկաբանություններն ու հասարակաբանությունները և, չեղոք կամ վայելուչ համանիշներով փոխարինելով՝ պարզել նրանց ոճական դերը:

1. — Քեզ ո՞վ ասավ բոռաս խանումի մոտ, իշի՛ կտոր։
 2. — Ժողովրդին առաջ գցեցե՛ք, թող գնա հա՛մ կովի, հա՛մ էլ հառամզադա զորքի շլինքին տա, մոտս բերի։ 3. Դե հիմի ուղ եղեք ու էլ զահլա մի տանեք։ 4. Հասկացա՞ք, հայվան-նե՛ր։ 5. Խ՛նչ կա էլի։ Հը՛ր։ Դո՛ւրս, հառամզադա։ 6. Ջե՞ս իմա-նում, քյաֆթաու։ 7. Ապա՞, գյադա, մի Հերաթի վեր քաշեք տեսնենք։ 8. Տեսա՞ք։ Դուք փսլնքոտ նազարին։ 9. Երկու իշի գարի չէր կարում բաժանի։ 10. Դու էն սարսաղներին ասա, թե ո՞նց են կատու կտրել էդ նապաստակի առաջին։ 11. Հա՛, մե՛ծ գործի վրա եք։ Բախտավորեն՛ր։ Հողեմ ձեր անամոթ գլուխը։ 12. Է՞դ է քո թագավորական ժողովը, հա՛. քյոփա՛կ... Խորեմ թագավոր գլուխդ։ 13. Յիսեմ թագավոր գլուխդ։ 14. Ամոթը ե՞ս պիտի ունենամ, թե՞ դու։ Կրե՛մ գլուխդ... (Դ. Դեմիրեյան)։ 15. Տո անտեր-մունդոփկ, բա մի մարդավա-րի փեշակ չկա՞ր, որ գնացել ջադուբազ կնկա փեշակ ես բըռ-նե՞լ։ 16. Տո՛, թե սատանա ես ուզում, հրեդ տեղն ու տեղդ սատանա ես էլի, որ սուտ-սուտ բաներով խալխին խաբում ես, փողերը ցնցում, փորդ տողացնում։ 17. — Հաա՞, մեռել ե՞ք, սատկել յ՞ք... Այ խլանա՛ք դուք, խլանաք... Վա՛յ ձեր ծնունդը շորանա, ձեր ծնունդը։ 18. Աղջի՛, բա էդ քոռացած աչքերովդ տեսնում չե՞ս արևը մեր ա մտել։ Այ ո՛չ ունենամ քեզ պես հարսը, ո՛չ, շորանաս կպչես էդ տափից, ոնց որ շո-րացել կպել ես։ 19. Փախել ես, հա՞, տանից։ Զառը-ջհանդա-մը, թե փախել ես։ (Նաբ-Դես)

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԺԱՐԳՈՆԱՅԻՆ ԲԱՌԵՐ

Գրական լեզուն յուրացնելու ընթացքում բարբառախոս անձնավորությունները աստիճանաբար դադարում են բարբառային բառեր, արտահայտություններ ու քերականական ձևեր գործածելուց։ Սակայն կան դեպքեր, երբ բարբառային բառերն ու արտահայտությունները թափանցում են գրական լեզվով խոսողների լեզվի մեջ։

Այն բառերն ու արտահայտությունները, որոնք հատուկ չեն գրական լեզվին, այլ գալիս են բարբառներից և ունեն

տեղական երանգ, կոչվում են բարբառայնություններ կամ
գավառաբանություններ:

Բարբառային բառերի գործածությունը գրական լեզվում,
հատկապես վարչագործարարական, գիտական և հրապարակախոսական ոճերում, խրախուսելի չէ: Սակայն գեղարվեստական խոսքի մեջ գրողները երբեմն դիմում են բարբառային բառերի և արտահայտությունների՝ տվյալ վայրի կենցաղային, ընտանեկան և այլ կարգի առանձնահատկություններն ավելի ցայտուն կերպով արտահայտելու, տեղական երանգավորում ստեղծելու, ինչպես նաև հերոսների խոսքը ավելի բնական, ընթերցողի համար ավելի համոզիչ դարձնելու նպատակով: Այս դեպքում էլ գրողը պետք է խուսափի ծայրահեղություններից. բարբառային շատ բառերի և արտահայտությունների գործածությունը, մանավանդ երբ հրանք խիստ տեղային բնույթ ունեն, խոսքը դարձնում է դժվար հասկանալի և նվազեցնում նրա ներգործությունը:

Բարբառայնություններից տարբեր են ժարգոնային բառերը ու ծածկաբանությունները, որոնք գործածվում են հասարակությունից մեկուսացած զանազան խավերի կողմից՝ մեծ մասամբ ուրիշներին անհասկանալի մնալու նպատակով:

Ժարգոնային են այն բառերն ու արտահայտությունները, որոնք բնորոշ են հասարակության մեկուսացած խմբերի լեզվի համար: Դրանք կոչվում են ծածկաբանություններ, եթե օգտագործվում են ուրիշներին անհասկանալի լինելու նպատակով:

Ժարգոնային բառերը և արտահայտությունները նույնպես կարող են օգտագործվել գեղարվեստական գրականության մեջ՝ հիշյալ խավերի կյանքի նկարագրությանը համապատասխան երանգ հաղորդելու և այդ խավերին պատկանող հերոսների խոսքը ոճավորելու նպատակով: Սակայն, ինչպես բարբառայնությունների դեպքում, այս դեպքում էլ չափավորությունն ու զգուշությունը խիստ անհրաժեշտ են:

Առաջադրանք 51. Գտնել բարբառաբանությունները և քննել տալ նրանց ոճական դերը: Բարբառաբանությունները գրական հոմանիշներով փոխարինելով դիտել կատարվող փմաստային և ոճական փոփոխությունները:

Ի. «Ծանապարհից վերև, բլուրի լանջին մեկը ջրում է մուգ կանաչ առվույտը: Ծալում եմ, թե ինչպես առվի ավազի մեջ զրնգում է նրա ծանր բահը: Իսկ երբ բարձրացնում է բահը, արևը լուսավորում է բահը, ու թվում է, թե ջրվորի ուսին բռնկված ջահ է:

— Սա՞ է Ձյանբերդի ճանապարհը...

— Հա, — ասում է, — մըր գուղն ի... Իդա դար լե շրջվի... — ու գրպանից հանում է ծխախոտի քիսեն:

— Յոնջան քո՞նն է:

— Վարկայության նախակահ բերեց հերու: Անուշ բուս է: Ինա կուտ (ցորեն) լե մեր է, — գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը:

— Մըր բախտ կապած ենք գդալ ջրի... Մըր հողեր լե ցըրվուկ: Է՛հ, հացի տեղ արուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհություն»:

— Ազնո, կինո տեսե՞լ ես:

— Հաբա օրի չըմ տեսե, շուր մը զարկեր է պատ, կցուցնե՞ս, աղջիկ, օրիորդ, կարտոֆիլ:

— Կարմիր բանակ լսե՞լ ես:

— Կարմիր բանակ շուր է, քցեր են դրոշակի վրա:

— Ազնո, աստված կա՞:

— Հաբա: Աստված կանաչ ճնճղուկ է:

— Հապա երկի՞նքը:

— Երկինքը զինջիլով կապուկ է եզան կոտոշին:

— Ազնո, որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու:

— Կեղնիմ օրիորդ:

— Հաղ մի երթամ տեսության մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութա բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողվիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրեն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ շորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղության զիմ երգեր, մարդիկ հալալ զուլալ ախպրտոց պես զըրկեն զիրար, շեղնի ո՛չ տեր, ո՛չ մշակ, ո՛չ թուր, ո՛չ բռնություն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բարձրանա երդիկներեն, խմեմ մըր լուս աղբըրներեն, զիմ քրտինք կաթա մըր քարե-

բու վրեն, մըր Մարութա, բանձր սարի ամպ թող լիզա զիմ
սիվտակ ոսկորներ...»:

(Ա. Բակունց, «Ծիրանի փողը»)

II. «— Մերն էսպես է, տղա՛ս, սովոր ենք: Երբ մի անգամ
քաղաք էի գնացել ու այրոպլանով Երևան պիտի թռչեի, էդ
երկաթե դղի շոֆերն ըսավ. «Հասակով մարդ ես, չե՞ս վախե-
նա...»: Խնդալս եկավ, ըսի. «Մա՛նչս, մենք տարին տասվեր-
կու ամիս սամալոթի մեջ ենք, էս անգամ ինչի՞ պիտի վախե-
նամ...»: Զհավատաց, ըսավ. «Մենձ մարդ ես, սուտ ինչի՞
կը խոսես...»: Երդում, կրակ, չհավատաց: Մուխաննաթ Գար-
սոն էլ հետս էր: Եկավ ու էս պատմութենը գեղի ականջը
գցեց. անունս մնաց Սուտ-Սուքիաս. ահա օխտը-ութը տարի
էդ անունով կապրիմ...»

— Սուքիաս, ինչո՞ւ ձեն չես հանի...

— Հե՛շ:

— Մեր Պետոյի նամակը կարդըցի՞ր...

— Հա:

— Կարոն թոփչի է, հա՞... Զլինի՞ թե մարդու վնաս տա,
վիրավորե կամ սըպանե, հը՞...

— Կրակի մեջ փլավ չեն բաժնե, մահ կբաժնեն էժան
գնով, մարդուն՝ մեկ գյուլա...

— Մի՛ նեղանա, ա՛յ մարդ, ղորթը չգիտես, գոնե սուտն
ըսա, ախր մեր եմ...»:

(Մ. Սարգսյան)

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Բացի գրական լեզվի սովորական բառերից, կան տարբեր
մասնագիտությունների հետ առնչվող բառեր, որոնք հաճախ
են հանդիպում մասնագիտական գրականության մեջ և տվյալ
մասնագիտությամբ զբաղվող մարդկանց խոսքում: Այդպիսի
բառերը կոչվում են մասնագիտական բառեր:

Մասնագիտական շատ բառեր տարբերվում են սովորական
բառերից նրանով, որ գործածվում են միանգամայն որո-

շակի իմաստով, գիտականորեն ճշգրիտ և ստույգ սահմանված հասկացություններ արտահայտելու համար:

Այն բաները, որոնք գործածվում են ճշգրիտ կերպով սահմանված հասկացություններ արտահայտելու համար, կոչվում են տերմիններ: Տերմինների ամբողջությունը կոչվում է տերմինաբանություն:

Գիտության, տեխնիկայի, սպորտի, արվեստի ամեն մի բնագավառ ունի իր հատուկ տերմինները: Այսպես, գոյական, ածական, բայ, շաղկապ, հոլովում, խոնարհում և շատ այլ բառեր քերականական տերմիններ են և միասին կազմում են քերականական տերմինաբանությունը. ռեալիզմ, ռոմանտիզմ, նատուրալիզմ, սյուիզ, ֆաբուլա, կերպար և այլ բառեր գրականագիտական տերմիններ են. բանակ, դիվիզիա, զուկ, վաշտ, ջոկ, ռազմանակատ, գեղացի, հետախույզ և այլ բառեր ռազմական տերմիններ են. ֆուտբոլ, պաշտպան, հարձակվող, դարպասապահ, բասկետբոլ, ցատկ, գեղասահ, հրնգամարտ և այլ բառեր սպորտային տերմիններ են և այլն:

Տերմինները բնորոշ են հատկապես գիտական ոճի համար: Սակայն նրանք կարող են հանդիպել նաև գեղարվեստական գրականության մեջ՝ մեծ մասամբ տվյալ երկի թեմայի հետ կապված կամ տվյալ մասնագետների խոսքը ոճավորելու և տիպականացնելու համար: Կան դեպքեր էլ, երբ որևէ հեղինակ գործածում է մասնագիտական տերմիններն ու բառերը ոչ բնորոշ տեքստում՝ երգիծական տպավորություն ստեղծելու նպատակով:

Առաջադրանք 52. Դպրոցական դասագրքերից դուրս գրել գիտության տվյալ ճյուղին վերաբերող տերմիններ:

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՋՐԱՄՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Լեզուները միմյանցից կղզիացած ու մեկուսացած չեն: Նրանք գտնվում են շփման ու փոխազդեցության մեջ՝ միմյանց տալով բառեր ու արտահայտություններ: Բառերի փոխառությունը անխուսափելի երևույթ է և նպաստում է բառապաշարի հարստացմանը: Սակայն այս հարցում երբեմն

նկատելի է երկու ժայրահեղություն: Որոշ դեպքերում մարդիկ անհարկի կերպով լեզվի մեջ սովորական բառը, արտահայտությունը, կառուցվածքը փոխարինում են օտար բառով, արտահայտությամբ, կառուցվածքով: Սրանով դժվարանում է խոսքի հասկանալիությունը, խախտվում լեզվի և ոճի մաքրության պահանջը:

Այն բառը կամ արտահայտությունը, որ անհարկի կերպով առնվում է մի այլ լեզվից և դրանով իսկ խախտում լեզվի մաքրությունը, կոչվում է օտարաբանություն:

Օտարաբանությունները հաճախակի են հատկապես այն մարդկանց խոսքում, որոնք կրթություն են ստացել ոչ մայրենի լեզվով, հոգ չեն տանում իրենց խոսքի նկատմամբ, լավ չեն տարբերում օտարն ու սեփականը, երբեմն էլ չգիտեն օտար բառերի ու արտահայտությունների բուն համարժեքները:

Պատահում է և հակառակ ժայրահեղությունը, երբ խուսափում են փոխառությունից, օտար, բայց հասկանալի բառերը առանց անհրաժեշտության փոխարինում արհեստական, երկարաշունչ, երբեմն էլ ավելի դժվար հասկանալի բառերով ու արտահայտություններով:

Օտար բառերի փոխառությունից ընդհանրապես խուսափելու, գրեթե բոլոր դեպքերում դրանք սեփական բառերով փոխարինելու ձգտումը կոչվում է մաքրամոլություն:

Առաջադրանք 53. Ե. Չարենցի «Լենինն ու Ալին» պոեմից գտ՛րս գրել օտարաբանությունները և ցո՛ւյց տալ, թե ինչ նպատակով են գործածված:

ՎԱՐՉԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՂԱՊԱՐԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաշտոնական գրագրություններում և հարաբերություններում մարդիկ դիմում են վարչագործարարական արտահայտության որոշակի եղանակների, բառերի և դարձվածների: Սակայն վարչագործարարական ոճի մեջ տեղին ու անհրաժեշտ բառերն ու արտահայտությունները երբեմն կարող են

դուրս գալ իրենց ասպարեզից, թափանցել հրապարակախոսության և գեղարվեստական գրականության, նույնիսկ առօրյա խոսակցական լեզվի բնագավառը, զրկել դրանք կենդանությանից, ոճը դարձնել անարտահայտիչ, տաղտկալի և անկենդանի:

Վարչագործարարական ոճին հատուկ այն բառերն ու արտահայտությունները, որոնք մնում են գործում գործառական այլ ոճերի մեջ, կոչվում են վարչաբանություններ:

Վարչաբանությունները գեղարվեստական խոսքի մեջ կարող են օգտագործվել նաև հատուկ դիտավորությամբ՝ ոճավորման և ծաղրի նպատակով:

Վարչաբանությունները և լրագրերում, գիտական երկերում ու պաշտոնական գրագրություններում հանախակի գործածվող բառաձևերն ու բառակապակցությունները կոչվում են կաղապարային արտահայտություններ:

Այդպիսի արտահայտությունների անհարկի գործածությունից պետք է խուսափել: Դրանք խոսքը դարձնում են միօրինակ, այն զրկում աշխուժությունից ու կենդանությունից:

Կաղապարային արտահայտությունների մի տեսակն են մակաբույծ բառերն ու արտահայտությունները, որոնք հաճախակի հանդիպում են որոշ մարդկանց խոսքում: Հատկապես շատ են շարաշահվում այնպիսի բառեր և բառակապակցություններ, ինչպիսիք են ռաբմե, իմարկե, ասենք, օրինակի համար և այլն:

Առաջադրանք 54. Գտնել վարչաբանությունները և կաղապարային արտահայտությունները, աշխատել ճշտել ոճական սխալները:

I. Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում, ինչպես նաև բուհերի մանկավարժության ու հոգեբանության ամբիոններում աշխատում են 55 գիտությունների թեկնածուներ և դոկտորներ: Նրանք հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարում ժողովրդական կրթության ասպարեզում: Մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտը, օրինակ, հաջողությամբ իրականացնում է ուսման նոր ծրագրեր կազմելու գործը... և. Արավյանի անվան մանկավարժական ինստիտուտի նախա-

դպրոցական մանկավարժության. ամբիոնը ուսումնասիրություն է կատարում: նախադպրոցական հասակի երեխաների բնավորության ձևավորման հարցերի վերաբերյալ: Հետազոտած արդյունքների շուրջը հաճախակի զեկուցումներով հանդես են գալիս հոգեբանության լաբորատորիայի գիտական աշխատողները:

Սակայն այն, ինչ արված է մեզ մոտ մանկավարժական գիտության զարգացման, մեր դպրոցի առջև կանգնած հրատապ հարցերը լուծելու ուղղությամբ, չի կարելի բավարար համարել: («Սով. դպրոց»)

II. 1. Երեք օրով ինձ գործուղել էին այդ գյուղաքաղաքը: Ամբողջ մեկ ժամ ես աչքի անցկացրի գրություններն ու ոչինչ չհասկացա: Խառնաշփոթ պատմություն էր: Մանոթացա բոլոր տեղեկագրերին, ու այդ խճողված, մեկը մյուսին չհամընկնող, իրար հակասող գրությունների խորքում այնուամենայնիվ զգացի, որ տեղի է ունեցել խորամանկ ու մութ մի գործարք:— Գնդապետ Սնելգրովը հանձնարարեց մի որևէ գրություն ձևակերպել,— ասացի,— դիմում եմ ձեր օգնությանն ու խորհրդին, մայր, ինչպե՞ս ձևակերպել: (Աբ. Ավագյան)

2. Հիմա նա իր պարտքը՝ համարեց նշել, որ մեկ տարվա կիսավայրենի կյանքը մեջս սպանել է քաղաքակրթության այնքան դժվարությամբ տված դասերը (Վ. Գրիգորյան): 3. Բայց այդ չէր խանգարի, որ շրջանի համապատասխան կազմակերպությունները արժանի անհանգստություն ապրեին: 4. Դասամիջոցին զրույց ունեցանք մի խումբ սովորողների հետ: 5. Չգիտես ինչ արժանիքների համար թարգմանվում և հրատարակվում են հայերենում քննություն չբռնած բազմաթիվ գործեր: 6. Կբարձրանա և խաղացողների ֆիզիկական և տեխնիկական պատրաստության մակարդակը, որը հնարավորություն կտա կիրառելու խաղի այնպիսի սխեմաները, երբ բոլոր հարձակվողներն ի վիճակի կլինեն անընդհատ վազք կատարելու իրենց դարպասից մինչև հակառակորդի դարպասի գիծը և ընդհակառակն: (Լրագրերից)

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Սովորական բառակապակցությունները և նախադասությունները ըստ խոսքի հանգամանքների ամեն անգամ նորից

նն կազմվում: Նրանց կազմը փոփոխվում է ըստ հանգամանքների փոփոխության: Սակայն կան բառակապակցություններ և նախադասություններ, որոնց անդամների կապը համեմատաբար կայուն է՝ աչի լույսի պես պահպանել, օծի լեզու թափել, խոսքը կտուրը գցել և այլն: Այսպիսի բառակապակցությունները և նախադասությունները իմաստային առումով միասնական ամբողջություններ են և ունեն գրեթե մեկ բառի արժեք: Նրանց ներքին կապը պայմանավորված է կա՛մ փոխաբերական ընդհանուր իմաստով, կա՛մ այնպիսի միասնական նշանակությամբ, որ բաղադրիչների փոփոխության դեպքում կարող է կորչել: Նախադասությունը վերլուծելիս կայուն բառակապակցությունները չի կարելի մասնատել: Նրանք ամեն անգամ նորից չեն կազմվում, այլ սովորաբար նույնությամբ առնվում, կամ, ինչպես ասում են, վերարտադրվում են:

Միասնական իմաստով կապված և նույնությամբ վերարտադրվող կայուն բառակապակցություններն ու նախադասությունները կոչվում են դարձվածներ:

Դարձվածքներ են որևէ լեզվի համար բնորոշ և բառացիորեն չբարգմանվող յուրահատուկ արտահայտությունները կամ իդիոմները (գլուխ հանել, գլուխ գնել, սիրտ տալ, ձեռք բերել, դես ու դեն ընկնել, տուր թե կտաս և այլն), ժողովրդական առածներն ու ասացվածքները (Աղվեսի վկան իր պոչն է, Պուշտը սովածին մանր կբրդի, Ջուկը գլխից է հետում, Փորձած քանը անփորձ մածնից լավ է, Գիտունի հետ ֆառ ֆաշիւր, անգետի հետ փլավ մի ուտի, Ահր վեր է, ֆան մահը և այլն), պատմական դեպքերից, դիցաբանական զրույցներից ու գրքերից սկիզբ առած և լեզվից լեզու տարածված թևավոր խոսքերն ու արտահայտությունները (Ռուբիկոնն անցնել — վրճառական քայլ կատարել, աֆիլեսյան գառշապար — խոցելի տեղ, Գորդյան հանգույց — անհաղթահարելի դժվարություն, սիզիֆյան աշխատանք — անվերջ ու անպտուղ աշխատանք և այլն), զանազան հեղինակների իմաստալից խոսքերը՝ աֆորիզմները (Պլատոնը բարեկամս է, բայց ավելի մեծ բարեկամս է ճշմարտությունը — Արիստոտել, Առողջ միտքը առողջ մարմնի մեջ — Յուվենալ, լավ է կույր աչոք, ֆան կույր մտոք — Եղիշե և այլն):

Դարձվածքների տեղին օգտագործումը խոսքը դարձնում

է դիպուկ, պատկերավոր և ավելի ներգործուն: Գրանց լայն գործածութիւնը բնորոշ է գեղարվեստական, առօրյա-խոսակցական և հրապարակախոսական ոճերի համար: Ավելի քիչ են հանդիպում դարձվածքները գիտական խոսքում: Գեղարվեստական երկերում և հատկապես բանաստեղծութեան մէջ դարձվածքային միավորները ըստ խոսքի նպատակի երբեմն կարող են որոշ փոփոխութիւնների ենթարկվել և նույնիսկ հակառակ իմաստ ստանալ՝ կալ է ուշ, քան երբեք — կալ է երբեք, քան ուշ:

Առաջադրանք 55. Օգտագործելով հայերենի բացատրական և դարձվածաբանական բառարանները, գրել սիրտ, գլուխ, ձեռք բառերով կազմված դարձվածքներ ու դարձվածքային արտահայտութիւններ:

Առաջադրանք 56. Հետևյալ բառերի համար գտնել համանիշ դարձվածքներ.

Ծաղրել, վատանալ, հուշել, օգնել, հասկանալ, մեռնել, անտեսել, փորձառու, ճարպիկ, խոսքը փոխել, ծովանալ, թանկ, խարդավել, սանձարձակ, զայլթել, հետապնդել:

Առաջադրանք 57. Բացատրել հետևյալ դարձվածքները իմաստը, դրանք փոխարինել պարզ համանիշներով.

Ականջները սրել, սիրտը փորն ընկնել, անկողին ընկնել, աչքը լիանալ, աչքի առաջ ունենալ, արյունը գլուխը խփել, բանը բուրդ լինել, բանը բանից անցնել, գետինը մտնել, փափախը գետնով տալ, գույնը գցել, օրվա հացի կարոտ, ոտքի կանգնել, սիրտ տալ, ձեռ ու ոտ ընկնել:

Առաջադրանք 58. Գտնել դարձվածքներն ու դարձվածքային արտահայտութիւնները, բացատրել դրանց իմաստը, ցույց տալ նրանց ճակատագրական դերը տվյալ խոսքում:

I. Եթե ես մի օր աշխարհից գնամ,
Ո՞ւմ հառաչից ես դու վեր թռչելու,
Ո՞ւմ թևերով ես վեր-վեր թռնելու,
Հոգին առնելու առանց պատճառի:

Եթե ես մի օր աշխարհից գնամ,
Ո՞ւմ աչքերով ես քեզ ճանաչելու,
Բռիղ մեջ առած ո՞ւմ ես տանջելու,
Ո՞ւմ ես խաչելու հիսուսավարի:

— էլ ո՞ւմ գլխին ես կրակ թափելու,
— Ո՞ւմ ես գցելու բերանն աշխարհի:
(Հ. Սահյան)

II. 1. Մեր մոլորակի վրա Դեզֆուլից ավելի վատ քաղաք չկա: Կարծես արար աշխարհի կեղտը բերել կուտակել էին այստեղ: 2. Ես գիտեմ, որ այդ գործից գլուխ չեք հանի,— ասաց իմ գլխավոր պետը (Աբ. Ավագյան): 3. Ինչ որ եղավ՝ գնացողին եղավ, ջահել-ջիվան էր՝ մուրազը փորում մնաց, թագու պսակի կարոտ գնաց, ո՛չ ժառանգ թողեց իր հետևից, ո՛չ մի գործ, որի հետ իր անունն էլ հիշվի... (Ա. Սահինյան): 4. Մի կաց, ես քո ապուրը կեփեմ: 5. Ի՞նչ է, թագավոր չե՞մ, բերանս ջուր պիտի առնե՞մ: 6. Բանակը ձեռքից գնացել էր: 7. Մատյան գոռնդը եկավ, և պարսից զորքը խելքը գլուխը հավաքեց, կուռ շրջապատեց Վարդանին: 8. — Հա՛, էլի ի՞նչ սատանա մտավ պինդդ: 9. Հիմի Վարաժը շուն կտրեց (Դ. Դեմիրճյան):

Առաջադրանք 59. «Առածանիից» դո՛ւրս գրել տասնական առածներ և ասացվածքներ, բացատրել դրանց իմաստը:

Առաջադրանք 60. Հ. Թումանյանի «Թմբկաբերդի առումը» պոեմից դո՛ւրս գրել աֆորիզմների արժեք ստացած հատվածները:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՃԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Քերականական ճնաբանությունը ճնաբանության այն բաժինն է, որ ուսումնասիրում է քերականական միջոցների ու կառույցների ճնական հնարավորությունները:

Ինչպես հայտնի է, միևնույն կամ մերձավոր իմաստներն ու մտքերը կարելի է արտահայտել հոլովածներով կամ կապերով, ներգործական կամ կրավորական կառույցներով, դերքայական դարձվածներով կամ երկրորդական նախադասություններով և այլն: Խոսելու և գրելու ժամանակ հարկավոր է իմանալ, թե առկա զուգահեռ ձևերից ու կառույցներից յուրաքանչյուրը խոսքի ի՞նչ տեսակների և ի՞նչ ոճերի է հատուկ, դրանցից որի՞ գործածությունն է տվյալ դեպքում ճիշտ և նպատակահարմար, ո՞ր դեպքերում են դրանք ազատ կերպով իրար փոխարինում և ո՞ր դեպքերում՝ ոչ, իմաստային ի՞նչ նուրբ տարբերություններ է առաջ բերում այս կամ այն փոխարինումը և այլն: Այսպիսով, քերականական ոճաբանությունը պարզում է, թե տվյալ լինգվում ի՞նչ զուգահեռ ձևեր ու կառույցներ կան, և ցուցումներ է տալիս դրանք տեղին ու նպատակահարմար օգտագործելու վերաբերյալ:

Քերականության երկու բաժիններին համապատասխան քերականական ոճաբանությունը լինում է ձևաբանական ոճաբանություն և շարահյուսական ոճաբանություն:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ.

ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՎԸ

Գոյականի թվի, անձի ու իրի առումների և հոլովական իմաստների ձևավորման յուրահատկությունները ոճական զգալի հնարավորություններ են ընձեռում:

Գոյականի թիվը կարող է ունենալ հետևյալ յուրահատուկ դրսևորումները:

1) Հոգնակիության իմաստը կարող է արտահայտվել ոչ միայն հոգնակի վերջավորություններով, այլև հավաքական իմաստ ունեցող –ություն, –եղեն և այլ ածանցներով: Բուն հոգնակիի –եր, –նեւ վերջավորություններով կազմվող ձևերը ցույց են տալիս մեկից ավելի առանձին առարկաներ, հավա-

քական ածանցներով կազմվածները՝ այդ առարկաների հավաքական ամբողջություններ. օրինակ՝ ամաններ — ամանեղեն, ուսանողներ — ուսանողություն և այլն: Այն դեպքում, երբ հոգնակի առարկաների կատարած գործողությունները կամ նրանց ունեցած հատկությունները տարբեր են, բուն հոգնակին չի կարելի փոխարինել հավաքական կազմությամբ. այսպես՝ «Արձակուրդին շատ ուսանողներ մեկնում են այլ քաղաքներ» նախադասության մեջ հնարավոր է միայն հոգնակի վերջավորության գործածություն, մինչդեռ «Բոլոր ուսանողները ոտքի կանգնեցին» նախադասությունը կարելի է փոխարինել «Ողջ ուսանողությունը ոտքի կանգնեց» նախադասությամբ:

2) Եզակի թիվը կարող է գործածվել հոգնակի փոխարեն հետևյալ դեպքերում. ա) հավաքական իմաստով, որպես տեսակի անուն, երբ նշվում է տվյալ տեսակին պատկանող բոլոր անհատներին բնորոշ հատկություն (մայիսին բացվում է վարդը, այսինքն՝ մայիսին բացվում են բոլոր վարդերը), բ) բաշխական իմաստով, երբ տվյալ ամեն մի անդամի վերաբերվում է միևնույն առարկան (բարձրացրե՛մ աչ ոտքը և կանգնեցե՛մ ուղիղ, այսինքն՝ ձեզնից յուրաքանչյուրը թող բարձրացնի աչ ոտքը և կանգնի ուղիղ): Երկրորդ դեպքում եզակի ձևի փոխարինումը հոգնակիով խոսքը դարձնում է բռնազբոսիկ և նպատակահարմար չէ:

3) Նյութական իմաստ ունեցող բառերի հոգնակին նշանակում է կա՛մ առանձին տեսակներ (ջրե՛ր՝ ջրի զանազան տեսակներ), կա՛մ այդ նյութի մեծ քանակություն (ջրե՛րք բարձրացան):

4) Երևույթների անունների հոգնակին ցույց է տալիս տրվյալ երևույթի հաճախակի կրկնություն. օրինակ՝ անձրևներ, սառնամանի՜ֆներ, շոգե՛ր և այլն:

Գրիգորեն՝ (ինչպես նաև դերանվանական մեռո՛նֆ, ձե՛րոնֆ) տիպի հավաքական ձևերի գործածությունը հատուկ է խոսակցական լեզվին:

Առաջադրանք 61. Հետևյալ գոյականները խմբավորել ըստ հոգնակի թվի կազմության, առաջին խմբում առանձնացնել այն գոյականները, որոնք ունեն կ՝ եզակի, կ՝ հոգնակի թվի

ձեեր, երկրորդ խմբում այն գոյականները, որոնք սովորաբար գործածվում են միայն եզակի, երրորդ խմբում նրանք, որ սովորաբար միայն հոգնակի են գործածվում:

Սեղան, աթոռ, տուն, գետ, կաթ, մածուն, օղի, գինի, տետրակ, քաղաք, հաց, ջուր, միս, նավթ, հեղուկ, բենզին, հագուստ, շիթ, կտորեղեն, մորթեղեն, կոշեղեն, լվացք, ընթացք, հեծանիվ, մեքենա, առօրյա, կենցաղ, վարք, խանդ, սեր, կրկնակոշիկ, շախմատ, կադր (աշխատող), կադր (կինոյի), աղ (կերակրի), աղ (քիմ.), թխվածք, մակարոն, հուզմունք, համակրանք, սար, անտառ, բլուր, սոճուտ, այգեստան, ծառաստան, մարքսիզմ, ռեալիզմ, ֆիզիկա, երկրագունդ, կոնյակ, քաթան, մրգեղեն, լիություն, առատություն, կշիռ, ջունգլի, ուսանողություն, աշակերտություն, ծծումբ, երկաթ, պողպատ, կուլիս, բեղ, ջերմություն, ցավ, հորանջ, զոդում, թթվասեր, կաթնաշոռ, թան, Կարպատներ, Ալպեր, վախ, Մոսկվա, ցորեն, Արաքս, Մասիս, վարսակ, գարի, տեղում, ականջօղ, ոչխարենի, Կովկաս, կարակուլ, հենք, խեցեղեն, խեցի, երկվորյակ, կահույք, մայրամուտ, արևածագ, քար, կիր:

Առաջադրանք 62. Բացատրել, թե ինչ իմաստով են գործածված ընդգծված գոյականները հոգնակի թվում, նշել եզակիից ունեցած իմաստային տարբերությունները:

1. Այն օրվանից շատ ջրեր են հոսել: Գարնանը ջրերը բարձրանում են, և գետերը վարարում: Ջրերի խանութը փակ էր: 2. Աշնան անձրևներին անմիջապես հաջորդեցին ցրտերը: Գետը սառցակալեց: Նոյեմբերի կեսերին եկավ առաջին ձյունը: Մենք նախապատրաստված չէինք, և սառնամանիքները մեզ հանկարծակիի բերեցին: Սովոր լինելով Արարատյան դաշտի շոգերին, մենք դժվարությամբ էինք տանում ցուրտը: 3. Մասիսի ձյուները հավերժության վկաներն են: 4. Հայկական կոնյակները տոնավաճառում մի քանի մեղալ շահեցին: Առանձնապես աչքի ընկան «Նաիրին», «Դվինը» և «Ախթամարը»: Իսկ գինիներից մրցանակներ ստացան «Արտաշատը» և «Օշականը»: 5. Հայաստանը հարուստ է հանքային ջրերով: Դրանք մի քանի տասնյակ տեսակ են և լայնորեն օգտագործվում են կենցաղում և բժշկության մեջ: Իսկ «Զեր-

մուկը» արտահանվում է մի շարք երկրներ: 6. Նրա հագին գույնզգույն շքեթից կարված մի հնամաշ շրջագգեստ էր: 7. Հայաստանը համարում են ֆաբի երկիր: Եթե անցյալում ֆաբը մեր ժողովրդի համար չարիք էր, ապա այժմ գիտության ու տեխնիկայի ընձեռած հնարավորության շնորհիվ դարձել է բարիք: Քարից կառուցում են քաղաքներ ու գյուղեր, քարից ստանում են քիմիական նյութեր և մանրաթել: Հայաստանի գույնզգույն տուֆերը, մարմարները և բազալտները այժմ կարելի է տեսնել մեր միության շատ քաղաքներում:

Առաջադրանք 63. Ցո՛ւյց տալ, թե իմաստային-ոճական ինչ նրբություններ են արտահայտում ընդգծված բառերը:

1. Այդ մեղեդուն կեցցին իրենց ձայնը հազարավոր մոգեր: 2. Եթե չի նշանակված հականե-անվանե բոլոր նախարարների անունը՝ ուրեմն պետք է հասկանալ, որ բոլորը չեն մասնակցել: 3. Նա հենց դրա համար էլ ուղարկել է Դենշապուհին, որ ճնշումներով թուլացնի հայերին: 4. Ե՞րբ և ինչո՞վ պիտի փրկվի նա իր ոչ մի դար չդադարող պայքարներից ու արյունահեղություններից: 5. Արտակի և Անահիտի կառուները, խանդավառանքները, սերերը հառաչելով միացան իրար և մարեցին: 6. Արծվիին զվարճացնում էին Մարտիրոսի տարօրինակ փիլիսոփայությունները: 7. Ամենքը գիտեին Հազկերտի խելագարությունները:

(Դ. Դեմիրճյան)

Առաջադրանք 64. Նշել, թե իմաստային և ոճական ինչ տարբերություններ կան բերված բառերի եզակի և հոգնակի ձևերի միջև: Այդ ձևերով կազմել նախադասություններ:

անկարգություն

քաջություն

արև

երկիր

լայնություն

ընկերություն

փիլիսոփայություն

անկարգություններ

քաջություններ

արևներ

երկրներ

լայնություններ

ընկերություններ

փիլիսոփայություններ

Առաջադրանք 65. Յո՛ւյց տալ բերված հոգնակի ձևերի ոճական տարբերությունները, նշելով, թե նրանցից որը ինչ գործառական ոճում է սովորաբար գործածվում:

ձեռներ

ոտներ

գյուղացիք

քաղաքացիք

վանեցիք

պարոնայք

տիկնայք

երեխեր

տղերք

անգղներ

յայսրներ

արկղներ

ձեռքեր

ոտքեր

գյուղացիներ

քաղաքացիներ

վանեցիներ

պարոններ

տիկիներ

երեխաներ

տղաներ

անգղեր

կայսրեր

արկղեր

Առաջադրանք 66. Փակագծում տրված գոյականները դնել անհրաժեշտ թվով (եզակի կամ հոգնակի), բացատրել կատարված ընտրությունը:

Նա անհագ ձգտում ուներ (գիտելիք) հանդեպ: Պետական քննությունների ժամանակ ուսանողը ցուցաբերեց խոր (գիտելիք): Արարատը և Արագածը ծովի մակերևույթի նկատմամբ տարբեր (մակարդակ) ունեն: Կոմերիտականները մըշտապես զբաղվում են իրենց քաղաքական (մակարդակ) բարձրացմամբ: Մեզ համար տարօրինակ էր, որ այդ երկրում բեռնակիրները ծանրոցները տանում էին (զուլս) դրած: Քանի (գարուն) անցել այդ օրից, բայց իմ հիշողության մեջ դեռ թարմ է այդ դեպքը:

Առաջադրանք 67. Տրված բառերով տեքստ կազմել, դրանք գործածելով եզակի կամ հոգնակի:

ամառ, գարուն, աշուն, ձմեռ, աշնանացան, գարնանացան, երկինք, արև, հող, ցեղ, փայլ, ընդարձակություն, բնություն, կնիք, ուժ, գիտություն:

Առաջադրանք 68. Բացատրել ընդգծված բառերի իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները:

1. Գյուղացիությունը նույնպես սկսեց արձագանքել բան-վորական հուզումներին: Պովոլժիեում հաճախակի դարձան գյուղացիների հարձակումները կալվածքների վրա և դրանց բռնագրավումը:

2. Ամառային արձակուրդներին շատ ուսանողներ շինչո-կատներին կազմում մեկնում են աշխատանքի: Ուսանողությու-նը պայքարում է գիտության բարձունքներին տիրանալու հա-մար:

3. Խառնութեամբ նոր կոշկեղեն էին ստացել: «Մասիս» ֆիր-մայի արտադրած կանացի կոշիկները մեծ պահանջարկ ունեն: (Լրագրերից)

Առաջադրանք 69. Յո՛ւյց տալ, թե իմաստային-ոճական ի՛նչ նրբերանգներ ունեն եզակի թվով գործածված գոյական-ները: Փոխարինել դրանք հոգնակիով և նշել կատարվող իմաս-տային փոփոխությունը:

Գայլն ամպօր է ման գալիս: Շունը մարդու բարեկամն է: Շունը շան թաթ չի կծի: Վախեցիր մարմանդ ջրից (Առածա-նի): Այստեղով միայն հետիոտունը կարող է անցնել: Մեր սա-րերի անտառներում միայն կաղնի է աճում:

ԱՆՁԻ ԵՎ ԻՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում գոյականները բաժանվում են երկու խմբի՝ անձերի և իրերի անուններ: Առաջինների համար գործածվում է ո՞վ, երկրորդների համար՝ ի՞նչ հարցը: Ուղիղ խնդրի պաշ-տոն կատարելիս այս երկու կարգի անունները սովորաբար հանդես են գալիս տարբեր հոլովաձևերով՝ Ծս տեսա Գրիգո-րին, Ծս տեսա Ծրեանը: Սակայն կան անձերի և իրերի անուն-ների հոլովական ձևավորման որոշ յուրահատկություններ:

ա) Անձերի ուղիղ խնդրի պաշտոն կատարող անունները կարող են հանդես գալ և՛ ուղղականաձև, և՛ տրականաձև՝ Մի մարդ տեսա, Տեսա մի մարդու, որ ինձ ծանոթ թվաց, Տե-սա քո նկարագրած մարդուն: Ինչպես ցույց են տալիս օրի-նակները, ուղիղ խնդրի պաշտոնով հանդես եկող բառը գոր-ծածվում է ուղղականաձև, եթե անորոշ է, չի շեշտվում և չի

բնութագրվում, բայց ստանում է տրականին հատուկ հոլովական վերջավորություն, եթե որոշվում է, շեշտվում, բնութագրվում:

բ) Հայերենում տատանում է նկատվում կենդանիների անունների հոլովաձևերի ընտրության մեջ. դրանք ավելի հաճախ գործածվում են անձերի և ավելի քիչ՝ իրերի անունների ձևով: Այս անունների դեպքում ուղիղ խնդրի հոլովաձևի ընտրությունը երբեմն կախված է խոսողի վերաբերմունքից. անորոշ առման դեպքում գործում է ա կետի տակ բերված ընդհանուր կանոնը. որոշյալ առման դեպքում հարցը որոշվում է խոսողի կողմից. Փայլը ոչխարը տառավ և Մեռ շանն սպանեցին զուգահեռ կառույցներից երկրորդի դեպքում խոսողը շանն անձնավորում է, իր վերաբերմունքն ավելի ուժեղ արտահայտում:

Առաջադրանք 70. Փակագծերում տրված գոյականները դնել համապատասխան ձևով, նշել անձի և իրի առումները:

Այդ միջոցին մի պառավ կին (հորթ) էր փնտրում դաշտի միջին: Նա մի (երեխա) էր փնտրում, որ ջրի ուղարկի: Ընկերս անտառից մի (եղնիկ) էր բերել: Երեխաներն անչափ սիրում էին այդ անմեղ ու սիրուն (կենդանի): Հովը մեղմիկ շոյում էր (ծաղիկ, խոտ): Մացակը երկու (բանվոր) ուղարկեց իր առանձնատան վրա աշխատելու: Պարտիզանները ոչնչացրին հիսուն (զինվոր) և խլեցին մեծ քանակությամբ ռազմամթերք: Ուսումնական տարին կիսվել է, իսկ նրանք անընդհատ (չոկատավար) են փոխում:

ՀՈԼՈՎՆԵՐ

Հոլովների գործածության և հոլովական զուգահեռ ձևերի ոճական օգտագործման մի քանի դեպքեր արժանի են հատուկ ուշադրության:

1) Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենում ամենատարածվածը ի հոլովումն է. ի-ով ձևերը երբեմն կարող են հանդես գալ մյուս հոլովումների համապատասխան ձևերի փոխարեն: Ի-ով ձևերի այսպիսի գործածությունը մեծ մա-

սամբ հատուկ է խոսակցական լեզվին. այսպես, օրինակ՝ քն-
կերի, գառի ձևերը կարող են հանդիպել խոսակցական լեզ-
վում կամ օգտագործվել գեղարվեստական գրականության
մեջ ոճավորման նպատակով. մյուս ոճերում այդպիսի գոր-
ծածությունը համարվում է շեղում գրական լեզվի կանոններից
և հանձնարարելի չէ։ Դստեռ, սիրո, սգո (սգո միտինգ) ձևերը
գրքային երանգ ունեն և ընկալվում են որպես բարձր ոճին
հատուկ ձևեր։ Սրանցից սիրո ձևի փոխարեն սերի ձևն ընդ-
հանրապես հանձնարարելի չէ (Հ. Թումանյանն այն գործածում
է ժողովրդական խոսակցական լեզվին հատուկ ձևով՝ Վա՛յ
քո սերին, քո յարին)։ Գրքային երանգ ունեն նաև ուղղակա-
նում ի-ով վերջացող բազմավանկ բառերի, հատկապես հա-
տուկ անունների և օտարազգի բառերի ի-ով ձևերը՝ հակառակ
խոսակցական երանգ ունեցող ու-ով ձևերի. օրինակ՝ Շամա-
խիի փոխանակ՝ Շամախու, Տոբիշելիի փոխանակ՝ Տոբիշելու
և այլն։

2) Երբեմն հոլովական տարբեր ձևերը կարող են գործած-
վել մերձավոր իմաստներով, ինչպես նաև հոլովական մի ձևի
փոխարեն կարող է հանդիպել մի ուրիշ ձև՝ ոճական կամ
իմաստային նուրբ տարբերությամբ։

ա) Բացառականը կարող է ձևավորել ենթական և թւղիղ
խնդիրը՝ ցույց տալով ամբողջի մաս. օրինակ՝ Արյունից ցայ-
տեց վրան, Ես հաշակեցի հացից։ Համապատասխան Արյունը
ցայտեց վրան, Ես հաշակեցի հացը նախադասությունները
ցույց են տալիս ողջ արյունը, ողջ հացը։ Այս նույն ձևով էլ
Ես պսակ հյուսեցի ծաղիկներից նախադասությունը նշանա-
կում է ծաղիկներից որոշ ընտրություն, մինչդեռ Ես պսակ
հյուսեցի ծաղիկներով նախադասությունը ցույց է տալիս
պարզապես, թե ինչով է պսակ հյուսվել, չի նշվում, որ ընտ-
րություն է կատարվել։ Առաջին դեպքում ծաղիկներն առնվում
են մասամբ, երկրորդ դեպքում՝ ամբողջովին։

բ) Տեղ ցույց տվող բառերի դեպքում դժվարանում է ուղիղ
և թեք հոլովաձևերի միջև ընտրություն կատարելը։ Այսպես,
հավասարապես հնարավոր են Ես դիմեցի դատարան և Ես դի-
մեցի դատարանին կառույցները։ Տարբերությունն այն է, որ
առաջին դեպքում դատարանն առնվում է որպես տեղ (Ես դի-
մեցի դատարան Հարող է նշանակել նաև «Ես ուղղվեցի դա-

տարան, ես գնացի դատարան»), երկրորդ դեպքում՝ որպես կազմակերպություն, հիմնարկ, պաշտոնական անձերի ամբողջություն: Բնականաբար դիմումով դատարանի՝ն պետք է դիմել և ոչ դատարան՝ն:

գ) Տեղ արտահայտելու համար կարող է օգտագործվել ոչ միայն ներգոյականը, այլև տրականը. առաջինը ցույց է տալիս մի բանի մեջ, երկրորդը մի բանի վրա՝ անմիջապես կպած: Երկրորդ դեպքում տրականը երբեմն փոխարինվում է վրա հետադրությամբ, այն տարբերությամբ, որ տրականը նշանակում է անմիջապես կպած լինելը, շոշափում, իսկ վրա-ն կարող է նշանակել նաև ոչ անմիջապես կպած և, սրա հետ կապված, փոխաբերական իմաստ ստանալ: Հաճախ տարբերությունը երեք ձևերի միջև ակնհայտ է. օրինակ՝ նստած էր գլխում (գլխին, գլխի վրա): Կան դեպքեր, երբ ներգոյականը չի գործածվում. օրինակ՝ ծառին (նստած էր ծառին) ձևը գործածական է, ծառում ձևը՝ ոչ: Սակայն կան դեպքեր էլ, երբ երկու ձևերն էլ գործածական են, և հարկավոր է նկատի ունենալ հիշյալ տարբերությունը. օրինակ՝ Գրիգորը պառկած էր անկողնում, և Գրիգորը պառկած էր անկողնին նախադասությունների միջև տարբերություն կա. առաջինը ցույց է տալիս, որ Գրիգորը վերմակով ծածկված պառկած էր, իսկ երկրորդի մեջ նշվում է, որ Գրիգորը հենց այնպես պառկել էր անկողնին: Երկրորդ դեպքում հնարավոր է փոխարինումը վրա կապով, առաջին դեպքում՝ ոչ:

դ) Ժամանակը կարող է արտահայտվել տարբեր ձևերով՝ հավաքվեցին գիշերը և գիշերով, հինգ օրում և հինգ օր նամակ գրեցին և այլն: Այս դեպքում պետք է հիշել, որ բառն անփոփոխ ձևով դրվելիս առնվում է իր ողջ ծավալով, մյուս դեպքերում՝ այս կամ մասնակի հարաբերությամբ. գիշեր ձևն առնվում է առանց տեղումթյան, գիշերով ձևը՝ որոշ տեղումթյամբ. հինգ օր ձևը ցույց է տալիս, որ հինգ օր անընդհատ նամակ են գրել, հինգ օրում ձևը՝ որ նամակ է գրվել հինգ օրվա ընթացքում:

ՀՈՒՈՎԱԶԵՎԵՐԻ ԵՎ ԿԱՊԵՐԻ ՀԱՄԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ

Որոշ հոլովածներ կապերին զուգահեռ գործածություն ունեն։ Զուգահեռ հոլովածների և կապերի իմաստային առընչության, գործածության և ոճական հնարավորությունների հարցերը կարևոր նշանակություն ունեն։ Վերևում նշվեց, որ տեղ արտահայտելիս արականը կարող է ուղեկցվել վրա կապով։ Այստեղ ավելացնենք, որ որոշ դեպքերում վրա-ի գործածությունը կա՛մ անտեղի է, կա՛մ էլ շեշտում է խոսակցական ոճը. օրինակ՝ դու նայեցիր ինձ վրա և դու նայեցիր ինձ։

Քննենք հոլովածների և կապերի համանշտության մի քանի այլ դեպքեր։

1) Ներգոյականը սահմանափակ գործածություն ունի. ներգոյականի ձևեր չունեն անձերի անունները, անձի առում ունեցող կենդանական անունները, վերացական անունների մեծ մասը և մի շարք նյութական անուններ։ Այսպես՝ հնարավոր չեն Գրիգորում, կովում, շաբոմում, անունում, այլև ծառում, փառում և նման ձևերը։ Այս բոլոր դեպքերում հանդես է գալիս մեջ կապը՝ Գրիգորի մեջ, կովի մեջ, շաբման մեջ, անվան մեջ, ծառի մեջ, փառի մեջ և այլն։ Սակայն կան դեպքեր, երբ ներգոյականը և մեջ հետադրությամբ կառույցները կազմում են զուգահեռ ձևեր՝ փաղափում և փաղափի մեջ, գյուղում և գյուղի մեջ և այլն։ Այս դեպքերում ներգոյականը ցույց է տալիս ընդհանրապես տեղ, իսկ մեջ-ը շեշտում է հատկապես մեջը գտնվելը։ Մեջ հետադրության գործածությունը իմաստային այդպիսի շեշտվածություն է տալիս նաև փաղափ և փաղափի միջով, փաղափից և փաղափի միջից զույգերի դեպքում։

2. Զուգահեռ գործածություն կարող են ունենալ տրականն առանձին և նամար հետադրության հետ։ Մեծ մասամբ սրանք փոխարինելի չեն, և թե մանավանդ համար-ը խիստ կերպով շեշտում է գործողության՝ մեկի օգտին կատարվելը. Գիրքը ֆեզ համար եմ բերել։ Սակայն որոշ դեպքերում, հատկապես գործողության նպատակ ցույց տվող դերբայական դարձվածների դեպքում, երկու գործածություններն էլ հնարավոր են. օրինակ՝ Մեկնեցին գնումներ կատարելու կամ կատարելու համար։ Այս դեպքերում հարկավոր է առաջնորդվել հետևյալ կանոններով. ա) եթե տվյալ նախադասության մեջ կա նույ-

նաձև հոլովով մի այլ բայանուն կամ դերբայական դարձված, նպատակահարմար է օգտագործել համար հետադրությամբ ձևը. օրինակ՝ Գրություն ուղարկվեց նոր շենքի կառուցման (նոր շենք կառուցելու) հարցը լուծելու համար. բ) համար-ով կառույցը պետք է օգտագործել մեկի օգտին կատարվելը շեշտելու դեպքում:

3) Ննթակայի հետ համատեղ գործողներին նշանակելու համար երբեմն հնարավոր է երեք տեսակ զուգահեռ կառույցների գործածություն՝ եւ փաղափ նաեւ պարհվեց ընկերներով, ընկերների հետ կամ ընկերների հետ միասին: Պետք է հիշել, որ ընկերներով ձևը շեշտում է բոլոր ընկերներին. այդ իմաստը լավ երևում է տնով-տեղով, ընտանիքով նաեւ պարհվեց փաղափ արտահայտություններից: Որոշ դեպքերում էլ հետ-ը ցույց է տալիս պարզապես ուղեկցում. օրինակ՝ նաեւ պարհ ընկավ ոչխարի հետով և ոչխարի հետի հետ, ընկերների հետ և ընկերների հետ միասին կառույցներից առաջինը նշում է ուղեկցում, երկրորդն ավելի է շեշտում միասնությունը (որ գործողությունն առանց ընկերների չի կատարվել):

Տրականի և հետ-ով կառույցի զուգահեռ գործածություն հնարավոր է որոշ բայերի թելադրությամբ. հետ-ով կառույցը պետք է օգտագործել գերազանցապես անձերի, տրականով կառույցը՝ իրերի անունների դեպքում. Ժանդաքցավ Հակոբի հետ, մի մարդու հետ և այլն, բայց՝ ժանդաքցավ հարցին, զրբին և այլն:

4) Ժամանակի տևողություն արտահայտելու համար կարող են օգտագործվել ներգոյականը և ընթացքում-ով կառույցը՝ հինգ ժամում և հինգ ժամվա ընթացքում: Երկրորդ դեպքում ժամանակի տևողության չափն ավելի է շեշտվում:

Առաջադրանք 71. Փակագծերում տրված զույգ ձևերից ընտրել մեկը և լրացնել բաց թողնված տեղերը: Պատճառաբանել ընտրությունը:

1. Երեխաներն արթնացել էին և (անկողնու, անկողնի) վրա նստած լսում էին մեծերի խոսակցությունը: 2) Վաղուց էր հասել մեծ քրոջ (մարդու, մարդի) գնալու ժամանակը: 3) (Մարդու, մարդի) մազերը փաղաքշվում էին թշնամու վայ-

րագությունը տեսնելիս: 4. (Ձյան, ձյունի) ծածկույթը իր տակ
 թաղել էր դաշտ ու ձոր: 5. (Ձյան, ձյունի) փաթիլները սպի-
 տակ թիթեռների պես ճախրում էին ձմեռային ցուրտ օդում:
 6. Նրա գլխին (ձյան, ձյունի) պես ճերմակ մի շալ կար:
 7. Բուրժուազիան (արյան, արյունի) մեջ խեղդեց Փարիզի
 կոմունան: 8. Մեր դասարանի աշակերտների մեջ շատ կան
 (ուսումի, ուսման) առաջավորներ: 9. Վերադաս կազմակեր-
 պությունների (ցուցման, ցուցումի) համաձայն գարնանացանի-
 նախապատրաստությունն սկսվել էր դեռ (ձմռանից, ձմեռ-
 վանից): 10. (Ամռան, ամառվա) կիզիչ արևը սևացրել էր
 պիտենրական ճամբարում հանգստացած աշակերտների մաշ-
 կը: 11. Ըստ հրամանատարության (ցուցման, ցուցումի)՝
 հարձակման նախապատրաստությունը կատարվում էր խիստ
 գաղտնի պայմաններում: 12. Հրաժեշտի (ժամվա, ժամի) ան-
 ձուկը համակել էր նրան: 13. Այդ (ժամանակի, ժամանակվա)
 մեր ընկերությունից քաղցր հուշեր են մնացել: 14. Բանաս-
 տեղծը պետք է զգա (ժամանակի, ժամանակվա) շունչը:
 15. Խնդիրն ունի (լուծումի, լուծման) երկու եղանակ: 16. Կու-
 տակված խնդիրների (լուծումին, լուծմանը) սպասում էին
 հազարավոր մարդիկ: 17. Արևմտյան Գերմանիայի շատ քա-
 ղաքներում դեռևս կան Վիլհելմ (կայսրի, կայսեր) արձան-
 ներ: 18. (Սգի, սգո) արարողությունը կարճ տևեց: 19. Ամուս-
 նու մահից հետո Արփենը երկար ժամանակ (սգո, սգի) մեջ
 էր: 20. Բանաստեղծի (սիրո, սիրու) երգերը մինչև այժմ էլ
 գերում են ընթերցողին: 21. Քո (սիրո, սիրու) համար քա-
 շում եմ փափագ, ո՛վ սիրուն, սիրուն: 22. (Հույսի, հուսո)՝
 մի վերջին շող լուսավորեց Մարկոս Ալիմյանի դեմքը: 23. Այն
 (տարվանից, տարուց) մենք բարեկամացանք, և մեր բարե-
 կամությունը շարունակվում է մինչև օրս: 24. Երկու (տար-
 վանից, տարուց) ավել էր, ինչ Արամից ոչ մի լուր չկար:
 25. (Մահի, մահվան) դիմաց՝ մահ, (արյունի, արյան) դի-
 մաց՝ արյուն: 26. Նրանք (արյամբ, արյունով) ապացուցե-
 ցին իրենց նվիրվածությունը հայրենիքին ու ժողովրդին:
 27. (Արյամբ, արյունով) ներկված բարիկադների վրա ծա-
 ծանվում էր կարմիր դրոշը:

Առաջադրանք 72. Բաց թողնված տեղերում տեղադրել փակագծերում բերված բառերի հոլովածները կամ համապատասխան կապային կառույցներ, նշել հնարավոր իմաստային կամ ոճական նրբությունները:

1. (Խավար) բարձրից ջուր էր թափվում: 2. Բարակ շիթով թափվում էր (քար), միապաղաղ կարկաշում: 3. Նա իր հետ դուրս էր տանում լապտերը և (գիշեր) ճոճվում էր լույսը: 4. (Գետին), հեռունները ձգվելով, քայլում էին ստվերները: 5. Ստվերները ձորերն ընկնելով, կրկին ելնելով, (պատ) նկարվելով, ցանկապատերի (ցից) բեկբեկվելով գնում էին: 6. Դուռը փակվեց և հաշող շունը մնաց (խավար): 7. Ոտքի (թաթեր) նա հետ-հետ գնաց, հանեց կոշիկները: 8. Նա պառկեց (անկողին) և նայեց (լուսամուտ): 9. Տանտերը գնաց անասուններին (ջրել): 10. Թե գիտես՝ (ինչո՞ւ, ինչի համար) ես եկել: 11. Հունիսին Արտաշը կնոջ (հետ, միասին) եկել էր, տասն օր մնացին հերանց տանը: 12. Այստեղ լավ է, (կանայք) աշխատանքի ենք գնում, հանդում լավ խոսում ենք, ծիծաղում: 13. Հովեկները շրջապատում էին նրան, և պատմում էր անցյալի (դեպքեր):

(Զ. Խալափյան)

Առաջադրանք 73. Ընդգծված բառերը փոխարինել կապային կառույցներով և ընդհակառակն, ցույց տալ կատարվող իմաստային փոփոխությունները:

1. Ապարանքի մի կողմի վրա գտնվող մի քանի նեղ պատուհանների մեջ միայն երևում էր նվազ լույս: 2. Ի՞նչ կյանք, ինչ աշխույժ, ինչ ոգևորություն էր թագավորում այն ժամանակ այդ տան մեջ, իսկ այժմ, որպիսի՝ մեռելություն... Կարծես թե իրոք մահվան ավերիչ ձեռքը ծանրացել էր այդ իշխանական դղյակին: 3. Մեծամասնությունը, ընդհակառակը, անում է այդ պահանջը նույնիսկ յուր հասարակ պարտավորությունը բարեխղճաբար կատարած ժամանակ: 4. Սևադա իշխանի համար անհաճո էր լսած լուրը: 5. Այո՛, անձնական գործի համար չեմ եկել Գարդման: 6. Եկել եմ քո օգնությունը խնդրելու առաջիկա ընդհարումների առաջն առնելու համար: 7. Եթե մինչև անգամ զուրկ լինեի տեսողությունից, այնուամենայնիվ կարող էի դարձյալ իմ հոգու աչիքերով գտնել այն

ճանապարհը, որ տանում է դեպի Գաղղմանա իմաստուն և հայրենասեր իշխանի դղյակը: 8. Տե՛ր Մարգարետունի, ես իրավունք չունիմ ստիպել քեզ բանալ քո սիրտն ինձ: 9. Հավ լուրեր եմ բերել քեզ, իշխա՛ն: 10. Բայց դու, իշխա՛ն, չէ՞ որ ապստամբեցիր նրանից և քեզ հետ էլ միասին բոլոր հյուսիսային գավառներն ապստամբեցրիր: 11. Ես քո աբխալից առաջին անգամ ապստամբեցի՝ նրան չար ճանապարհից զգուշացնելու:

(Մուրացան).

ԱԾԱԿԱՆԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

Ածականների բաղդատական և գերադրական աստիճաններն ունեն դրսևորման եղանակների որոշ տարբերություններ, որոնք համապատասխան ոճական հնարավորություններ են ստեղծում:

Գրքային երանգ ունի համեմատության այն եղանակը, որի դեպքում ածականի բաղդատական աստիճանը սովորաբար արտահայտվում է ավելի բառով, և համեմատելին զրոշվում է քան նախդիրով՝ Արարատն ավելի բարձր է, քան Արագածը: Ժողովրդախոսակցական լեզվում ավելի բառը սովորաբար բաց է թողնվում, և համեմատելին զրոշվում է բացառական հոլովով՝ Արարատն Արագածից բարձր է:

Գրքային է նաև գերադրական -գույն-ով ձևը, որ գալիս է գրաբարից և կարող է ավելացվել միայն որոշ բառերի վրա՝ մեծագույն, լավագույն, բարձրագույն և այլն: Ժողովրդախոսակցական և հատկապես բարբառային բառերից -գույն-ով գերադրական չի կարելի կազմել. այսպես, շաղ, զուլալ և նման բառերը -գույն-ով գերադրականներ չունեն: Գերադրական ամեն- կազմիչը ավելի ընդհանուր բնույթ ունի, և նրա մեջ համեմատությունն ավելի է շեշտված, մինչդեռ -գույն-ը հաճախ արտահայտում է միայն հատկության բարձր աստիճան՝ առանց ընդգծված համեմատության. օրինակ՝ Նա իմ լավագույն բարեկամն է և Նա իմ ամենալավ բարեկամն է: -գույն-ի դեպքում համեմատությունը կարելի է ընդգծել՝ համեմատելի խնդիրը դնելով բացառական հոլովով՝ Նա իմ բա-

բեկամներից լավագույնն է: Ծրբեմն՝ բացառականով խնդրի
փոխարեն կարող է դրվել մեջ հետադուծյամբ խնդիր՝ նա
իմ բարեկամների մեջ լավագույնն է:

Ածականի այն ձևը, որ ցույց է տալիս հատկություն բա-
ձրը չափը՝ առանց ընդգծված համեմատության, կոչվում է
բացարձակ գերադրական:

Բացարձակ գերադրականը կարող է արտահայտվել ոչ
միայն -գույն-ով, այլ շատ, խիստ, չափազանց և այլ բառե-
րով՝ շատ բարձր, խիստ բարձր, չափազանց բարձր և այլն:
Չափազանցը հաճախ բացասական երանգ է տալիս: Բարձր
ոճին հատուկ կազմություններ են գեր(ա)- և մեծ(ա)- բա-
ղադրիչներով կազմությունները՝ գերազնիվ, գեր(ա)հզոր, գե-
րապայծառ, մեծահզոր, մեծապայծառ և այլն:

Առաջադրանք 74. Ստորև բերվող նախադասություններում
ցույց տալ ածականների համեմատության աստիճանների
իմաստային-ոճական առանձնահատկությունները: Նշել հնա-
րավոր տարբերակները:

1. Այս անգամվա հարձակումն ավելի ուժգին էր, քան
նախորդը: 2. Ամազոնը աշխարհի բոլոր գետերից ջրառատ է:
3. Ավելի գեղատեսիլ վայր, քան Դեբեդի ձորը, ես չեմ տեսել:
4. Խաղաղասիրական ուժերը օրեցօր առավել միասնական,
առավել հզոր ու վճռական են դառնում, իսկ նրանց գործո-
ղությունները՝ ավելի ու ավելի արդյունավետ: 5. Բարձրա-
գույն կրթություն ստանալով՝ բժիշկ Նսայանը մեկնում է
գյուղ աշխատելու: 6. Աշխարհի ամենաբարձր գագաթը Ջո-
մոլունգման է: 7. Արարատը շատ բարձր սար է: 8. Նախա-
գահը խիստ բարկացկոտ տոնով հրահանգներ էր տալիս բրի-
գադավարներին: 9. Մեծագույն ուրախությամբ երկիրն իմա-
ցավ դեպի տիեզերք կատարած մարդու առաջին թռիչքի մա-
սին: 10. Ամենից հուզիչը զոհվածի մոր խոսքն էր, որ նա
ասաց հուշարձան-կոթողի բացման օրը: 11. Բարձր, շատ
բարձր են իմ հայրենիքի լեռները, չափազանց սառն ու զո-
վասուն՝ նրա անապական աղբյուրները և խիստ գգվիչ՝ նրա
շնկշնկան հովը:

Առաջադրանք 75. Փորձել հետևյալ ածականներից կազ-
մել գերադրական իմաստի արտահայտման բոլոր հնարավոր
: 96

ձևերը: Յո՛ւյց տալ, թե որ բառից ինչպիսի գերադրական չի կազմվում և ինչու:

Լավ, մեծ, երկար, լայն, կարճ, հաստ, բարձր, ցածր, մեծ, փոքր, խելոք, հիմար, տաղանդավոր, կարմիր, սպիտակ, դեղին, կապույտ, խոշոր, անսահման, սովոր:

Առաջադրանք 76. Գրել մի շարք հարաբերական ածականներ և մակբայներ, որ կարող են համեմատության աստիճաններ կազմել:

ԹՎԱԿԱՆԻ ՈԾԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ոչ միայն մեկ թվականի, այլև մյուս թվականների հետ գոյական անունները սովորաբար դրվում են եզակի թվով: Սակայն կան դեպքեր, երբ նրանք կարող են դիտվել հոգնակի թվով. հոգնակին հանդես է գալիս հատկապես երկու դեպքում. ա) երբ հարկավոր է շեշտել, որ թվարկվող առարկաներն առնվում են առանձին-առանձին. օրինակ՝ Գործադրանքում յուրացվում են հինգ մասնագիտություններ (այսինքն՝ հինգ տարբեր մասնագիտություններ), բ) երբ գոյականը և թվականն իրարից հեռանում են այլ բառերով. օրինակ՝ Այդ աշխատությունը գրել են հինգ նշանավոր հեղինակներ:

Բաշխական թվականների կրկնավոր ձևերը (մեկ-մեկ, երկու-երկու, երեք-երեք և այլն) խոսակցական երանգ ունեն, մինչդեռ՝ ական ածանցով կազմվածները (մեկական, երկուական, երեքական և այլն) գրքային են:

Առաջադրանք 77. Փակագծերում տրված բառերը դնել անհրաժեշտ թվով, պատճառաբանել ընտրությունը:

1. Գրադարանն ամեն տարի՝ հարստանում է 200—300 (գիրք): 2. Գյուղում մնացել (...) ընդամենը 100 (բնակիչ): 3. Շինարարության վրա աշխատում (...) (50 բանվոր): 4. Մեր գործարանի 10 առաջավոր (բանվոր) մեկնեցին Մոսկվա: 5. Սպասումը տևեց հինգ (ժամ): 6. Այդ 5 (ժամ) շատ հուզումների ու խոհերի տեղիք (տալ): 7. Հազար (շեփոր հնչել) թող այս առավոտ, հազար (թմբուկ խփել) թող այս առա-

վոտ: 8. Համագումարի հազար (պատգամավոր)-ից 600-ը գյուղատնտեսության (առաջավոր) են:

Առաջադրանք 78. Հետևյալ քանակական թվականներից կազմել բաշխականներ, օգտագործելով և՛ ածանցման, և՛ բարդացման եղանակները, ստացված բառերով կազմել նախադասություններ:

1, 2, 5, 7, 10, 50, 100, 1000:

ԴԵՐԱՆՎԱՆ ՈՇԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Դերանունները ոճական լայն հնարավորություններ ունեն: Ամենից առաջ նշենք դերանունների մի կարևոր առանձնահատկություն, որի անտեսումը հանգեցնում է ոճական սխալների: Հայտնի է, որ դերանունների բուն արժեքը որոշվում է խոսքի հանգամանքներով՝ խոսքի հետ անձերի ու իրերի ունեցած հարաբերությամբ և խոսքի մեջ դերանունների հետ կապված բառերի նշանակությամբ: Այսպես, օրինակ՝ ցուցական դերանունները կա՛մ որոշում են առարկաներին ըստ խոսողի և լսողի նկատմամբ գրաված դիրքի (Սա իմն է, դա՝ քոն), կա՛մ ակնարկում դրանք մերձավոր բառերի միջնորդությամբ (Մի նո՛ւ ուղևո՛ւ երեւո՛ց: Նա գրավեց բոլորի ուշադրությունը): Այս հանգամանքը նկատի ունենալով պետք է ըստ հնարավորին խուսափել երկիմաստ գործածություններից: Այսպես, երկիմաստություն է առաջանում, երբ նախադասության մեջ կան մեկից ավելի այնպիսի բառեր, որոնց նշանակած առարկաները (անձերը, իրերը) դերանունը կարող է ակնարկել՝ «Հայրը նկատեց որդուն. նա կանգնած էր պատուհանի մոտ»։ Նա դերանունը այս դեպքում գործածված է ուղի բառի փոխարեն, բայց կարող է հասկացվել նաև ճայ՛ բառի փոխարեն: Այն բառը, որի նշանակած առարկան դերանունն ակնարկում է, չպետք է շատ հեռու լինի նրանից, այլապես կարող է տեղիք տալ թյուրիմացության. այսպես, օրինակ՝ «Պատվիրակության բանաձևը, որ պատրաստվում էր մեկնելու, հանձնվեց նախագահին» նախադասության մեջ ու-ը վերա-

քերում է պատվիրակությանը, բայց անջատված է բանաձևը բառով, որ դժվարացնում է անմիջական ըմբռնումը:

Այժմ նշենք դերանունների ոճական կիրառության մի քանի կարևոր դեպքեր:

ԱՆՁՆԱԿԱՆ , ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

1) Երկրորդ դեմքի եզակի դու ձևի փոխարեն քաղաքավարական իմաստով գործածվող հոգնակի Դու՛մ ձևը ունի նաև պաշտոնականության երանգ, շեշտում է խոսակիցների հարաբերությունների պաշտոնական բնույթը. համապատասխանաբար դու-ն Դու՛մ-ի համեմատությամբ ունի նաև մտերմական երանգ:

Առաջին դեմքի եզակի ես ձևի փոխարեն կարող է գործածվել մե՛նք ձևը: Սա արվում է գիտական հաղորդումներում և աշխատություններում՝ սեփական անձը շատ չընդգծելու նպատակով: Հոգնակիի դեպքում խոսողի անձը կարծես ձուլվում է շաղերին և կորցնում ինքնագովության հնարավոր հրանգը. օրինակ՝ Ներկա աշխատության մեջ մե՛նք նպատակ ենք դրել պարզաբանելու տեսական և գործնական կառուցումն ունեցող մի հարց: Նույն նպատակով խոսողը իր մասին կարող է խոսել երրորդ դեմքով՝ ես-ի կամ մե՛նք-ի փոխարեն գործածելով հեղինակը, զեկուցողը բառերը, երբեմն էլ տողերիս գրողը, այս տողերի հեղինակը արտահայտությունները. Ներկա աշխատության մեջ հեղինակը փորձել է...

2. Անձնական դերանունների մի դեմքը կարող է գործածվել մյուսի փոխարեն: Այսպես, խոսողը կարող է իրեն դիմել իբրև խոսակցի, ինչպես ասում են՝ ինքն իր հետ խոսել: Ամո՛ք քեզ, Մոսի՛, թու՛ք ու նախատինք, ամոք քեզ նման գոված իգիթին (ՀԹ): Ինչպես տեսանք, խոսողը կարող է ինքն իր մասին խոսել նաև 3-րդ դեմքով. այս դեպքում նա դերանվան փոխարեն կարող են հանդես գալ խոսողի անունը կամ նրա դերը բնութագրող տարբեր անվանումներ: Վերևում նշվեց, որ գիտական աշխատության կամ զեկուցման մեջ ես-ի փոխարեն կարող են գործածվել հեղինակը, զեկուցողը, երբեմն էլ տողերիս գրողը, այս տողերի հեղինակը և այլն: Որոշ դեպ-

քերում էլ խոսողը կարող է գործածել իր անունը կամ ազգանունը՝ արտահայտելով, ասենք, իր վիրավորված լինելը՝ Հակոբյանն այն մարդը չէ, ու այդպես անպատվի: Արհամարհանքի նշան է համարվում ներկա անձնավորությանը անմիջապես դիմելու փոխարեն նրա մասին ուրիշների հետ երրորդ դեմքով խոսելը: Օրինակ՝ Այդ Գրիգորյանին ասա, ո՞ր այլևս ինձ չանհանգստացնի (ասվում է Գրիգորյանի ներկայությամբ):

3) Երրորդ դեմքի նա անձնական գերանունը միաժամանակ ցուցական գերանուն է: Այս հանգամանքը առաջացնում է նա-ի գործածության երկվություն: Եզակի թվում նա-ն սովորաբար գործածվում է անձերի համար՝ «Վերջապես տեսա Պետրոսյանին. նա հաճելի դիմագծերով մի մարդ էր»: Իրերի համար գերադասելի է նա-ի փոխարեն գործածել այն գերանունը՝ «Վերջապես տեսա նշանավոր տունը. այն գտնվում էր քաղաքի կենտրոնում»: Քանի որ այն-ը հոգնակի շունի, նրանք-ը կարող է գործածվել և՛ իրերի, և՛ անձերի անունների փոխարեն՝ «Հարևան սենյակում ես տեսա երեխաներին. նրանք թերթում էին պատկերազարդ գրքերը». «Հարևան սենյակում գտա իմ որոնած գրքերը. նրանք դրված էին սեղանի տակ»: Իրերի անունների փոխարեն հոգնակի թվում հաճախ գործածվում են սրանք, դրանք ձևերը՝ «Հարևան սենյակում գտա իմ որոնած գրքերը. սրանք (դրանք) դրված էին սեղանի տակ»: Եզակի թվում սա, դա ցուցական գերանունները ընդհանրապես կարող են խոսքի մեջ գործածվել և՛ նա, և՛ այն գերանունների փոխարեն՝ «Վերջապես տեսա Պետրոսյանին. սա (դա) հաճելի դիմագծերով մի մարդ էր», «Վերջապես տեսա նշանավոր տունը. սա (դա) երկհարկանի մի շենք էր»:

4) Տարբեր դեմքերի անձնական գերանուններն ընդգծելու համար սովորաբար նրանց հետ օգտագործում են ինքս, ինքդ, ինքը բառաձևերը՝ ես ինքս, դու ինքդ, նա ինքը: Նույն նպատակով կարող է օգտագործվել հենց բառը կամ կրկնվել գերանունը. հենց ես կամ ավելի հուզական երանգով՝ ե՛ս, ե՛ս. հենց դու կամ դո՛ւ, դո՛ւ: Հնարավոր է մի քանի միջոցի զուգակցում՝ դո՛ւ, հենց ինքդ. դո՛ւ, հենց դու. դո՛ւ, դու ինքդ:

Ինքը գերանունը և նրա թեք հոլովաձևերը օգտագործվում են միևնույն նախադասության մեջ ենթակային երկրորդ ան-

գամ նշելու համար, եթե ենթական 1-ին կամ 2-րդ դեմքով չէ. «Նա միայն իրեն է սիրում», «Ծսասերը բացի իրենից ուրիշ ոչ ոքի չի ճանաչում», «Այդ կինն իրենով հիացած էր» և այլն: Անթույլատրելի է ինքը դերանվան և նրա թեք հոլովաձևների գործածությունը նա դերանվան և սրա թեք հոլովաձևների փոխարեն տարբեր ենթակաների դեպքում. ճիշտ չէ ասել՝ «Գրիգորը բարի մարդ էր. իրեն (փխկ. նրան) բոլորը սիրում էին»:

Զպետք է խառնել իր և իրեն հոլովաձևերը. առաջինը անձնական դերանվան սեռական հոլովաձևն է, երկրորդը՝ հայցական-տրականը. «Նա ստացավ իր բոլոր պատվերները», «Նա ստացավ իր պատվիրած բոլոր գրքերը», բայց «Նա սիրում է միայն իրեն», «Նա իրեն ասում էր՝ անպայման պետք է գնալ» և այլն: Ծիշտ չէ իրեն ձևի գործածությունը «Նա ստացավ իրեն բոլոր պատվերները», «Նա ստացավ իրեն պատվիրած բոլոր գրքերը» նախադասություններում:

Ինքն իրեն կապակցությունն օգտագործվում է մակբայական արժեքով՝ մեն-մենակ, մեկուսի իմաստով՝ «Նա ինքն իրեն խոսում էր»: Խոսակցական լեզվում ինքն իրեն-ը կարող է փոխարինվել իրեն — իրեն կապակցությամբ՝ «Նա իրեն-իրեն խոսում էր»:

5) Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռական հոլովաձևերը հաճախ կարող են փոխարինվել ս, դ հոգերով՝ «Վերցրի իմ գիրքը կամ գիրքս», «Վերցրիր քո գիրքը կամ գիրքդ»: Ավելի հազվադեպ է ը կամ ն հոգի գործածությունը ստացական արժեքով. վերցրեց գիրքը կապակցությունը տարիմաստ է. գիրքը ձևը այստեղ կարող է նշանակել և՛ «իր գիրքը», և՛ «նրա գիրքը», և՛ պարզապես «այն գիրքը»: Դերանվանական կառույցների դեպքում պատկանելիությունն ավելի է շեշտվում, քան հոգավոր ձևերի դեպքում: Հոգավոր ձևերը ավելի հատուկ են խոսակցական լեզվին: Գրական լեզվի համար հանձնարարելի չէ անձնական դերանունների սեռական հոլովաձևերի և ստացական հոգերի համատեղ գործածությունը, որ պատահում է ժողովրդախոսակցական լեզվում՝ իմ գիրքս, իմ սիրելիս, քո հայրդ և այլն:

Երկրորդ դեմքի դերանվան տրական քեզ հոլովաձևը ա՛յ կոչական բառի հետ միասին գործածվելիս ունի զարմացա-

Վան ձայնարկության արժեք՝ Ա՛յ ֆեզ բան, Ա՛յ ֆեզ բարեկա-
մություն և այլն:

Անձնական դերանունների բացառական և գործիական հո-
լովներն ունեն կրկնակի ձևեր՝ ա-ով և առանց ա-ի՝ ինձնից —
ինձանից, ֆեզնից — ֆեզանից, մեզնից — մեզանից, մեզնով —
մեզանով, ձեզնից — ձեզանից, ձեզնով — ձեզանով: Սրանցից
ա-ով ձևերը ավելի բնորոշ են խոսակցական լեզվին: Խոսակ-
ցական լեզվին հատուկ ձևեր են նաև ներգոյական մեզանում,
ձեզանում ձևերը, որոնք ստացել են մակբայական արժեք և
գործածվում են մեզ մոտ, մեր կողմերում, ձեր կողմերում
իմաստով:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ցուցական դերանունները, զուգակցվելով միմյանց և
այլ բառերի ու բառաձևերի հետ, կարող են զրկվել բուն ցու-
ցական՝ արժեքից, կազմել դարձվածային կապակցություններ
ու արտահայտություններ, ստանալ իմաստային յուրահատուկ
արժեք. ա) ցուցական դերանունների առաջին և երկրորդ դեմ-
քերը միմյանց հետ զուգակցվելով, և, ու, կամ շաղկապների
օգնությամբ կամ առանց դրանց, ստանում են անորոշ դեր-
անվան արժեք՝ այս և այն, այս ու այն, այս կամ այն, սրան-
նեան և այլն. բ) այս, այդ ցուցականները ինչ-ի հետ դրվե-
լով ուժեղացնում են սրա իմաստը. Այդ ի՛նչ լավ բան է, Այդ
ի՛նչ բան է և այլն. գ) այն ցուցականը է-ի հետ զուգորդվե-
լով (այն է) ստանում է որոշ դեպքերում մեկնական (այսինքն
բառի) արժեք, այլ դեպքերում արտահայտում է զրեթե, հա-
մարյա իմաստը. օրինակ՝ «Այդ երկրի բանվոր դասակարգը,
այն է՝ պրոլետարիատը...», «Այն է պիտի ընկներ, բռնեցի» և
այլն. դ) բանն այն է, որ... կապակցությունը հաճախ գոր-
ծածվում է պատճառական շաղկապի արժեքով. «Քեզ այդ
մասին երկար ժամանակ նա չէր ուզում ասել. բանն այն է,
թե ամեն անգամ նրան համակում էր ամոթի զգացումը».
Հանձնարարելի չէ բանը նրանում է արտահայտությունը, որ
հաճախակի գործածվում է ռուսերենի համաբանությամբ. մո-
տավորապես նույն իմաստով կարող է հանդես գալ բանն էլ

ԵՆՆԵՂ այդ է կապակցութիւնը. ժխտական ձևով սրանց հա-
 մապատասխանում են բանն այն չէ, բանն այդ չէ (չի), այդ
 չէ բանը կապակցութիւնները. ե) շաղկապական արժեք ունի
 նաև առանց այն էլ կապակցութիւնը («Մի՛ ավելացնի նրա
 վշտերը, առանց այն էլ նա դժբախտ է»), որ կարող է հանդես
 գալ նաև մակբայական գործածությամբ («Պառավ Մարանի
 առանց այն էլ թշվառ կյանքը» (Ն-Դ), «Առանց այն էլ բար-
 կացած էր» և այլն). գ) այնպես, այնքան ցուցականները
 առանց ինչպես, ինչքան հարաբերակից բառերի, ինքնուրույն
 գործածությամբ ստանում են «շատ» կամ «ինչ» իմաստը.
 «Այնքան գեղեցիկ էր», «Այնպես լավ էր գոյուղում» և այլն.
 է) ինչպես որ այս ու այն, այս կամ այն կապակցութիւնները
 որոշի դերում հանդես գալով ունեն անորոշ դերանվան ար-
 ժեք, այնպես էլ այսպես թե այնպես կապակցութիւնը պա-
 րագայական գործածությամբ անորոշ արժեք ունի («որևէ
 ձևով, մի կերպ»). ը) հենց այնպես կապակցութիւնը գոր-
 ծածվում է «աննպատակ» իմաստով՝ «Հենց այնպես քայլում
 էր»։

ՈՐՈՇՅԱԼ, ԱՆՈՐՈՇ ԵՎ ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Որոշյալ, անորոշ և ժխտական դերանունների գործածու-
 թյան հետ կապված՝ կարևոր է հիշել հետևյալը. ա) բոլոր
 դերանունը ենթակայի դերում հանդես է գալիս սովորաբար
 անձեր նշանակելու համար և համաձայնում է հոգնակի ստո-
 րոգյալի հետ՝ բոլորը այստեղ են. իրերի համար բոլորը իբրեւ
 ենթակա սովորաբար չի գործածվում՝ փոխարինվելով բոլոր
 իրերը, բոլոր բաները կամ ամեն ինչ կապակցութիւններով՝
 բոլոր իրերը այստեղ են, ամեն ինչ այստեղ է. բ) ոչ ոք,
 ոչինչ, ոչ մեկը և այլ ժխտական դերանունների հետ գրվում
 է ժխտական ստորոգյալ՝ ոչ ոք չկա, ոչինչ չկա, ոչ մեկը չկա.
 հայերենի համար օտարաբանութիւններ են ՈՐԵՔ մեկը չկա
 տիպի արտահայտութիւնները (փխկ. Ոչ մեկը չկա, Ոչ մի
 մադ չկա կամ պարզապես Մադ չկա). գ) ոչինչ ժխտական
 դերանունը վերջին ժամանակներս ձեռք է բերել «ոչ վատ»
 իմաստը. Ինչպե՞ս ես։— Ոչինչ. դ) մի անորոշ դերանունը,

Ֆվականների հետ դրվելով, ցույց է տալիս նրանց նշանակած թվերի մոտավորությունը՝ մի տասը օր առաջ. մի երկու կապակցությունն ունի մի քանի իմաստը. ե) մի տեսակ կապակցությունն ունի տարօրինակ, արտասովոր իմաստը. Մի տեսակ ես երևում:

ՀԱՐՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Հարցական-հարաբերական դերանունները գործածության հետաքրքրական առանձնահատկություններ ունեն. ա) հարցական դերանունների գործածությունը ճարտասանական հարցի դեպքում արտահայտում է ժխտում՝ «Ո՞ւր են այն փողոցները, որ նախքան պատերազմը զարդարում էին քաղաքը» (ուզում է ասել՝ չկան). բ) ի՞նչ դերանունը կարող է օգտագործվել նախադասությանը ժխտական արժեք հաղորդելու նպատակով՝ «Ի՞նչ կարիք կա» (այսինքն՝ «Կարիք՝ չկա»). գ) ինչ-ը անձ ցույց տվող բառերի տրական հոլովաձևերի հետ դրվելով ցույց է տալիս, որ այդ անձերին տվյալ գործողությունը չի վերաբերում. «Ի՞նձ ինչ» (այսինքն՝ «Ինձ չի վերաբերում, ես գործ չունեմ»). դ) խոսակցական լեզվում ի՞նչ-ը կարող է գործածվել ինչո՞ւ-ի փոխարեն. «Ի՞նչ ես այդպես տխրել». ե) բացականչական տոնով ինչ-ը արտահայտում է ուրբան, ինչքան, շատ իմաստը. «Ի՞նչ գեղեցիկ է». զ) անա՛ր թե ինչ կապակցությունը հանդես է գալիս որպես զարմանքի բացականչություն. է) ի՞նչ կլինի կապակցությունը արտահայտում է խնդրանք. «Ի՞նչ կլինի, որ անես». լ) խրախուսելի չէ բանն ինչումն է արտահայտությունը, որ նշանակում է ի՞նչ է պատահել. թ) որ հարաբերականի ուր և ուրն և՛ ձևերը հաճախ ոճը դյուրացնելու, խոսքը չժանրաքննելու նպատակով կարող են փոխարինվել ուր-ով. «Այն մարդիկ, որ ամեն օր խոսում են ճշմարտության անունից, այսօր թաքնվել են». «Այն մարդը, որ ամեն օր խոսում է ճշմարտության անունից, այսօր թաքնվել է»:

Առաջադրանք 79. Ցույց տալ օգտագործված դերանունների իմաստային-ոճական առանձնահատկությունները, գտնել համանիշներ, վերացնել նկատելի թերություններ:

I. Ռ՞ր աշխարհքում ունեմ շատ բան՝ միտք եմ անում՝ է՞ս,
 թե էն,
 Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում, չեմ իմանում՝ է՞ս,
 թե էն,
 Աստված ինքն էլ տարակուսած, չի հասկանում ինչ անի,
 Տանի, թողնի,— ո՞րն է բարին, ո՞ր սահմանում, է՞ս,
 թե էն:

Մայրդ էն օր ասում էր ինձ,
 Թե՛ զուր թողիր տունը ձեռից,
 էնքան էժան ու էնքան հեշտ,
 էնքան հարմար, անհրաժեշտ...

— Է՛, մի՛ խոսիր, քույրիկ, էդպես,
 Շահի կյանքը թե կսիրես...

— Ամա՛ն, հողեմ գլուխը Շահի,

Աստված Շահից հեռու պահի.

Արեդ ապրի, շարշի՛ ախպեր,

էդ անունը բերան մի բեր:

— Վահ էսքան էլ շա՞ր լինի մարդ,

Խո՛չ է արել Շահը ձեզ վատ:—

Գազան թուրքի սրից փրկել,

Զոր Զուղայի քարից պոկել,

Բերել է ձեզ առատ Փարիա

Աչքն էլ քաղցր միշտ ձեզ վրա...

— Օ՛ֆ, հերիք է, շարշի՛ ախպեր,

Մի՛ խոսեցնիր ինձ դրանից:

Երնեկ դրա ոտը կոտորեր՝

Զգար հաներ մեզ մեր տանից:

(Հովհ. Թումանյան)

II. 1. Ինչի՞ երկարացրին. ո՞ւմ հետ են կովում, պարսի՞կ
 կա մեջները, ինչի չեն վճռում: 2. Հազկերտը գիտե, որ որ-
 քան էլ պարսկանանք, դարձյալ մեր ավանդություններով կմը-
 նանք հայ և դարձյալ վտանգավոր կլինենք իրեն և Բյուզան-
 դիայի միջև (Դ. Դեմիրճյան): 3. Անեծք Շահին, իրեն գահին,
 անիծում են երկինքն ի վեր (Հ. Թումանյան): 4. Վասակը ար-

տաքսեց Վարազվաղանին, երբ սա գնաց Պարսկաստան, ակսեց դավեր նյութել իր դեմ: 5. Կարծես մեռած է նա, և իր վրա դրած է մի սառը տապանաքար (Դ. Դեմիրճյան): 6. Հարցեր է տալիս ամեն մարդու նա իր ծագման մասին և իր էություն: 7. Մովն ալեկոծ, սանձակոտոր, իր քար շրթներն է կրծում (Ավ. Իսահակյան):

III. Նույն երգն եք երգում դուք, նույն հինը,

Եվ քանի՞ դարեր, քանի՞.

Որքա՛ն, որքա՛ն մտերիմ է

Ձեր դաշնը՝ սիրտ ու քամի...

(Վ. Տերյան)

Ես չիմացա թե ինչո՞ւ,

Դու չիմացար թե ինչպե՞ս

Պատահեցին մեկ-երկու

Մեր երազներն — առանց մեզ:

Ես էությամբ դարձա դու,

Դու էությամբ դարձար ես,

Ես չիմացա, թե ինչպե՞ս,

Դու չիմացար, թե ինչու:

Խառնվեցին երկու ձեռք

Ու դարձան մեկ՝ ձեռք ու դուռ,

Դու չիմացար, թե ինչպե՞ս,

Ես չիմացա, թե ինչու:

(Հ. Սահյան)

1. Խնդրեմ, Ձեր հերթն է, խոսեցեք: Եվ եթե կարող եք, գոնե, Դուք պատմեցեք, թե ինչպե՞ս կատարվեց այդ ցավալի դեպքը (թերթերից): 2. Դու ինչի՞ տեր ես, որ գաս դնշովդ, քթով-պնշովդ ջուրս պղտորես (Աթ. Խնկոյան): 3. Դու, Արագած, ալմաստ վաճան կայծակեղեն թրերի... (Ավ. Իսահակյան): 4. Լենին՛ն, դու կյանք ես հարակեզ, դու պատմությունն ես մարդկային, որ շառաչում է հորդ գետի պես դեպի օվկիանոսն ապագայի (Ն. Զարյան): 5. Մենք ազատակամ նվիր-

րեցինք մեզ նրա առաթուր կոխողոված իրավունքը պաշտպանելու (Մ. Նալբանդյան): 6. Ալկալիների ֆիզիկական հատկությունների մասին մենք խոսել ենք մեր աշխատության առաջին գլխում: 7. Արդ սրահար ու հրակեզ մեր որդիքը կանչում են մեզ (Հովհ. Թումանյան):

Առաջադրանք 80. Հետևյալ նախադասություններում գործածել փակագծերում բերված բառերից որևէ մեկը կամ և՛ մեկը, և՛ մյուսը՝ նշելով նրանց իմաստային-ոճական տարբերությունները:

1. Արտավազդը շատ էր սիրում (ներա, իր) գստերը: 2. Այս սենյակում մի ժամանակ ապրել է (ոմն, մի) ուսանող: 3. Գործը հետաձգվեց մի (ուրիշ, այլ) անգամ: 4. Նա սիրում էր (ինքն իրեն, ինքնիրեն): 5. Նա զայրացած քայլում էր սենյակում (ինքն իրեն, ինքնիրեն) խոսելով: 6. Երկու ընկերների գծաթուխյան մասին խոսում էր (բոլոր, ողջ) գյուղը: 7. Մըթնաձոր տանող (բոլոր, ողջ) ճանապարհները փակվում են առաջին ձյունի հետ: 8. Վարպետը լավ գիտեր (իր, իրեն) գործը և անմիջապես գործի անցավ: 9. Նա չէր հանդուրժում (իր, իրեն) հասցեին որևէ դիտողություն: 10. Օրիորդը հայելու մեջ երկար դիտում էր (իր, իրեն): 11. Երեխան շատ վահեցավ, երբ շնիկը հաշոցով մոտեցավ (իր, իրեն): 12. Աշոտ, գրապահարանից բե՛ր, խնդրեմ, ասողագիտության գիրքը. (նա, այն) դրված է երրորդ շարքում: 13. Վերջերս բեմադրվեց Շեքսպիրի «Օթելլոն». (նա, այն) անշուշտ մի նոր նվաճում է թատրոնի կյանքում: 14. Այդ դեպքը (ես, ինքս) եմ իմ աչքով տեսել:

Առաջադրանք 81. Ցույց տալ հոդերի գործածության առանձնահատկությունները: Նշել անճշտությունները, եթե այդպիսիք կան, աշխատել վերացնել դրանք:

1. Կյանքիդ ուղին լինի պայծառ,
Ամեն քայլըդ՝ ազնիվ, արդար,
Լինես խոհուն, լինես գիտուն,
Եվ ունենաս սիրտ զգայուն...
Ընկերներիդ սիրով սիրես,

Յրբ քեզ տեսնեն՝ ուրախանան...
Անդավաճան, անհուն սիրով
Հայրենիքիդ լինես պաշտպան.

Եվ մե՛ն-մենակ, տարին մի օր
Այցի ելնես մամուռ շիրմիս,
Կանգնես լոկկ, խորհես մի պահ,
Իմ կաթոգին սիրած տղա:

(Ավ. Իսահակյան)

XI 1. Ի՞նչ, դատ ու դատաստան ես կանգնո՞ւմ մեր խղճի
դեմ, քահանա՛դ ողորմելի: 2. Ո՞ւմ եմ վրդովում ոգովս, Եղի-
շե՛դ իմ սիրելի: 3. Մամիկոնյան գնդից մի ջոկատ գիշերս
պատրաստ վիճակի բեր: 4. Ամառս պատերազմ կլինի. —
մտախոհ ասաց զորականը: 5. Ուխտներս ամուր, հավատնե-
րըս մաքուր: 6. Այս երկու օրս ճանապարհ կընկնենք: 7. Հազ-
կերտը այս պահիս հայերին է հետապնդում: 8. Գիտե՞ս, մեկ
էլ տեսար պատասխանը գրել տվի այս իսկ պահիս: 9. Իմ
զավակներս կորած էին այն օրից, որ քնացին գազանների
մեջ: 10. Իմ մտերիմներիս անգամ պակասում է շատ բան:

(Դ. Դեմիրճյան)

ԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ. ԲԱՅԻ ԴԵՄՔԸ

Ի՞նչ իմաստային-ոճական կիրառությունների հարստու-
թյամբ բայը գերազանցում է մյուս խոսքի մասերին: Նրա
քերականական կարգերի առատությունը, ձևերի բազմազա-
նությունը և այդ ձևերի նուրբ փոխանցումներն ընտրության
չայն հնարավորություններ են տալիս: Ստորև կխոսենք բայի
ոճական կիրառության ամենից ավելի կարևոր դեպքերի մա-
սին:

Հնդհանրապես բայի առաջին դեմքը ցույց է տալիս խոսո-
ղին, երկրորդ դեմքը՝ խոսակցին, երրորդ դեմքը՝ մի երրորդ
անձ կամ առարկա: Սակայն կան բայի դեմքի արտահայտու-

թյան զուգահեռ ձևեր, դիմային ձևերի փոխանցման զանազան դեպքեր:

1. **Դեմքի տարբերությունները կարող են արտահայտվել ոչ միայն բայի դիմային չերջավորություններով, այլև համապատասխան դեմքի անձնական դերանուններով:** Անձնական դերանունների գործածությունն անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ գործողություն կատարողը շեշտվում է՝ «Ես՝ եմ գրել նամակը», «Դու՛ն ես պատասխանատու այս բոլորի համար»: Սակայն գրավոր խոսքում անձնական դերանունները հաճախ դրվում են առանց անհրաժեշտության, և այս պատճառով բայի դիմավոր ձևերն առանց անձնական դերանունների գործածելը դառնում է խոսակցական լեզվի հատկանիշ. համեմատեցեք. օրինակ, ես երկու նամակ եմ գրել և երկու նամակ եմ գրել:

2) **Առաջին դեմքի փոխարեն կարող են հանդես գալ մյուս դեմքերը.** ա) երկրորդ դեմքը, որ ձեռք է բերում ընդհանրացած նշանակություն, մանավանդ իրար հաջորդող գործողություններ նշանակելու դեպքում. Հիանալի է գյուղում. արքանում ես, հագնվում, դուրս գալիս և ծծում քաւմ օդը: Չորս կողմդ լուսքյուն է. բ) հոգնակի երրորդ դեմքը. Քեզ ամեն օր ասում են, որ չի կարելի: Հնարավոր է իր մասին խոսել նաև անդեմ ձևով. Ամեն օր տանջվել շարշարվել և փոխարենը հատուցում շտանալ: խոսակցական լեզվում խոսողը կարող է նույնությամբ կրկնել իրեն երկրորդ դեմքով ուղղված խոսքը՝ հեգնական իմաստով. Վաղը գնո՞ւմ ես:— Կգնա՞ս, ինչպե՞ս չէ:

3) **Երկրորդ դեմքի իմաստը ևս կարող է արտահայտվել մյուս դեմքերով.** ա) ինչպես հայտնի է, հոգնակի առաջին դեմքը կարող է նշանակել և խոսակցին. Ո՞վ է գնում:— Մե՞նք՝ ես և դու: Որոշ դեպքերում հոգնակի առաջին դեմքով նշանակվում են միայն խոսակիցները՝ մտերմական երանգով՝ ինչպե՞ս ենք բնել (այսինքն՝ ինչպե՞ս եք բնել). բ) երբեմն երկրորդ դեմքի համար կարող է օգտագործվել երրորդ դեմքը՝ հեգնական երանգով. Վերջապես եկա՞վ: Որտե՞ղ էիր:

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ընդհանրապես բայի եղանակներից սահմանականը ցույց է տալիս հավաստի, ըղձականը՝ ցանկալի, պայմանականը՝ որոշ պայմանով կամ ենթադրությամբ, հարկադրականը՝ պարտադիր և հրամայականը՝ հրամանով կատարելի գործողություն։ Սակայն եղանակային ձևերը կարող են ձեռք բերել իմաստային որոշ նոր երանգներ և նույնիսկ իրար փոխարինել։

Ենթադրական եղանակի ապառնին հաճախ կարող է հանդես գալ ոչ թե բուն ենթադրական կամ պայմանական արժեքով, այլ ավելի շատ սահմանականի նշանակությամբ՝ ցույց տալով ապառնիի որոշակի ժամանակակետում հավաստիորեն կատարվելիք գործողություն։ այս առումով նա տարբերվում է սահմանական ապառնուց, որ ցույց է տալիս ընդհանրապես ապառնի՝ խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն՝ առանց ապառնիի որևէ ժամանակակետի հետ անմիջապես հարաբերվելու։ այստեղ կարևոր է միայն խոսելուց հետո կատարվելու փաստը։ Քանի որ ենթադրական ապառնիի և անցյալ ապառնիի ձևերը երբեմն շփոթվում են, ուստի պետք է հիշել հետևյալը. ա) ենթադրական ապառնին ցույց է տալիս հավաստիորեն կատարվելիք, անցյալ ապառնին՝ ենթադրված, բայց չկատարված գործողություն՝ ես կգնամ (խոսողը գնալու հավաստիության վրա չի կասկածում) և ես կգնայի (նշանակում է՝ չի գնացել)։ բ) հայերենում չի գործում անգլերենի, ֆրանսերենի և այլ լեզուների համար բնորոշ՝ գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակների համաձայնության կանոնը, ուստի օտարաբանություն պետք է համարել թարգմանական երկերում անցյալ ժամանակների հետ ենթադրական ապառնու գործածությունը։ Այսպես, ճիշտ չէ Բռլուրին հավաստիացնում էր, որ կգնա ասելու փոխարեն նույն իմաստով ասել Բոլուրին հավաստիացնում էր, որ կգնառ։

Հայերենն ունի հրամանի արտահայտման ամենանուրբ տարբերություններ՝ սկսած մեղմ խնդրանքից և վերջացրած սպառնալիքով։ Բուն հրամայականի փոխարեն կարող են օգտագործվել այլ եղանակային ձևեր. ա) հրամայականի փոխարեն ավելի մեղմ հրաման՝ հորդոր կամ նույնիսկ խնդրանք, արտահայտելու համար կարող է գործածվել ենթադրական

ապառնին՝ գնա՛ ասա՛ — կգնաս կասես. ավելի մեղմ ձևով կարելի է ասել գնաս ասես կամ էլ նույնիսկ՝ լավ կլինե՞ր, որ գնայիր ասեիր. արգելական հրամայականի փոխարեն կարող են գործածվել չե՛ս գնա և չե՛ս ասի, չգնա՛ս և չասե՛ս, լավ կլինի, որ չգնաս և չասես (կամ՝ լավ կլինե՞ր, որ չգնայիր և չասեիր) ձևերը. բ) հրամանին մեղմ երանգ է տալիս անշեշտ մի բառ-մասնիկի գործածությունը. մի գնա ասա, մի գնաս ասես, մի գնայիր ասեիր. այս մի-ն կապ չունի հրամայականի մի մասնիկի հետ, այլ ծագում է մի անորոշ դերանունից. գ) մի-ն երբեմն կարող է ուղեկցվել հապա բառով, որ հրամանին հաղորդում է շտապեցնելու երանգ՝ հապա մի գնա՛ ասա՛ կամ էլ նույնիսկ սպառնալիք՝ հապա մի գնա՛ ասա՛տե-ղից. այս նույն արժեքով կարող է գործածվել անորոշ դերբայը՝ չծխե՛լ. ե) հրամայվող գործողությունը խոսողի մասնակցությունը արտահայտելու կամ հրամանի բնույթը չընդգծելու նպատակով գործածվում է ըղձականի առաջին դեմքը՝ գնանք. սա կարող է ուղեկցվել արի, արի մի ձևերով՝ արի գնանք, արի մի գնանք, որոնք հատուկ են խոսակցական լեզվին. զ) ըղձականի փոխարեն երբեմն կարող է գործածվել սահմանական անցյալ կատարյալը՝ անմիջական հրաման արտահայտելու համար՝ գնացի՛նք, դե գնացի՛նք. է) խոսքին շմանակցող անձին (երրորդ դեմքին) ուղղված հրաման արտահայտելու համար ըղձականի հետ գործածվում է քո՛ղ բաձևը, որ ստացել է հրամայական մասնիկի արժեք՝ քո՛ղ գնա:

Ըղձական գործողությունը ըղձական եղանակով արտահայտվելու փոխարեն կարող է արտահայտվել ենթադրական անցյալ ապառնիով. սա էլ կարող է ուղեկցվել եթե-ով երկրորդական նախադասությամբ. Մի լավ կլենի և մի լավ ման կգայի, եթե ժամանակ լինե՞ր: Խոսակցական լեզվում ենթադրականի այս ձևը կարող է ուղեկցվել համա բե... հա՛ բառերով. Համա բե կուտեի հա՛:

Ենթադրականությունը երբեմն կարող է ուժեղացվել պիտի ձր, պետք է որ արտահայտություններով՝ պիտի որ եկած լինի, պետք է որ եկած լինի: Ոճական հատուկ եղանակ է ենթադրականի ժխտական ձևի փոխարեն ենթակայական դեր-

բայի և օժանդակ բայի ժխտական ձևի գործածությունը՝ Նա գնացող չի = Նա չի գնա:

Հարկադրականի պիտի մասնիկի փոխարեն երբեմն գործածվում է պետք է՝ արտահայտելով իմաստի որոշ ուժեղացում՝ պիտի գնամ, պետք է գնամ: Որոշ դեպքերում պիտի-ի փոխարեն կարող են գործածվել հարկադրանք կամ անհրաժեշտություն արտահայտող այլ բառեր՝ դրվելով անորոշ դերբայների հետ՝ ճարկավոր է գնալ, անհրաժեշտ է գնալ կամ, ժխտմամբ՝ չի կարելի գնալ:

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Բայի ժամանակային ձևերն ունեն իրենց հիմնական իմաստները: Սակայն երբեմն նրանք կարող են ստանալ ոճական տարբեր կիրառություններ կամ հանդես գալ մեկը մյուսի փոխարեն:

1) Քանի որ ամենից ավելի հավաստի ժամանակը ներկան է, որի դեպքում գործողությունը կատարվում է անմիջաբար՝ հենց խոսողի կողմից կամ նրա աչքի առջև, ուստի խոսքին կենդանություն և հավաստիություն տալու համար ներկան կարող է գործածվել անցյալի և ապառնիի փոխարեն. անցյալի փոխարեն գործածվող ներկան կոչվում է պատմական ներկա և շատ սովորական է գիտական նկարագրություններում, պատմական երկերում, հեքիաթներում. «1848 թ. նվարոպայում բռնկվում է հեղափոխությունը», «Այս հայտնագործությունը կատարվում է նկարագրված դեպքերից մի քանի տարի հետո», «Լինում է, չի լինում մի թագավոր» և այլն. բավական տարածված է ներկայի գործածությունը ապառնու փոխարեն՝ խոսքի պահին անմիջաբար հաջորդող և միանգամայն հավաստի գործողություն նշանակելու համար. Հենց ճիմա գնում եմ: Վաղը մեկնում եմ Մոսկվա և այլն:

2) Ներկա ժամանակը կարող է արտահայտել ոչ միայն խոսելու պահին, այլև ընդհանրապես, պարբերաբար կատարվող, սովորական գործողություն. «Երկրագունդը պտտվում է արևի շուրջը»: «Ես ամեն օր այցելում եմ իմ հիվանդ ընկերոջը»: «Ես սովորում եմ 9-րդ դասարանում»:

3) Խոսակցական լեզվում ներկայի փոխարեն կարող է

գործածվել ըղձական ապառնին. «Գնում է տուն. զնա և ի՞նչ տեսնի»:

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԶԵՎԵՐ

Դերբայական ձևերի մի մասը (անկատար, ժխտական, վաղակատար) հանդես է գալիս միայն ժամանակային ձևերի կազմում, և նրանց գործածությունը կապված է ժամանակային ձևերի գործածության հետ: Մյուս դերբայական ձևերի մեջ, եթե առանձնացնենք անորոշը, պետք է տարբերել երկու կարգի գործածություն՝ ածականական և մակբայական: Որպես ածականական դերբայներ հանդես են գալիս ենթակայականը (-ող), ապակատարը (-լու) և հարակատարը (-ած)՝ սիրող սիրտ, գրելու նամակ, բացված դուռ և այլն: Որպես մակբայական դերբայներ կամ, համառոտ ասած, մակդերբայներ հանդես են գալիս համընթացականը (-լիս), այլև հարակատարը (-ած)՝ լինելով ձևի հարադրությամբ կամ առանց դրա. մակդերբայի արժեք ունի նաև անորոշի գործիականը՝ նրան հանդիպեց տուն գնալիս, նստած գրում էր, վաղուց գրած լինելով այդ դեպքերի մասին՝ նա այժմ սպասում էր արդյունքների, ծիծաղելով գնում էր և այլն: Դերբայական այս ձևերի գործածության մասին պետք է հիշել, որ՝ ա) ենթակայականը ցույց է տալիս գործողությունը որպես առարկայի հատկանիշ և կարող է կազմվել բոլոր սեռի բայերից (սիրող սիրտ, կատարվող գործ, հանգչող կրակ և այլն) ու գործածվել բայական բոլոր ժամանակների ուղեկցությամբ (հանգչող կրակը դեռ երկար մարմնում էր, մարմնում է, կմարմնի և այլն). բ) ապակատարը և հարակատարը համապատասխանաբար ցույց են տալիս կատարելի ու կատարված գործողություն և գործածվում են միայն չեզոք ու կրավորական իմաստով՝ գրելու նամակ, գրած կամ գրված նամակ. ներգործական իմաստը կարող է արտահայտվել միայն երկրորդական նախադասությամբ. նամակը, որ գրվելու է և նամակը, որ գրվել է արտահայտությունները կարելի է փոխարինել գրվելու նամակ և գրած (գրված) նամակ կապակցություններով, մինչդեռ մարդը, որ գրելու է և մարդը, որ գրել է արտահայտություն-

ձեռն անփոխարինելի են. գ) համընթացականը (—լիս—) ցույց է տալիս ուղեկցող գործողություն՝ ժամանակի պարագայի արժեքով և կարող է փոխարինվել ժամանակ կապական բառով՝ տուն գնալիս հանդիպեցի նրան (= տուն գնալու ժամանակ հանդիպեցի նրան). անորոշի գործիականը ցույց է տալիս ուղեկցող գործողություն՝ ձևի պարագայի իմաստով՝ երգելով գնում էր. —աժ լինելով կապակցությունը, որ այժմ որոշ չափով հնացել է, ցույց է տալիս նախապես կատարված գործողություն՝ ժամանակի պարագայի իմաստով՝ նամակն արդեն գրած լինելով (այսինքն՝ նամակը գրելուց հետո, երբ նամակն արդեն գրել էր)՝ նստած գիրք էր կարդում:

Դերբայների կիրառության հետ կապված պետք է հիշել հետևյալը. ա) խոսակցական լեզվին հատուկ է անորոշ դերբայի փոխարինումը ըղձականի համապատասխան դիմավոր ձևերով՝ ուզում եմ գնամ, ուզում է գնա և այլն՝ փոխանակ ուզում եմ գնալ, ուզում է գնալ. բուն գրական լեզվում այդպիսի փոխարինումն անթույլատրելի է. պետք է խուսափել պաշտոնական գրագրություններում, հատկապես դիմումներում հանդիպող խնդրում եմ կարգադրեմ (թույլատրեմ, ասեմ և այլն) արտահայտություններից՝ փոխանակ խնդրում եմ կարգադրել (թույլատրել, ասել և այլն) կառույցների. բ) անցողական (ներգործական) բայերից կազմված հարակատար դերբայի ձևերն ունեն կրավորական արժեք՝ անկախ այն բանից՝ գործածվում են դրանք վ-ով թե առանց վ-ի՝ գրած — գրված, ստացած — ստացված և այլն. վ-ով ձևերը ավելի գրքային են, առանց վ-ի ձևերն ունեն խոսակցական երանգ. գ) ածականական դերբայները հաճախ կարող են ստանալ իսկական ածականների արժեք և, ընդհակառակն, որոշ կարգի ածականներ, որոնք բայահիմքեր են, կարող են խնդիր ստանալ և իմաստով ու գործածությամբ մոտենալ դերբայներին. գրեթե ածականի արժեք ունեն աչքի ընկնող (նշանավոր), հարգրված (հարգելի) և այլ դերբայական ձևերը. ընդհակառակն, զուրկ, կախ, անտեղյակ և այլ ածականներն իմաստով մոտ են դերբայներին՝ ամեն ինչից զուրկ, պատից կախ, այդ բռնություն անտեղյակ և այլն. դ) մակդերբայական դարձվածների ենթական (կատարողը) պետք է նույնը լինի նախադասության ենթականի հետ՝ մտնելով տուն՝ նա ասաց, բայց ոչ ես մտնե—

լով տուն՝ մայրս ասաց կամ մայրս մտնելով՝ ես ասացի. . .
 ե) -լով ձեր սովորաբար արտահայտում է ուղեկցող գործողություն՝ մանավանդ առանց լրացումների՝ ծիծաղելով գնում էր, երգելով աշխատում էր և այլն. սակայն այն կարող է արտահայտել անմիջապես նախորդող գործողություն՝ հատկապես լրացումներ ունենալու և բութով անջատվելու դեպքում՝ ամեն ինչ պատմելով՝ նա հեռացավ. որոշ դեպքերում -լով-ը կարող է արտահայտել հաջորդող գործողություն և այդ դեպքում սովորաբար հաջորդում է նախադասության ստորոգյալին՝ նա ուստյուն գործեց՝ ընկնելով թշնամու խրամատը.
 զ) այն բայերի դեպքում, որոնց բուն անկատարով կազմված ձևը ցույց է տալիս գործողության սկիզբ, իսկ -ած-ով ձևը՝ վիճակ (ֆնում է — ֆնած է, կանգնում է — կանգնած է, ֆրտնում է — ֆրտնած է և այլն), հարակատարը կարող է գործածվել մակդերբայական արժեքով՝ նստած գրում էր. տանիքին կանգնած՝ նա ամրացնում էր ձողերը:

Առաջադրանք 82. Փակագծերում եղած արտահայտություններից ընտրել տեղին ձևերը, պատճառաբանել ձեր ընտրությունը, վերացնել տեքստում եղած անճշտությունները:

Արտաշատի շրջանի «Կարմիր Հոկտեմբեր» կոլտնտեսության վարչության նախագահ ընկ. Հ. Հակոբյանին՝ Նույն կոլտնտեսության անդամ Ս. Սարգսյանից:

Դ ի մ ու մ

Երկու տարի առաջ (ավարտելով, ավարտելուց հետո) միջնակարգ դպրոցը՝ (սկսեցի աշխատել, աշխատանքի անցա)՝ կոլտնտեսությունում: Այդ (տարիներին, տարիների ընթացքում) (եղել եմ, հանդիսացել եմ, համարվել եմ) արտադրության առաջավոր (Այժմ, հիմա, ներկայումս) (ուզում եմ, ցանկանում եմ) (գնամ, գնալ) սովորելու ինդրում եմ (նկատի ունենաք, հաշվի առնեք) կոմերիտական կազմակերպության երաշխավորությունը և ինձ գործուղեք Երևանի պետական համալսարանի նախապատրաստական բաժնում (սովորելու, սովորելու համար):

Դիմող՝ Ս. Սարգսյան

Առաջադրանք 83. Բացատրել իրենց սովորակա՞ն, թե այլ եղանակաժամանակային իմաստով են գործածված ընդգծված քայաձևերը: Արտագրել փակագծերում բերելով համապատասխան համանիշ ձևը:

1. Դո՛ւրս կորիւր այստեղից և այսուհետև շնամարձակվե՛ս սրանց դաս տալ: 2. Իսկույն ևեթ զնացե՛՛ք պարսկերենի դասին և սրանից հետո շնամարձակվե՛՛ք հայերեն խոսել: Կխոսե՛ք պարսկերեն: Իմացա՞ք: 3. Ժա՛մ է: Թող սրբությունն-ու խիղճը իմաստություն տան մեզ,— գոչեց կաթողիկոսը,— գրե՛նք... 4. Այս երեկո ճաննե՛նք ճակատ: Վաղը պիտի կովե՛նք: 5. Դուք երկուսդ թերևս վաղը ճանապարհվե՛իք Արտաշատ: 6. Հոնաց թագավորին կվստահեցնես ճորա պահակը քանդելու խոստումը: 7. Բայց կիմանաս Աթըլի ժամանման օրերը, որ ես գնամ տեսնվելու նրա հետ: 8. Իսկ հիմա կփակվես Վարժի տանը և այնտեղ կնավա՛փես հետախույզ մարդկանց: 9. Բոլոր բուրգերն ու անցքերը իսկույն կգրավես: Արաքսի կամուրջի երկու գլուխները կբռնես: Սուրհանդակներ կուղարկես իշխաններին, որ անմիջապես լրացնեն սպառազենքը: Կգնաս, կստուգես, կտեղեկացնես, և ես մի տասնհինգ օրից հետո կգամ կընդունեմ գնդերը: 10. Դեռ վաղորդյան ժամ չէ, տե՛ր իմ, կճանգստա՛նայիր և ապա կճանապարհվե՛իր: 11. Թող հայտնի լինի արյաց արքային, որ մենք կկովե՛նք արյաց տերության թշնամիների դեմ, կտանք տերունական հարկը... Բայց այսքանը միայն... Բայց այն, որ ավանդ ենք ստացել մեր նախնիներից՝ մեր հայրենիքը, մեր ազատությունը, մեր իշխանությունը դա չենք տա ոչ ոքի: 12. Ծշմարիտ կուզեմ իմանալ:

(Դ. Դեմիրճյան)

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շարահյուսության ոճական հնարավորությունները շատ բազմազան են: Շարահյուսական մեծաքանակ համանիշները հնարավորություն են տալիս միևնույն մտքերն արտահայտել

տարբեր միջոցներով ու եղանակներով, տարբեր կառույցներով, մտքին հաղորդելու արտահայտչականության ու ճշգրտության տարբեր աստիճաններ: Առանձնապես նկատելի են գործառական ոճերի շարահյուսական տարբերություններ: Բավական է համեմատել սովորական առօրյա-խոսակցական լեզուն որևէ վարչական փաստաթղթի կամ գիտական աշխատության, սրանք էլ՝ դեղարվեստական ստեղծագործությունների լեզվի հետ, որպեսզի շարահյուսական տարբերություններն իսկույն աչքի ընկնեն: Այս առումով հաճախ շատ տարբեր են նաև անհատական (հեղինակային) ոճերը. եթե համեմատենք, օրինակ, Հովհ. Թումանյանի «Գիքորի» լեզուն Ռաֆֆու «Սամվելի» լեզվի հետ, հեշտությամբ կնկատենք նրանց շարահյուսական տարբերությունները:

Գործառական ոճերից առօրյա-խոսակցականը բնութագրվում է կարճ նախադասություններով, միջանկյալ բառերով, բացթողումներով ու ընդհատումներով, հարցական, պատասխանական, բացականչական նախադասությունների առատությամբ, գրական լեզվի նորմաների հաճախակի խախտումներով, բարդ նախադասությունների և դատողական բնույթի ստորադասական շաղկապների համեմատաբար սակավ գործածությամբ: Գիտական ոճին, ընդհակառակն, հատուկ են հետևողական և իրարից բխող նախադասությունների շարքերը, մտքի համեմատաբար լրիվ արտահայտությունը, հարցական, պատասխանական, բացականչական նախադասությունների սակավությունը և նույնիսկ բացակայությունը, բարդ նախադասությունների, դերբայական ժավալուն դարձվածների և դատողական շաղկապների առատությունը, տրամաբանական հետևողականությունը: Մյուս կարգի ոճերն ընկած են այս երկու հակադիր բևեռների միջև՝ հանդես բերելով մերթ առօրյա-խոսակցական, մերթ գիտական ոճի տարբեր առանձնահատկություններ: Վարչագործարարական ոճը մոտենում է գիտականին, թեև ըստ փաստաթղթերի բնույթի, այստեղ կարող են ավելի պակաս լինել դատողական տարրերը, նախադասությունների կուռ-տրամաբանական հետևողականությունը, ավելի շատ լինել կաղապարային ձևերը և խոսքի հատվածները կապակցելու համար դերանունների օգտագործման դեպքերը. ընդհանրապես բացակայում են արտահայտչականու-

թյան շարահյուսական միջոցները (եթե բառացի չեն մեջբերվում որոշ կարգի խոսքեր, ինչպես, օրինակ, դատական փաստաթղթերում), մեծ թիվ են կազմում դերբայական դարձվածները: Հրապարակախոսական ոճը է՛լ ավելի քիչ դատողական է, ավելի պակաս հետևողական, ավելի բազմազան են նախադասությունների տիպերը, ավելի շատ են արտահայտչականության միջոցները, կարող են օգտագործվել պատկերներ, հանդես գալ ճարտասանական հարցը, բացականչությունները: Ըստ անհրաժեշտության կիրառվում են մե՛րթ առօրյա խոսակցական, մե՛րթ գիտական ոճի տարրերը: Գեղարվեստական ոճը, բնութագրվելով արտահայտչականության բոլոր միջոցների օգտագործմամբ, միաժամանակ կարող է հանդես բերել բոլոր ոճերի տարրերը՝ ստեղծագործական վերարտադրությամբ:

Գեղարվեստական խոսքին և գրական լեզվին ընդհանրապես հատուկ են շարահյուսական որոշ կարգի մշակված կառույցներ: Ամենից առաջ պետք է նշել չափածո խոսքը, որտեղ սովորական են կրկնության որոշակի տիպերը (տողերի նույն կարգի սկիզբ, նույն կարգի վերջ, նախորդ տողավերջի կրկնում հաջորդի սկզբում, խաշածև կրկնություն), աստիճանավորությունը, զուգահեռ կառույցները, պարբերությունները (պարբերությամբ զուգահեռ կառույցների հետևողական շարք է՝ ութմային որոշակի կազմակերպվածություն):

ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստորոգյալի տեսակները հնարավորություն են տալիս արտահայտելու մտքի զանազան նրբություններ՝ ենթական բնութագրելով այս կամ այն ձևով:

Որոշ նուրբ տարբերություններ են ստեղծվում ածականով արտահայտված բաղադրյալ ստորոգյալի և այդ նույն ածականի հիմքով կազմված պարզ (բայական) ստորոգյալի միջոցով. ծառը կանաչ է և ծառը կանաչում է նախադասությունների ստորոգյալներից առաջինն արտահայտում է ծառին հատուկ վիճակային հատկանիշ, երկրորդը՝ հատկանիշի ձեռքբերում. կանաչում է ձևը կարծես թաքնված ձևով պարունակում է կանաչ է գառնում արտահայտությունը: Այդ բանը

աւելի ակնհայտ է —ան— բայաժանցի դեպքում, որ բոլոր ածականներից կարող է կազմել դառնալ իմաստով բայաձևեր. մեծ է — մեծանում է, խելոք է — խելոքանում է, ճիւղանդ է — ճիւղանդանում է և այլն:

Իմաստային համատիպ հարաբերություն կարող է արտահայտվել այն բայերի միջոցով, որոնք ունեն անկատար և հարակատար դերբայներով կազմվող զուգահեռ ձևեր: Պետք է նկատի առնել, որ —ած—ով կազմված բայական դիմավոր ձևերը սահմանափակ կիրառություն ունեն՝ հանդես գալով միայն վիճակ ցույց տվող որոշ շեզոք բայերի և կրավորական բայաձևերի դեպքում՝ կանգնած է — կանգնում է, բնած է — բնում է, գրված է — գրում է և այլն. այս ձևերից առաջինները ցույց են տալիս վիճակ, երկրորդները՝ վիճակային փոփոխություն կամ անցում:

Կան դեպքեր, երբ հնարավոր է կազմել եռակի ձևեր՝ ածականով և հարակատար ու անկատար դերբայներով. զուրկ է. — զրկված է — զրկվում է, բաց է — բացված է — բացվում է և այլն. զուրկ է ձևը ցույց է տալիս պարզապես վիճակ (առանց մատնանշելու այդ վիճակի՝ գործողության հետևանք լինելը), զրկված է ձևը՝ վիճակը որպես նախապես կատարված գործողության հետևանք, զրկվում է. ձևը՝ վիճակային անցում, հատկանիշի ձեռքբերում:

Իմաստային զուգահեռ ձևերը կարող են ստեղծվել դառնալ բայով և —ան— բայաժանցով՝ Երևանն օրեցօր գեղեցկանում է — Երևանն օրեցօր գեղեցիկ է դառնում: Սակայն երկրորդ տիպի կառույցը հազվադեպ է գործածվում. դառնալ բայը սովորաբար դրվում է գոյականների հետ (Քանաֆեոր դարձավ Երևանի մի մասը), —ան—ով բայաձևը գործածվում է ածականական հիմքերի դեպքում (Գրիգորը ճիւղանդանում է):

Բաղադրյալ ստորոգյալների դեպքում ստորոգումն ունի դրսևորման այնպիսի տարբերություններ, որոնք հնարավորություն են տալիս արտահայտելու ոչ միայն հատկանիշի վերագրումը առարկային, այլև այդ վերագրման որոշ առանձնահատկություններ, հավաստիության աստիճանը և խոսողի անձնական վերաբերմունքը:

Ստորոգման հիմնական արտահայտիչներն են նմ, լինել և դառնալ վերացական բայերը, որոնք ոճականորեն շեզոք են:

Սրանցից եմ-ը ցույց է տալիս պարզ վերագրում (Գրիգորե աշակերտ է), լինել-ը՝ տեականություն, սովորականություն և բազմակատարություն (Գրիգորը երբեմն ուրախ է լինում, երբեմն՝ տխուր), դառնալ-ը՝ առարկայի կողմից հատկանիշի ձեռքբերում (Գրիգորը դարձավ աշակերտ):

Մի քանի նախադասության՝ իրար հաջորդելու դեպքում ստորոգումն արտահայտող բառը սովորաբար զեղչվում է՝ Գրիգորը պիտներ է, ավտոմոդելիստների խմբակի և պատի թերթի խմբկոլի անդամ. Գրիգորի հայրը ուսուցիչ է, մայրը՝ բժշկուհի: Սակայն որոշ դեպքերում զեղչում չի կատարվում, մանավանդ, երբ մտքերն առանձնացվում են և ընդգծվում:

Ստորոգում արտահայտող հիշյալ բայերի փոխարեն երբեմն կարող են հանդես գալ այլ բայեր՝ մասամբ խոսքի բազմազանեցման, իմաստային և ոճական զանազան տարբերություններ արտահայտելու համար, մասամբ օտարաբանություն: Ծմ բայի փոխարեն հանդիպում են հանդիսանալ, ներկայանալ (որպես), իրենից ներկայացնել, ճանդես գալ որպես կառույցները, որոնցից առաջին երեքի գործածությունը պետք է համարել օտարաբանություն: Սրանք բոլորն էլ հատուկ են վարչագործարարական և գիտական ոճերին՝ Կոմունիստական կուսակցությունը հանդիսանում է բանվոր դասակարգի առաջավոր ջոկատը (փոխանակ առաջավոր ջոկատն է), Նա ճանդես է գալիս որպես առաջավոր ճասաբակական գործիչ (այսինքն՝ առաջավոր ճասաբակական գործիչ է) և այլն: Ընդգծման յուրահատուկ ձև է է-ին փոխարինող ոչ այլ ինչ է, եթե ոչ արտահայտությունը՝ Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ անգրագիտություն:

Գործողության հավաստիությունը կասկածի տակ առնելու դեպքում գործածվում են թվալ, երևալ, ձևանալ բայերը՝ Նա միայն արտաբանապես է մարդ թվում, Այդ մարդը շատ փորձված է երևում, Քշնամին անմեղ է ձևանում և այլն:

Առաջադրանք 84. Ստորև բերվող նախադասություններում գտնել հանգույցի դեր կատարող բայերը և նշել նրանցով արտահայտված ստորոգման բնույթը:

I 1. Մխիթար սպարապետը բարձրահասակ էր, ձիգ կեցվածքով, որոնող ու անհանգիստ հայացքով: 2. Նա այնպես

էր նստել երկնագույն ձիուն, որ ասես բուսած լիներ թամբից: 3. Նա ծանր ու խոհուն հայացք ունէր, խիտ հոնքեր ու թուխ դեմք: 4. Աստված մի արասցե փորձանքի եկած լինի: 5. Նրան հայտնի էր, որ մի ժամանակ այս մոռացված արահետի տեղը եղել է մի ոտնակոխ ու բազմազնա ճանապարհ: 6. Թշնամին պատրաստվում է ասպատակել մեր Արաքսամերձ գավառները: 7. Շուտով վերելքը բուրբուխն անհնարին դարձավ: 8. Երբ հեռու էր լինում, մոռանում էր թե՛ կնոջը, թե՛ Գոհարին: 9. Ո՛ղջ կենաս, սպարապե՛տ, կուռդ միշտ հաստատ լինի:

(Ս. Խանգաղյան)

11. 1. Նոր սարքն իրենից ներկայացնում էր պողպատե բարակ թիթեղներից հավաքված միջուկի վրա փաթաթված մեկուսացած լար, որի միջով բաց էր թողնվում էլեկտրական հոսանք: 2. Այդ պահին հանդես եկան նորանոր դժվարություններ: 3. Աղվեսը մի քարի մոտ քնած էր ձևացել, երբ մոտ թռավ ագռավը: 4. Գուցե նա պարզապես բարեկամ է ձևածուծ: 5. Զգիտես ինչու, բայց երիտասարդի պատմածն անհավանական թվաց նրան: 6. Նղբայրեն՛ր, մի՛ հավատաք այս պարոնների շողոմ խոսքերին: Ժամանակավոր կառավարության հետ համագործակցելը ոչ այլ ինչ է, եթե ոչ դավաճանություն՝ քանվոր դասակարգի հեղափոխական գործին: 7. Պատանիները լեզու էին կտրել և ոգևորված պատմում էին իրենց տեսած զարմանալի տեսիլքի մասին:

ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԼԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ենթական ստորոգյալի հետ համաձայնում է քերականական այն հատկանիշներով, որոնք հատուկ են միաժամանակ և՛ բային, և՛ ենթակայի պաշտոնում հանդես եկող խոսքի մասերին, հատկապես դերանվանը և գոյականին: Դերանվան և բայի համար ընդհանուր են դեմքը և թիվը, գոյականի և բայի համար՝ թիվը: Գոյականով արտահայտված ենթակայի հետ բայն ընդհանրապես դրվում է երրորդ դեմքով. սակայն եթե գոյականն ունի 1-ին կամ 2-րդ դեմքի դիմորոշ հոդ, ապա

բայը համաձայնում է ըստ հողի դեմքի՝ Աշակերտներս պարտավոր ենք լավ սովորել:

Տարբեր դեմքերի առկայության դեպքում համաձայնությունը ստորոգյալի հետ կատարվում է ըստ գերադաս դեմքի՝ եթե կա առաջին դեմք՝ առաջինով, եթե չկա առաջին, բայց կա երկրորդ դեմք՝ երկրորդով. օրինակ՝ Մենք և դուք միևնույն օրը կմեկնենք: Դուք և նրանք պարտավոր եք ժամանակին գալ:

Թվի համաձայնությունը տեղի է ունենում ըստ հետևյալ ընդհանուր կանոնի. եզակի ենթակայի հետ դրվում է եզակի և հոգնակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ: Սակայն կան առանձնահատուկ դեպքեր:

1) Եթե ենթական ունի եզակի ձև, բայց ուղեկցվում է երկու, երեք և ավելի բարձր թվականներով, ապա ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով՝ Անցավ երկու շաբաթ, Հինգ մարդ բացակա էր և այլն: Սակայն, ինչպես նշվել է թվականին նվիրված հատվածում, եթե առարկաների տարբերությունը շեշտվում է, և թվականի հետ դրվում է հոգնակի գոյական, ապա բնականաբար ստորոգյալը համաձայնում է հոգնակի ենթակայի հետ՝ Հինգ ընկերները ուղևորվեցին տարբեր փողոցներ: Առանձին դեպքերում ստորոգյալը կարող է դրվել հոգնակի թվով՝ եզակի թվով դրված և մեկից բարձր թվականով ուղեկցվող ենթակայի հետ (Հինգ ճոգին եկան), մանավանդ եթե առկա է էլ բառը՝ Հինգ ճոգին էլ եկան: Մեկից բարձր թվականով արտահայտված ենթակայի հետ դրվում է հոգնակի ստորոգյալ՝ Հինգն էլ իջան:

2) Հավաքական անունների հետ դրվում է եզակի ստորոգյալ՝ Ուսանողությունը պայմարում է խաղաղության ճամբար: Հազվագյուտ, դեպքերում հավաքական անվան հետ դրվում է հոգնակի ստորոգյալ՝ Համաձայնելով ըստ իմաստի՝ Ամբողջ բնակչությունը թափվեցին փողոց: Այսպիսի համաձայնությունը կոչվում է բախառություն: Բախառությունից պետք է խուսափել:

3) Եթե ենթակայի հետ դրվում են հետ, հետ միասին կապերով կամ գործիականով բառեր՝ ցույց տալով ենթակայի գործողության մասնակիցներին, ստորոգյալը համաձայնում է միայն ենթակայի հետ՝ Ես ընկերներիս հետ միասին գնացի

քանգարան: Մենք ուսուցիչների հետ միասին գնացինք քանգարան:

Առաջադրանք 85. Հետևյալ նախադասություններում ստորոգյալը համաձայնեցնել ենթակային, ընտրելով փակագծերում տրված ձևերից մեկը: Նշել հնարավոր տարբերակները և նրանց իմաստային-ոճական տարբերությունները:

1. Խաղաղասեր ուժերի Մոսկվայի կոնգրեսում (ներկայացված էին, ներկայացված էր) ավելի քան հարյուր (երկիր, երկրներ): 2. Պատգամավորների մեծ մասը կոնգրեսի փակումից հետո (սկսեցին, սկսեց) շրջագայել երկրում: 3. Համաշխարհային մամուլը նշում է, որ այդքան (մարդ, մարդիկ) (չէր մասնակցել, չէին մասնակցել) նախորդ համաժողովներից ոչ մեկին: 4. Ուսանողների զգալի մասն արդեն (հանձնել է, հանձնել են) ՊԱՊ համալիրի նորմաները: 5. Մի քանի (բանվոր, բանվորներ) (ուղարկվեց, ուղարկվեցին) ակումբի շինարարություն, իսկ մյուսները՝ այգեթաղի: 6. Ուսանողների ճնշող մասը քննությունների ժամանակ (ցուցաբերեց, ցուցաբերեցին) խոր գիտելիքներ: 7. Փոքրիկ հյուղակում կողք կողքի (նստած էին, նստած էր) տասը մարդ: 8. Ճանապարհի ուղորանից (երևում էր, երևում էին) (երկու սար, երկու սարեր): 9. Վեց հոգի (ճաշում էր, ճաշում էին) առաջին հերթին, ութը՝ երկրորդին: 10. Մրցումների ընթացքում մեր հանրապետության մարզիկների կողմից (սահմանվեցին, սահմանվեց) երեք համամիութենական (ռեկորդ, ռեկորդներ): 11. Մի աշուն որսկան Ասատուրի հետ (գնացի, գնացինք) Կաղնուտի ձորը որսի: 12. Շատ (մարդ, մարդիկ) (գնացեկավ, գնացին-եկան), բայց ծերունին մնաց անդրդվելի: 13. Սովետական (երիտասարդները, երիտասարդությունը) (պայքարում է, պայքարում են) վեհ իդեալների կենսագործման համար: 14. Երեկ երեկոյան ընկերներով (գնաց, գնացին) թատրոն: 15. Երկու օրից հետո ես և դու (մեկնելու ենք, մեկնելու եք) սպարապետի զորակայան: 16. Դուք և նրանք միասին (կհարձակվեն, կհարձակվեք) թշնամու ձախ թևի վրա:

Հետ գլխավոր անդամների քանակի, նախադասությունները լինում են երկկազմ և միակազմ: Երկկազմ նախադասությունն ունի երկու գլխավոր անդամ՝ ենթակա և ստորոգյալ, որոնք կա՛մ անմիջապես առկա են, կա՛մ հեշտությամբ կարող են վերականգնվել: Միակազմ նախադասությունն ունի միայն մեկ գլխավոր անդամ, որ կարող է ինքնին ավարտուն նախադասություն կազմել: Երկկազմ նախադասության գլխավոր անդամների նման միակազմ նախադասության գլխավոր անդամը կարող է հանդես գալ լրացումներով և առանց լրացումների:

Միակազմ նախադասությունները լինում են անենթակա և անդեմ: Անենթակա նախադասության գլխավոր անդամը ձևականորեն նման է երկկազմ նախադասության ստորոգյալին և կարող է արտահայտվել դիմավոր բայով կամ որևէ անվանական խոսքի մասի ու օժանդակ բայի զուգորդումով. օրինակ՝ Լուսանում է: Մթնեց: Գարուն է: Յուրտ է: Գիշերվա երկուսն է և այլն: Անդեմ նախադասության գլխավոր անդամն արտահայտվում է անորոշ դերբայով և գոյականով՝ առանց օժանդակ բայի. օրինակ՝ Չծխել: Ուտե՛րը պանել ուղիղ: Ահա՛ ֆադաֆը: Երեւա՛ն և այլն:

Գոյականով արտահայտված անդեմ նախադասությունները հաճախ են օգտագործվում գեղարվեստական խոսքում՝ այն ավելի արտահայտիչ ու անմիջական դարձնելու համար: Այսպիսի նախադասությունների գործածությունն այն տպավորությունն է ստեղծում, որ կարծես ամեն ինչ կատարվում է աչքի առջև. օրինակ՝ «Երեւան: Աստաֆյան փողոց» (ԵԶ), «Ամառ: Կեսօր: Ցույց է: Ցնցում» (ԱՎ) և այլն: Խոսքը ավելի արտահայտիչ դարձնելու և ընդգծելու նպատակով գրողը կամ բանաստեղծը նախադասությունը կարող է մասնատել և յուրաքանչյուր մասը անփոփոխ ձևով կամ որոշ փոփոխությամբ գործածել որպես առանձին նախադասություն. օրինակ՝ «Բայց ճիգ թափելով մի գերմարդկային՝ ես քայլում էի լուռ, ուշիուշով: Մենակ, անընկեր» (ԵԶ), «Այստեղ էր: 19 թվին: Հավաքվել էր բանակը Կարմիր» (ԵԶ), «Երեւան: Մեկը մայիսի»:

Աստաֆյան փողոցում խմբեր: Խանդավառ եղած, ելած միասին — կտրել են փողոցի ճամփեն» (ԵԶ):

Անենթակա նախադասությունների գործածությունը ևս ավելի բնորոշ է գեղարվեստական խոսքին. օրինակ՝ «Մթնեց: Ծերունին լուռ շարշարանքով Մի քանի կոճղեր դրեց կրակին» (ՀԹ): Խոսակցական երանգ ունի շեզոք բայերի կրավորաձև գործածությունը՝ գործողության անկարելիությունը ցույց տալու համար. օրինակ՝ Այդտեղ չի նստվի:

Առաջագրանք 86. Ցույց տալ միակազմ նախադասությունների ոճական դերը, հնարավոր դեպքերում գտնել համանիշ տարբերակներ:

Հարել է ուղեղը Իլյիշը,
Ինչպես պողպատե զսպանակ...

Հարկավոր է կռվել, չգիշել...

Հարկավոր է — Կարմիր Բանակ:

Հարկավոր է ցնցել գյուղացուն

Ու բանվորին կրթել:

Հարկավոր է քանդել հնի բերդը:

Հարկավոր են զրքեր, թերթեր...

Իսկ հետո՝ դպրոցին կգա հերթը:

Հարկավոր է բանվորի տղից

Պրոֆեսորներ ձուլել...

Հարկավոր է, որ ամեն աղախին

Սովորի պետություն դարձնել...

Հարկավոր է...

Ո՞րը թվել.

Հարցեր են՝ անծայր, անթիվ:

Իսկ մինչ այդ՝ հեռախոսը ֆրոնտից

Հագում է—

Շիֆր...

Բայց ի՞նչ է.

Կողքի սենյակում—

Աղմուկ է.

Խոսում են բարձր...

Մուծիկ է:
Ուզում է ինչ-որ բան:

— Ողջո՛ւյն արխաշադ Ալուն:
— Հաղթանա՛կ գործին Իլլիլի:

Փարիզ:
Մշուշ ու մահ:
Ես,
Պոետս,
Լենինյան բուլլետս՝
Պատին կոթնած ահա
Լսում եմ նրանց ձայնը,
Շշուկը:

Մի փոքրիկ քաղաքում էր:
Տասնևութը թվին:
Թշնամին դիմանում էր:
Կովելով մենք քաղաքը տվինք:
Թշնամին տիրել էր
Քաղաքի դիրքերին:
Մեր բոլոր ընկերները
Հնկան գերի,
Փողոցներում տեսա
Հազար ընկեր,
Որը քունքից զարկված,
Որը՝ վզից:
Ողջը ծանոթ մարդիկ,
Ծանոթ դեմքեր:
Հիմա դիակ դարձած՝
Փլատակների մոտ:

(Ե. Չառենց)

ՃԻ. Ծմական ի վար խոնավ խութեր,
Խոնարհ խոտ,
Մամուռի հոտ, սարսուռի հոտ,
Սունկի հոտ:

Ահռելի ձոր, մաշված առու,
Մրսած օդ,
Ցավի հոտ է, անձավի հոտ,
Մութի հոտ...

(Զ. Սահյան)

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Անցողական բայերը նախադասության մեջ կարող են հանդես գալ ներգործական կամ կրավորական ձևով և, դրան համապատասխան, ստեղծել շարահյուսական երկու համանիշ կառույցներ: Ներգործական կառույցի ուղիղ խնդիրը կրավորական կառույցում դառնում է ենթակա, ենթական՝ ներգործող անուղղակի խնդիր՝ բացառական հոլովով կամ կողմից, ձեռնով կապական բառերով՝ Աշակերտը գրեց շաբաթօրյունը — Շաբաթօրյունը գրվեց աշակերտի կողմից:

Ներգործական ու կրավորական կառույցների գործածությունը իմաստային-ոճական մի շարք կարևոր առանձնահատկություններ ունի:

1) Ներգործական կառույցի դեպքում խոսողի ուշադրության կենտրոնում գործողությունը կատարողին է, կրավորական կառույցի դեպքում՝ ներգործվողը:

2) Կրավորական կառույցի դեպքում խոսողը կարող է գանց առնել գործողությունը կատարողին՝ կարևոր չհամարելով նրա արտահայտությունը կամ պարզապես չիմանալով նրա մասին (Շաբաթօրյունը գրվեց). այսպիսի դեպքերում կորչում է համանշտությունը՝ կրավորական կառույցն այլևս հնարավոր չէ փոխարինել ներգործականով. այստեղ խոսողի ուշադրության կենտրոնում գործողության առարկայի վիճակըն է, և կրավորաձև բայը փաստորեն հանդես է գալիս չեզոքի իմաստով:

3) Կրավորական կառույցի ներգործող անուղղակի խընդիրը սովորաբար արտահայտվում է կողմից կապական բառով, մանավանդ երբ այն անձի, կազմակերպության, հիմնարկության և ընդհանրապես ինքնին ակտիվ՝ առարկայի

անուն է՝ Շաբադրությունը գրվել է աշակերտի կողմից: Պլանը կատարվել է գործարանի կողմից: Գրությունն ուղարկվել է դպրոցի կողմից և այլն:

Բացասական երանգ ունի ձեռնով կապական բառի գործածությունը՝ Գրիգորը նրա ձեռնով սպանվեց: Գողությունը նրա ձեռնով է կատարվել և այլն:

Իրի անունները սովորաբար ձևավորվում են բացառական հոլովով՝ Տերևները տատանվում են փամուց: Գրիգորը մաշվել է հիվանդությունից և այլն: Վերջին նախադասության հիվանդությունից ձևը կարող է մեկնաբանվել որպես պատճառի արտահայտիչ (պատճառի պարագա): Իրերի անունները որպես ներգործող խնդիր գործածվելու դեպքում երբեմն կարող են ձևավորվել գործիականով. դժվար է որոշակի սահման անցկացնել այսպիսի գործիականի և միջոցի անուղղակի խնդրի միջև. պարտեզը լցվեց տերևներով կառույցը համանիշ է տերևները լցրին պարտեզը ներգործական կառույցին:

Կրավորական կառույցի նախադասություններն առանձնապես բնորոշ են գիտական և վարչագործարարական ոճերի համար:

Առաջադրանք 87. Ցույց տալ կրավորական կառույցների ոճական առանձնահատկությունները:

ՄԱԿ-ի զլխավոր ասամբլեայում քվեների մեծամասնությամբ հավանություն տրվեց մի բանաձևի, որով կոչ է արվում արգելել քիմիական զենքը:

Բանաձևով հաստատվում է ամեն տեսակ քիմիական զենքի կատարելագործման, արտադրության ու պաշարների կուտակման արգյունավետ արգելքի և դրանք բոլոր պետությունների զինանոցից բացառելու անհրաժեշտությունը: Բոլոր երկրների կառավարություններին կոչ է արվում ջանքեր գործադրել այդ նպատակին հասնելու համար: Այն համոզմունքն է հայտնվում, որ ամեն տեսակ քիմիական զենքի լիովին արգելելու և այն ոչնչացնելու շուրջը շուտափույթ համաձայնություն հասնելը կլավացնի միջազգային խաղաղության ու անվտանգության հեռանկարները (մամուլից):

Առաջադրանք 88. Ներգործական կառույցները փոխարի-

նել կրավորականով և ընդհակառակը: Նշել իմաստային տարբերությունները:

1. Թվում է, թե վրանը հիմա կպատվի ուժեղ տարափից: 2. Մեր շուրջը բազմաթիվ խրամատներ կան, որ մենք ենք փորել: 3. Բահերը զնգում են, և դրանց բացած փոսերը իսկույն լցվում են ջրով: 4. Մեր շապիկները շորացել են, նորից թրջվել քրտինքով, բայց անելու դեռ շատ բան կա: 5. Չմերով ծածկում ենք խրամատների պատվարները, ռուսականությամբ քողարկում գնդացիները, հետևում, որ ամեն բան կարգին լինի: 6. Սկզբում հատ-հատ ընկնում են խոշոր կաթիլները, զարկվում տերևներին, ապա անտառը լցվում է խշշոցով, ու սկսվում է տարափը: 7. Քեզ նշանակել են այդ ջրկի հրամանատար: 8. Մեր դասակը զբաղեցրել է ապրանքատար գնացքի մի վագոն:

(Բ. Հովսեփյան)

ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ

Խնդրառությունը որպես բառերի կապակցության եղանակ ոճական լայն հնարավորություններ կարող է ընձեռել: Բոլոր բառերը չեն, որ կարող են խնդիրներ պահանջել, այսինքն՝ հանդես գալ որպես խնդրառու բառեր: Հայերենում որպես խնդրառու բառեր հանդես են գալիս բայերը (նեղանալ ընկերոջից, հիանալ պատկերով և այլն), ածականները (գործին անտեղյակ, սխալներից զերծ և այլն), կապերը (բացի ֆեզնից, ընկերներով հանդերձ և այլն): Երկրորդաբար խնդիրներ կարող են ստանալ նաև գոյականները, մանավանդ եթե նրանք ծագում են խնդրառու բայերից և ածականներից (ֆենել հայոց լեզվից — ֆենություն հայոց լեզվից, գործին անտեղյակ — անտեղյակություն գործին և այլն): Խնդրառության ամենից ավելի բազմազան արտահայտություններ և, հետևաբար, ոճական ամենից ավելի լայն հնարավորություններ ունի բայը: Համեմատաբար ավելի սակավ են ածականների և կապերի ոճական հնարավորությունները:

Ինչպես մնացած՝ դեպքերում, խնդրառության ոճական հնարավորությունները կապված են այն բանի հետ, որ միև-

նույն կամ մերձավոր իմաստները կարող են ձևավորվել տարբեր հոլովածներով ու կապերով, և, ընդհակառակն, միևնույն հոլովածներն ու կապերը կարող են արտահայտել տարբեր իմաստներ: Այս բոլոր դեպքերում հանդես են գալիս իմաստի և գործածությունների նուրբ տարբերություններ:

Միևնույն բայը կարող է միաժամանակ ստանալ մեկից ավելի խնդիրներ: Ներգործական բայերը, բացի ուղիղ խընդրից, կարող են ստանալ նաև անուղղակի խնդիրներ, շեղոք բայերն էլ կարող են ստանալ մեկից ավելի անուղղակի խընդիրներ՝ տալ մեկին մի բան, գրել մեկին մի բան, աղաչել մեկին մի բանի համար, բողոքել մեկին մեկի դեմ մի բանի համար (առթիվ), նշանակել մեկից մի բանի համար և այլն: Որոշ խնդիրներ կարող են դրվել ներգոյական հոլովով և այնպիսի կապերով, որոնք սովորաբար պարագայական հարաբերություններ են արտահայտում՝ աջակցել մեկին մի բանում, արդարանալ մի բանում, թերանալ մի բանում, ծիծաղել մի բանի վրա և այլն:

Միևնույն բայը կարող է ստանալ տարբեր խնդիրներ՝ արտահայտելով տարբեր իմաստներ՝ վիշտ ապրել (= զգալ), ապրել (= տառված լինել) իր գործով, այլև ապրել (= բնակվել) ֆաղափում. փող աշխատել (= վաստակել), աշխատել մի հոգվածի վրա (= հոգված գրել), աշխատել (= պաշտոնավարել) նիմնարկում. ելնել (= դուրս գալ) թշնամու դեմ, ելնել ստեղծված իրադրությունից (= հաշվի առնել ստեղծված իրադրությունը), հասնել (= գալ) ֆաղափ, արդյունքի հասնել (= արդյունք ստանալ) և այլն:

Միևնույն բայը կարող է ստանալ տարբեր հոլովներով. կամ կապերով խնդիրներ՝ միևնույն իմաստը կամ մերձավոր իմաստներ արտահայտելու համար (համանիշ խնդիրներ)՝ գերազանցել մեկին և մեկից, կառչել մի բանի և մի բանից, տառապել մի բանից և մի բանի համար, գրոհել մի բան և մի բանի վրա, ասել, մտածել, գեկուցել մի բան և մի բանի մասին և այլն: Այս դեպքում սովորաբար հանդես են գալիս որոշ նուրբ տարբերություններ. տառապել մի բանից (ընդգծվում է տառապանքի պատճառը), մի բանի համար (ընդգծվում է տառապանքի առարկան), մտածել մի բան (մի բան

պլանավորել, նախատեսել, նյութել), մտածել մի բանի մասին (մի բան դարձնել մտածողության առարկա):

Կան իմաստով մոտ, բայց տարբեր խնդրառությամբ արտահայտված բայական կապակցություններ, որոնք չի կարելի շփոթել. ուսումնասիրել հարցը — զբաղվել հարցով, ականջ դնել (ունկնդրել) ասածին — լսել ասածը, նկարագրել դեպքը — պատմել դեպքի մասին, դադարել գրելուց — վերջացնել գրելը, տիրել ֆադաֆին — գրավել ֆադաֆը և այլն: Պետք է զգուշանալ ուսումնասիրել հարցով, ականջ դնել ասածը, նկարագրել դեպքի մասին, դադարել գրել տիպի կապակցություններից:

Եթե իրար են հաջորդում տարբեր խնդրառություն ունեցող երկու կամ ավելի բայեր, ապա նպատակահարմար է մեկի մոտ դնել բուն գոյականը, իսկ երկրորդի մոտ՝ սրան փոխարինող դերանուն՝ պահանջված հոլովով կամ կապով՝ Զուրք մոտեցավ ֆադաֆին և երկար պաշարումից հետո այն գրավեց: Սուրենը սիրում էր հորը և հպարտանում նրանով և այլն: Սակայն որոշ դեպքերում, մանավանդ երբ առաջին բայի խնդիրը արտահայտված է դերանվամբ, ոճը շժանրաբեռնելու համար կարելի է դնել միայն մերձավոր բայի խնդիրը, իսկ մյուսը զեղչել՝ նայեց նրան և ճիացավ (նրանով), ճիասթափվեց նրանից և այլն՝ ընկերություն շարեց (նրա հետ) և այլն:

Ինչպես նշվել է, գոյականը կարող է խնդիր ստանալ, եթե բայանուն է կամ ածանցված է խնդրառու ածականից: Սակայն բայանուններն էլ միշտ չէ, որ պահպանում են համապատասխան բայերի խնդիրները: Քանի որ գոյականին սեռն ընդհանրապես հատուկ չէ, ուստի և անցողական բայերի ուղիղ խնդիրը բայից կազմված գոյականի մոտ չի կարող նույնությամբ պահպանվել. դիմավոր բայի և ուղիղ խնդրի կապակցությունը կամ ընդհանրապես հնարավոր չէ պատահալուել խնդիր և խնդրառու գոյականների կապակցությամբ, կամ հնարավոր է միայն ուղիղ խնդրի վերածումով կապի խնդրի՝ սիրել հայրենիք — սերը հայրենիքի հանդեպ (նկատմամբ) կամ սերը դեպի, հայրենիք: Անուղղակի խնդիրների պահպանումը համապատասխան բայանունների մոտ բավականին տարածված է (գեկուցել հարցի մասին — գեկուցում հարցի մասին, միջամտել գործին — միջամտություն գործին,

մոտենալ հարցին — մոտեցում հարցին և այլն), բայց այս դեպքում էլ կարող է տեղի ունենալ խնդրառության փոփոխություն (հիանալ հուշարձանով — հիացմունք հուշարձանի հանդեպ, ակնածել ավագներից — ակնածանք ավագների հանդեպ և այլն):

Գոյականի խնդրի գործածությունը որոշ առանձնահատկություններ ունի:

1. Հայերենի համար ավելի սովորական է խնդրի հետադաս գործածությունը, մանավանդ երբ խնդիր-խնդրառուի կապակցությունը առնվում է անկախ ձևով (վերնագիր, մակագրություն, կոչ և այլն), կամ հանդիպում է նախադասության վերջում՝ զեկուցում տնտեսության զարգացման հեռանկարների մասին, պայքար թշնամու դեմ, դավաճանություն հայրենիքին, մոտեցում հարցին և այլն:

2. Թեև հանդիպում են նախադաս գործածության դեպքեր (հատկապես թարգմանական գրականության մեջ), բայց ավելի լավ է այս դեպքերում, ըստ նպատակահարմարության, կա՛մ խնդիրը դարձնել հետադաս (հայրենիքի հանդեպ սերը — սերը հայրենիքի հանդեպ), կա՛մ խնդիր-խնդրառուի կապակցությունը փոխարինել հատկացուցիչ-հատկացյալի կապակցությամբ (հայրենիքի հանդեպ սերը — հայրենիքի սերը, մաթեմատիկայից բնությունը — մաթեմատիկայի բնությունը), կամ օգտագործել համապատասխան դերբայական դարձված (ժողովին մասնակցությունը — ժողովին մասնակցելը, փառափից փախուստը — փառափից փախչելը, այլև թշնամու դեմ հաղթանակը — թշնամու դեմ տարած հաղթանակը, նրա հանդեպ ատելությունը — նրա հանդեպ տարած ատելությունը):

3. Պետք է խուսափել խնդրի (հատկապես հետադաս խնդրի) գործածությունից այն բոլոր դեպքերում, երբ խնդրառուն դրված է թեք հոլովով կամ կապով, և ընդհանրապես երբ երկիմաստության վտանգ կա. լավ չեն, օրինակ, հետևյալ նախադասությունները՝ Բոլորը գոհ մնացին նրա զեկուցումից տնտեսության զարգացման հեռանկարների մասին: Նրա զեկուցումից տնտեսության զարգացման հեռանկարների մասին անհրաժեշտ եզրակացություններ արվեցին:

Օտարաբանություն պետք է համարել թեք հոլովներով հետադաս խնդիրների գործածությունը այն գոյականների մոտ,

որոնք բայանուններ չեն՝ տղաները մեր փաղափից, մարդը գնացփից: Այս արտահայտություններում փաղափից, գնացփից խնդիրները կարելի է փոխարինել համապատասխան հատկացուցիչներով և դերբայական լրացումներով՝ մեր փաղափ տղաները կամ մեր փաղափում բնակվող տղաները, գնացփ մարդը կամ գնացփից իջած մարդը:

Առաջադրանք 89. Ստորև բերվող օրինակներում ընդգծել խնդրառու բառը և խնդիրը, բացատրել խնդրառական առանձնահատկությունը: Վերացնել եղած սխալները:

1. Հավատարմություն հեղափոխական ավանդներին: 2. Անտարբերություն կարևոր գործի նկատմամբ. 3. Ազատություն Զիլիի հայրենասերներին: 4. Հատուցում ոճրի համար: 5. Առանձնահատուկ ուշադրություն մամուլի տարածմանը: 6. Դավաճանություն մարքսիզմ-լենինիզմին: 7. Կինոթատրոնների էկրանների վրա ցուցադրվում են «Տղաները մեր բակից», «Աղջիկը ունիվերսագից», «Մարդը գնացքից», «Աղջիկը Կիևից» կինոֆիլմերը:

Առաջադրանք 90. Ստորև բերվող զույգ բայերի հետ խընդիրներ գործածելով կազմել նախադասություններ: Պարզել թե ինչ հոլովներով են խնդիր առնում այդ բայերը, բացատրել իմաստային տարբերությունները:

Սկսել — ձեռնարկել, անհանգստանալ — մտահոգվել, համաձայնել — համաձայնվել, արգելակել — խոչընդոտել, հիմնավորել — հիմք դնել, զարմանալ — զմայլվել, տիրել — տիրապետել, զոհվել — զոհ գնալ:

Առաջադրանք 91. Փակագծերում տրված բառերը դնել անհրաժեշտ հոլովով, նշել հնարավոր տարբերակները և նրանց միջև եղած իմաստային տարբերությունները:

Կառչել (ճյուղ), մագլցել (ծառ), արշավել (Սյունիք), լըցվել (բաժակ), խոցել (ինքնասիրություն), Արամին հիշեցնել (պարտք), ծանոթանալ (Աշոտ, գործ), կանգնել (հեռու), ազդել (կամք), կաշել (պատ), սպասել (գնացք, աղետ), խնդրել (օգնություն), կանչել (օգնություն), գնալ (անտառ), կարոտել (երեխա), կարոտ (երեխա), զայրանալ (երեխա, արարք), գրոհել (թշնամի), ապավինել (բախտ):

Առաջադրանք 92. Տրված գոյականները գործածել կապե-
լի հետ անհրաժեշտ հոլովով:

1. Նախօրոք հայտարարված՝ տիեզերքի ուսումնասիրման
(ծրագիր) համաձայն օրերս ՍՍՀՄ-ում արձակվեց երկրի նոր
արհեստական արբանյակ: 2. Հաշվապահ Վահան Սեդրակյանն
աշխատանքից ազատվել է համաձայն իր (դիմում): 3. Ի գի-
տություն անձնական օգտագործման ավտոմեքենաներ (ունե-
ցողներ): 4. Անկախ քո (կարծիք) այդ հարցն արդեն լուծ-
ված է վաղուց: 5. Առանց ռազմական հզոր (ուժ) պարսից
տերություն հետ դժվար է շփվել: 6. Բացի (Կարեն) ոչ ոք
չէր կարողանում այդպես արագ լուծել թվաբանական խնդիր-
ները: 7. Մի փոքրիկ զորախումբ անմիջապես ելավ ընդդեմ
(թշնամի): 8. Հակառակ գործարանատերերի (պահանջ), բան-
վորներից ոչ ոք աշխատանքի չէր ներկայացել: 9. Երբ աչքերը
բացեց, տեսավ, որ (ինքը) հանդիպ կանգնած է արքայա-
զուստրը:

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասության բազմակի անդամների նկատմամբ կի-
քառելի են տրամաբանական դասակարգման ընդհանուր պա-
հանջները. նրանք ա) պետք է ունենան բաժանման մեկ
սկզբունք, բ) բացառեն միմյանց և գ) լրիվ ընդգրկեն թվարկ-
վող ամբողջությունը: Այսպես, կարելի է ասել տղաները և
աղջիկները, բանվորները, գյուղացիները և մտավորականները
և այլն, բայց ոչ տղաները, աղջիկները և ուսանողները, բան-
վորները, գյուղացիները և կանայք. կարելի է ասել ձայնեղ-
ները և խուլները, բայց ոչ՝ ձայնեղները և առաջնալեզվային-
ները: Եթե ոչ բոլոր բազմակի անդամներն են թվարկվում,
ապա չթվարկվողների համար գործածվում են և ուրիշներ, և
մյուսները (անձերի համար), և այլն (ոչ անձերի համար) ար-
տահայտությունները: Պետք է հետևել, որ և այլն-ից հետո
չհանդիպեն թվարկվող անդամների հետ շարահյուսորեն կապ-
ված այլ բառեր. խրախուսելի չեն, օրինակ, Հացը, միսը և
այլն սննդամթերքներ են, Հացի, մսի և այլնի համար տիպի
նախադասություններն ու բառակապակցությունները:

Եվ-ը կարող է միացնել ամբողջի և մասի հարաբերություն ունեցող մասերը միայն այն դեպքում, եթե նրան հաջորդում են մասնավորող հատկապես, առանձնապես, մասնավորապես կամ, հակառակ հարաբերության դեպքում, ընդհանրացնող ընդհանրապես, ընդհանրապես բոլոր բառերը. օրինակ՝ զեղարվեստական երկերը և հատկապես դասական հեղինակների ստեղծագործությունները. դասական հեղինակների ստեղծագործությունները և ընդհանրապես զեղարվեստական երկերը: Այս կապավորությունները կարող են հանդիպել նաև առանց և-ի:

Եթե նախապես նշվում է այն ամբողջը, որի մասերն են բազմակի (թվարկվող) անդամները, ապա վերջիններս սովորաբար պետք է համաձայնեն ամբողջի հետ և կառուցվեն միևնույն սկզբունքով. օրինակ՝ Փրադարանը բաղկացած է բազմատեսակ գրքերից՝ հաստափոր վեպերից, բազմահատոր փիլիսոփայական երկերից, գիտության ամենատարբեր բնագավառների պատկանող աշխատություններից, Սակայն ոճը շփանրացնելու նպատակով լրացման մասերը կազմող բառերը կարելի է չհղումել՝ ի տարբերություն ընդհանրացնող բառի՝ Փրադարանը բաղկացած է բազմատեսակ գրքերից՝ հաստափոր վեպեր, բազմահատոր փիլիսոփայական երկեր, գիտության ամենատարբեր բնագավառների պատկանող աշխատություններ: Հարկավոր է հետևել, որ թվարկման՝ իրարից հեռացած մասերը կազմված լինեն միևնույն ձևով, իրար չհաջորդեն դիմավոր և ոչ դիմավոր, համաձայնվող և չհամաձայնվող մասեր: Որոշ դեպքերում ընդհանրացնող բառերը կարող են դրվել թվարկումից հետո՝ Նկան Փրիզորը, Հակոբը, Ազատը, Վրույրը՝ իմ բոլոր ընկերները:

Թվարկվող բառերը կարող են իրար հաջորդել կամ առանց և, ու, միացական շաղկապների, կամ այդպիսի շաղկապներով: Գիտական և վարչագործարարական ոճերում սովորաբար գործածվում է և շաղկապը՝ դրվելով թվարկման նախավերջին և վերջին անդամների միջև՝ նիստին մասնակցում էին Հակոբյանը, Պետրոսյանը, Փրիզորյանը, Հայրապետյանը և Ավագյանը: Եթե հարկավոր է ցույց տալ թվարկվող մասերի ներքին բաժանումները, ապա և-ի հետ միասին գործածվում է ու-ն՝ բաժանման ավելի փոքր մասերը կապակցելու համար՝

Հանդիպմանը մասնակցում էին Պետրոսյանն ու Գրիգորյանը և Հայրապետյանն ու Ավագյանը: Այս տարբերությունը ավելի շեշտելու համար կարող են օգտագործվել մի կողմից, մյուս կողմից շաղկապական բառերը: Շաղկապի բացակայությունը կամ նրա կրկնությունը կարող են օգտագործվել խոսքին հուզական երանգ հաղորդելու համար՝ Գնացին բոլորը՝ հայրը, մայրը, եղբայրները, փուլերը կամ Գնացին բոլորը՝ հայրը և մայրը, եղբայրները և փուլերը: Միացման մասերը կարող են շեշտվել ե՛՛ — ե՛՛, բե՛՛ — բե՛՛, ոչ միայն — այլև, ժխտման դեպքում ո՛չ — ո՛չ ձուգաշաղկապներով: Միացական շաղկապը երբեմն կարող է դրվել կրկնվող բառերի միջև՝ խոսքն ուժեղացնելու և նրան հուզական երանգ հաղորդելու համար՝ միայն ու միայն, երկաբ ու երկաբ, շատ ու շատ և այլն:

Համադաս անդամների միջև կարող են հանդիպել ոչ միայն միացական այլև հակադրական ու տրոհական շաղկապներ՝ ըստ պահանջվող իմաստի՝ կներավիրես ոչ թե Հակոբին, այլ Գրիգորին, կտանեմ կա՛մ մեկին, կա՛մ մյուսին և այլն:

Բազմակի կարող են լինել նախադասության բոլոր անդամները՝ լինեն դրանք գլխավոր, թե երկրորդական: Բազմակի գլխավոր անդամներով նախադասությունները կոչվում են միավորյալ: Սկզբունքային տարբերություն չկա միավորյալ և բազմակի երկրորդական անդամներով նախադասությունների դրսևորման եղանակների միջև:

Առաջադրանք 93. Ցո՛ւյց տալ նախադասության բազմակի անդամների ոճական կիրառությունը հետևյալ հատվածներում:

1. Նաստյան շրջվեց և արագ գնաց իր սենյակը: Նրա դեմքը վառվում էր, աչքերն արտասովակալած էին: Իր սենյակում Նաստյան նստեց բազմոցի անկյունին: Նա նստել էր անշարժ, ոտքերը ծալած: Բերանը բաց, զարմացած աչքերով մի կետի նայելով՝ նա դանդաղ օրորվում էր ցավից:

Հետո Նաստյան հիշեց, որ հիմա կարող են մտնել սենյակ և ընթրիքի կանչել: Անհրաժեշտ էր շտապ հեռանալ: Նաստյան ոտքի թռավ, բացեց դուռը և թեթև ճիչ արձակեց. միջանցքում, դռան հետևում կանգնած էր Տոլյան:

(Կ. Պաուստովսկի)

II. 1. Բայց միաժամ հիշեց Հազկերտին: Վերակենդանացավ նրա նախանձափրփուր կերպարանքը, նրա օձական հայացքը, նրա վիշապաձայն գոչը: 2. Ահեղ արհամիրքը, երկրի կործանման վտանգը, արտաքին թշնամին, ինչպես երկրաշարժի դեմ, ժանտախտի, հեղեղի դեմ, միացրեց երկրի երեք դասերը, որ իրարից խորթ էին, իրար հակառակորդ և դարերով իրար հետ անհաշտ ապրել, ատել իրար, կռվել էին անվերջ: 3. Կյանքը, ամենուրեք կյանքը, ամենից վեր կյանքը հրամայեց մի առժամ հետաձգել դասային անհաշտելիությունը և փրկել ամեն մեկին իր դասը, իր կյանքը, իր գույքը, իր աշխարհը, որ հետո՝ շարունակեն իրենց պայքարն իրար դեմ: 4. Այս հավատից չեն կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ հուր, սուր... այն չի կարելի քանդել և հեռու նետել ո՛չ այժմ և ո՛չ ապա, և ո՛չ հավիտյանս, և ո՛չ հավիտենից հավիտյանս: 5. Ե՞րբ պիտի թողնես ունայն բաներ խառնելը մեծ գործին,— ասաց Գաղիշոն:

— Ունայն բանե՞ր:

— Ունայն, մանրուք, շնչին:

— Որո՞նք են:

— Այս որդիները, այս կինը, այս արյուն թափելը, այս ժողովուրդը... չգիտեմ, թե այլ ինչ... Ե՞րբ պիտի սկսես անխնա ջարդը... ջարդը հենց ընտանիքից, ազգականությունից, շրջապատից, հայից, պարսիկից, ամենից սկսած... ջարդ մինչև տակը, մինչև վերջին մարդը, մինչև հասնես հլու հնազանդին, կամակատարին, հպատակին... 6. Ձգեցիր հիվանդությունը, ձգեցիր հասցրիր մինչև այստեղ... Միևնույնը չէ՞ վերջում զոհել, թե սկզբում, երբ զոհ է պահանջում Մոլոխը: 7. Թագավորություն ես ուզում, առանց թագավոր լինելու մեջդ: Թագավորը մորթում է, ջարդում, ոչնչացնում: Թագավորը ոտնատակ է տալիս մարդու ամեն ինչը՝ խիղճը, պատիվը, հպարտությունը, գութը... իսկ դո՞ւ... Թագավորը ծախում է իր երկիրը, իր ժողովուրդը: Այո՛, տեր մարզպան, այո՛, տեր արքա... 8. Տոշորաշունչ ավազաբուքերի, դառնաղի հորաջրերի, անշունչ, անմարդ, ամայի անապատների բավիղ էր դա, որից դուրս գալու համար հնար չկար այլևս: 9. Աշխարհը կարծես քառսի մեջ էր, ուր բնությունը սանձարձակ ու ինքնիշխան՝ բռնադատում էր, ավերում, ժխտում, խլում

մարդու ամեն ապավենն, ամեն հանգրվան, կյանքի կարգ, կյանքի իրավունք, մի տեղ, մի անկյուն, մի ծածկ, մի որջ։ 10. Եվ այդ տարերային, օտար, թշնամի քառսի մեջ մարդու աչքը որոնում էր այդ անկյունը, բույնը, մի մտերիմ դուռ, կրակ, ժպիտ, կյանք, մի ջերմացած մարդկային շինվածքի, մարդկային գոյության ներկայությունը՝ այդ անծայրածիր, դժնի ամայության, մահի թագավորության մեջ։

(Գ. Գեմիրեյան)

ՏՐՈՀՈՒՄ ԵՎ ՏՐՈՀՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Նախադասության որոշ երկրորդական անդամներ կարող են առանձնացվել, տրոհվել իրենց լրացյալներից և դրանով իսկ ավելի ընդգծվել։ Տրոհումը կատարվում է զանազան միջոցներով՝ ա) մեծացվում է լրացման և լրացյալի միջև եղած դադարի շափը, որ գրության մեջ արտահայտվում է բութով կամ ստորակետով՝ ըստ հարաբերության տիպի. բ) լրացումը հետադասվում է լրացյալին. Գ)։ չհամաձայնվող լրացումը հնարավորության դեպքում համաձայնում է լրացյալի հետ։ Այս քոլոր փոփոխություններն ուղեկցվում են հնչերանգի համապատասխան փոփոխությամբ։ Տրոհվող լրացումների ամենից ավելի տարածված տեսակներն են բացահայտիչը և բազմանդամ դերբայական դարձվածը՝ Հակոբյանը՝ մեր դպրոցի ուսուցիչը, Երեկ մեկնեց ֆաղաֆ (հմմտ. Մեր դպրոցի ուսուցիչ Հակոբյանը երեկ մեկնեց ֆաղաֆ), Լաց լինելով դառն արցունքներով՝ նա ֆայլում էր անծանոթ ֆաղաֆի փողոցներով (հմմտ. Նա լաց լինելով ֆայլում էր անծանոթ ֆաղաֆի փողոցներով) և այլն։

Սակայն տրոհումը այս երկու դեպքով չի սպառվում։ Կարող են տրոհվել որոշիչը, պարագաները։ Տրոհվող որոշիչը սովորաբար հետադասվում է որոշյալին և անջատվում նրանից ավելի մեծ դադարով՝ Հակոբյանը, գունատ ու վշտանալ, կանգնած էր իր ֆանդված տան ավերակների առջև։ Անձնական դերանունները, որ ընդհանրապես նախադաս ածական որոշիչներ չեն ստանում, կարող են տրոհմամբ ստանալ՝ Ներսիսուծեցին նրանք՝ խոժոռաղեմ ու զայրացկոտ։ Ենթակայի

տրոհվող «որոշիչը միջին տեղ է գրավում բուն որոշչի և ձևի պարագայի միջև՝ բնորոշելով միաժամանակ և՛ ենթական, և՛ նրա գործողությունը: Գոյականով արտահայտված խնդիրների, պարագաների, ստորոգելիական վերադիրների դեպքում այն կատարում է բուն որոշչի դեր:

Տրոհվող պարագաների մի տեսակն են բազմանդամ դերբայական դարձվածները, որոնց մասին ասվեց: Սակայն կարող են տրոհվել նաև ոչ դերբայներով արտահայտված պարագաները, մասնավորապես դերբայներին փոխարինող բանուկները և բազմակի մակբայական լրացումները՝ Նա հանգիստ նայեց բոլորին՝ իր արժանիքների լիակատար գիտակցությամբ (= լիովին գիտակցելով իր արժանիքները): Գրիգորյանը ներս մտավ տուն՝ հանգիստ և դանդաղ քայլերով: Իմ ընկերները ուղղունեցին ներկաներին՝ բաժաձայն և ժպտադեմ:

Տրոհումը որոշ դեպքերում օգտագործվում է միատեսակ պարագայական՝ լրացումները տարբերակելու համար՝ Նա գնաց շատ հեռու՝ աշխարհի ծայրը: Այնտեղ՝ դառավոր ուռենիներին ստվերում, նստած էին իմ ընկերները և այլն: Միևնույն պարագայական դերը կատարող այս լրացումների միջև առկա է մոտավորապես նույն հարաբերությունը, ինչ տրվող բացահայտչի և բացահայտյալի միջև:

Կան տրոհման հատուկ դեպքեր. ա) Տրոհվող լրացումը կարող է բերվել առաջ՝ չհղովված ձևով՝ ի տարբերություն հղովված կամ կապ ունեցող լրացյալի՝ Երջանիկ մարդիկ, նրանց աննայտ է վիշտն ու տառապանքը, հղփացած հոգիներ, նրանք երբեք չեն իմանա թշվառի տանջանքը: բ) Տրոհվող և ընդգծվող (տրամաբանական շեշտ կրող) բառը վերածվում է առանձին (գլխավոր) նախադասության, և ու հարաբերական դերանվան միջոցով նրա մոտ դրվում է նախադասության մնացած մասը՝ որպես երկրորդական նախադասություն՝ Նա է, ու այս բոլորը խառնել է իրար (փոխանակ Նա է այս բոլորը խառնել իրար): Տրոհման այս եղանակը կիրառվում է ամենից առաջ այն բառերի նկատմամբ, որոնց հատուկ չէ տրոհման սովորական ձևը (այսինքն՝ ենթականի և խնդիրների, ապա նաև գոյականով արտահայտված պարագաների նկատմամբ)՝ Նրան էր, ու հանձնվեց դրոշը: Այնտեղ էր, ու եղվեցին և այլն: գ) Ստորոգելիական վերադիրն ընդ-

չթելու և առանձնացնելու համար օգտագործվում է ոչ այլ ինչ է, եթե ոչ արտահայտությունը՝ Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ հանցագործություն:

ԲԱՐՂ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Պարզ և բարդ նախադասությունները գործառական տարբեր ոճերում տարբեր կիրառություն ունեն։ Բարդ նախադասություններն ավելի բնորոշ են գիտական և վարչագործարարական ոճերի համար, երբ հարկավոր է ճշտորեն արտահայտել տրամաբանական զանազան հարաբերություններ։ Շատ քիչ են նրանք օգտագործվում առօրյա խոսակցական ոճում։ Գեղարվեստական և հրապարակախոսական ոճերում նրանց օգտագործման աստիճանը կախված է նյութի բնույթից և հեղինակի անհատական ոճի առանձնահատկություններից։ Այսպես, Թումանյանի արձակիչ դրանք ավելի քիչ են հատուկ, քան, օրինակ, Րաֆֆու և Մուրացանի երկերին։ Հետոսների խոսակցության ոճավորման ժամանակ բնականաբար պակասում է բարդ նախադասությունների թիվը՝ ըստ առօրյա խոսակցական ոճի առանձնահատկությունների։ Հրապարակախոսության մեջ, բացի հրապարակախոսների անձնական հակումներից, պարզ և բարդ նախադասությունների կիրառության հարցում մեծ նշանակություն ունի նյութի բնույթը. այստեղ հեղինակը, նյութին համապատասխան, կարող է հատուկ և կարճ նախադասություններից անցնել նկարագրական և տրամաբանական բնույթի բարդ նախադասությունների, և ընդհակառակն։

Տարբերություն կա նաև բարդ համադասական և բարդ ստորադասական նախադասությունների օգտագործման դեպքերի միջև։ Բարդ ստորադասական նախադասությունները ավելի շատ հատուկ են գիտական ոճին. առօրյա խոսակցական ոճում նրանց փոխարեն կարող են հանդես գալ պարզ և բարդ համադասական նախադասությունները։ Այս դեպքում քիչ է շեշտվում կառուցվածքի տրամաբանականությունը, առաջին պլանն է մղվում արտահայտչականությունը։

Այս նույն ձևով բարդ նախադասության շաղկապավոր և անշաղկապ տիպերից առօրյա խոսակցական ոճին և ընդ-

հանրապես հուզական բնույթի խոսքին ավելի հատուկ է անշաղկապը, որի դեպքում շաղկապները փոխարինվում են հընչերանգի համապատասխան տարբերություններով. տրամաբանական հարաբերություններն այստեղ չեն շեշտվում. դրանք կռահվում են խոսքի ընթացքից, առանձին բառերից, բայեղանակից, հնչերանգից, դադարներից, նախադասությունների բնական հաջորդականությունից: Անշաղկապ նախադասությունները, բնականաբար, չեն կարող արտահայտել տրամաբանական հարաբերությունների այն բոլոր նրբությունները, որոնք առկա են շաղկապավոր կապակցությունների դեպքում, հաճախ հնարավոր չէ ճշտորեն որոշել հարաբերությունների տարբեր տիպերը: Առանձնապես հաճախ են այն դեպքերը, երբ բաց են թողնվում ուր, թե շաղկապները՝ Ասաց՝ գնում է, Հիշո՛ւմ ես, ինչքան սիրում էիր դու (ԵԶ) և այլն: Բավական հաճախակի են նաև պարագայական զանազան հարաբերությունների անշաղկապ արտահայտության դեպքերը՝ Աչքի թեփեցիր՝ բանիդ տերը չես (Հենց ուր...) (ՀԹ): Տեսավ՝ չեն գալիս (ԵՐբ...) (ՀԹ): Բաց թողնենք այդ պատմությունը, նա արդեն հայտնի է քեզ (որովհետև...) (Մուր.): Ախ, տվե՛ք ինձ ֆաղցր մի ֆուն, Կյանքից հեռու սլանամ (...ուրպեսզի...) (ՀՀ) և այլն:

Որոշ դեպքերում, հատկապես առօրյա խոսակցական լեզվում, շաղկապները փոխարինվում են հատուկ կառույցներով: Ահա մի քանի օրինակ. ա) ճենց ուր շաղկապի փոխարեն խոսակցական լեզվում կարող է կրկնվել բայը ժխտված ձևով՝ Եկավ-չեկավ, աղմուկն սկսեց. այս նույն իմաստը կարող է արտահայտվել թե չէ բառերով՝ Եկավ թե չէ, աղմուկն սկսեց. Իհարկե, այս դեպքում առկա են հաջորդման անմիջականությունը արտահայտելու տարբեր աստիճաններ. բ) զիջման հարաբերությունը կարող է արտահայտվել բայի հրամայական եղանակով՝ Աշխարհ անցիր, Արարադի նման ճեմակ գազաթ չկա (ԵԶ). գ) պայմանի հարաբերությունը կարող է արտահայտվել հրամայականին նախորդող հարցական նախադասությամբ (Ուժ ունե՞ս, առաջն ա՛ն — ՄԽ), որ կարող է գործածվել նաև առանց հարցական հնչերանգի (Ուժ ունես, առաջն ա՛ն):

ՀԱՄԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԾԱՂԿԱՊՆԵՐ

Նախադասությունների համադասական կապակցության միջոցները գրեթե նույնն են, ինչ նախադասության բազմակի անդամների կապակցության միջոցները: Բացառություն են կազմում որոշ շաղկապներ, որոնք հատուկ են բարդ համադասական նախադասության մեջ մտնող նախադասություններին, բայց նախադասության բազմակի անդամներին: Այսպես, հակադրական իսկ շաղկապը կարող է կապակցել միայն համադաս նախադասությունները, բայց ոչ նախադասության համազոր անդամները: Իսկ-ի ճիշտ գործածության դեպքում հանդես են գալիս տարբեր ենթականեր, և նախադասությունները կառուցվում են ըստ տարբեր ելակետների: Այդպիսին է նաև եթե... ապա հակադրական գուգաշաղկապը, որ չպետք է շփոթել պայմանի երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապող եթե, եթե... ապա շաղկապների հետ. առաջին դեպքում կապակցվող նախադասություններից մեկը մյուսի կատարման պայմանը չէ, և նրանց միջև բայեղանակի տարբերություն չկա (եթե Գրիգորն իմ հարևանն է և իմ զբոսանքների ուղեկիցը, ապա Պետրոսը իմ գործակիցն է և գաղափարակիցը):

Կա համադասական կապակցության երկու տեսակ՝ բաղ-հյուսական և ներհակական: Բաղհյուսական կապակցության դեպքում համադաս նախադասությունները արտահայտում են տեղով և ժամանակով իրար հետ կապված կամ մտովի իրար հետ կապվող երևույթներ, դեպքեր, փաստեր և այլն: Ներհակական կապակցության դեպքում մի նախադասությունը հակադրվում է մյուսին կամ նույնիսկ ժխտում այն:

Նախադասությունների համադասական կապակցության հիմնական տեսակների ոճական առանձնահատկությունների և գործածության մասին հարկավոր է իմանալ հետևյալը:

Բաղհյուսական կապակցությունը սովորաբար արտահայտվում է այն շաղկապներով, որ հանդես են գալիս նախադասության բազմակի անդամների կապակցության դեպքում: Այստեղ ևս հիմնական բաղհյուսական շաղկապը և-ն է, որ միացնում է միևնույն նկարագրելի ամբողջության տարբեր

մասերը կազմող կամ հաջորդական գործողությունն արտահայտող նախադասություններ (Մովը մոնչում էր, և ալիքները ծեծում էին նավի կողերը, Ամպերը ցրվեցին, և ծագեց արևը և այլն): Ինչպես նշվել է, բաղճյուսական կապակցությունը կարող է արտահայտվել նաև առանց շաղկապի: Անշաղկապ կապակցություններն ավելի շատ հանդիպում են նկարագրական հատվածներում. շաղկապի գործածությունը սովորաբար մտցնում է հարաբերության որոշ նրբերանգ, շեշտում կապը, արտահայտում մասերի անհավասարազորությունը: Շեշտումը կարող է արտահայտել և շաղկապի կրկնությամբ, այլև թե'... թե', ո՛չ...ո՛չ, ոչ միայն...այլև շաղկապներով: Սրանցից ոչ միայն...այլև զուգաշաղկապը ավելի շատ հատուկ է գիտական և վարչագործարարական ոճերին:

Ներհակական կապակցությունը կարող է լինել ժխտական, հակադրական, տրոհական: Սրանց գործածության մասին մասնավորապես պետք է նշել հետևյալը:

Ոչ թե...այլ զուգաշաղկապն ունի ժխտական արժեք. այն ժխտում է առաջին նախադասության մեջ ասվածը և հաստատում երկրորդը: Եթե այլ-ին ավելացվում է նաև ընդհակառակն բառը, ապա երկու նախադասությունների իմաստների ներհակությունն ավելի է շեշտվում:

Ի տարբերություն ոչ թե...այլ ժխտական զուգաշաղկապի, որի դեպքում խոսողը առաջին նախադասությունում ասածը ժխտում է, կա՛մ...կա՛մ տրոհական շաղկապների դեպքում խոսողը հնարավոր է համարում երկուսից մեկի կամ մյուսի բացառումը, դրանցից մեկնումեկի ընտրությունը. կամ-ի փոխարեն հարցական նախադասությունների մեջ գործածվում է թե-ն:

Իսկ շաղկապն արտահայտում է բացարձակ հակադրություն, բայց, սակայն շաղկապները սահմանափակման հակադրություն. առաջինում ասվածը երկրորդում սահմանափակվում է: Սրանցից բայց-ը ավելի նպատահարմար է գործածել միայն բարդ համադասական նախադասության ներսում, սակայն-ը՝ նաև անկախ նախադասությունների սկզբում: Բայց-ից ավելի թույլ հակադրություն է արտահայտում միայն թե շաղկապը: Բայց-ն ավելի ընդհանուր գործածություն ունի, քան սակայն-ը և միայն թե-ն, որոնք հա-

տուկ են գրքային լեզվին: Էլ ավելի գրքային են ընդհակառակն, այնուամենայնիվ հակադրական բառերը: Իսկ շաղկապը գեղարվեստական խոսքում կարող է հանդես գալ երբեմն մի քանի անգամ՝ հակադրական հարաբերությամբ կապված զուգահեռ նախադասությունների միջոցով խոսքն ավելի արտահայտիչ դարձնելու համար (Դու միշտ ուրախ ես, իսկ ես՝ միշտ տխուր, դու երջանիկ ես, իսկ ես՝ մի թշվառ, քեզ համար ամեն ինչ կա, իսկ ինձ համար՝ ոչինչ): Խոսակցական լեզվում կարող են կա՛մ...կա՛մ-ի փոխարեն հանդիպել հա՛մ...հա՛մ, քայց-ի փոխարեն՝ համա փոխառյալ շաղկապները, որոնք խոսքին բարբառային երանգ են տալիս: Մինչդեռ շաղկապը արտահայտում է հակադրական հարաբերություն, ինչպես իսկ-ը, բայց ժամանակային որոշ երանգով. այն հատուկ է գրքային լեզվին:

ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՇԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Որպես բարդ ստորադասական նախադասության մասերի կապակցող միջոցներ հանդես են գալիս հարաբերական բառերն ու շաղկապները ստորադաս նախադասության և հարաբերյալներն ու հարաբերակից բառերը գերադաս նախադասության մեջ:

Գերադաս ու ստորադաս նախադասությունների զուգորդման և ստորադաս նախադասությունների կառուցման բազմազան եղանակները, կապակցության համանիշ միջոցները, հարաբերյալների առկայությունն ու բացակայությունը լեզվին հաղորդում են ոճական-արտահայտչական ճկունություն և հնարավորություն տալիս արտահայտելու մտքի նուրբ տարբերություններ:

ՈՐ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ ԵՎ ՈՐ ԾԱՂԿԱՊ

Ուր-ը կարող է հանդես գալ և՛ որպես հարաբերական դերանուն, և՛ որպես շաղկապ: Առաջին դեպքում նա կարող է

հոլովվել և հող ստանալ, երկրորդ դեպքում՝ ոչ: Սակայն, ինչպես նշվել է դերանունների գործածության կապակցությամբ, որ հարաբերական դերանվան հողը և հոգնակի վերջավորությունը կարող են զանց առնվել ոճը շփանրաբեռնելու համար: Այս դեպքում պետք է հիշել, որ հարաբերական դերանունը նախադասության անդամ է, շաղկապը՝ ոչ: Որ հարաբերական դերանունը գործածվում է որոշիչ (հարաբերական) երկրորդական նախադասություններում. օրինակ՝ Նա մի մարդ է, որին բոլորը սիրում են, Նա մի մարդ է, որը (կամ որ) հայտնի է ողջ աշխարհին. Սրանք ընկերներ են, որոնք (որ) իրավունք ունեն պահանջելու ամեն ինչ: Որ շաղկապը գործածվում է ամենից առաջ ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը և մեջբերվող անուղղակի խոսքը գերադասին կապելու համար. օրինակ՝ Գրիգորն իմացավ, որ գործը չի հաջողվում. Նա ասաց, որ գործը չի հաջողվում: Ով-ը, ինչ-ը երբեմն կարող է ուղեկցվել որ թարմատար շաղկապով, մանավանդ առաջադիր ստորադաս նախադասության մեջ՝ Ով որ իմացավ, ծիծաղը պրծավ (ՀԹ). Ինչ որ հաբցրին, չպատասխանեց: Ով որ, ինչ որ կապակցությունները կարող են նշանակել ով էլ որ, ինչ էլ որ՝ ավելի թույլ շեշտված՝ Ով (էլ) որ գա, ամանը շտաֆ. Ինչ (էլ) որ ասի, չպատասխանեմ:

Արտահայտության մի հատուկ եղանակ է, երբ որ հարաբերական դերանունը վերաբերում է ողջ գերադաս նախադասությանը և ըստ ստորադաս նախադասության մեջ ունեցած պաշտոնի ցույց է տալիս երկու նախադասությունների բոլոր հնարավոր հարաբերությունները՝ Ես ամեն ինչ իմացա, որ ինձ նոր խորհրդածությունների առիթ տվեց. Ես ամեն ինչ իմացա, որի հետևանքները հետո միայն կարողացա կշռադատել. Ես ամեն ինչ իմացա, որից համապատասխան եզրակացություններ արեցի և այլն: Այս բոլոր դեպքերում որ-ը կարող է փոխարինվել և դա, և դրա, և դրանից տիպի կապակցություններով:

Որ-ի փոխարեն, մանավանդ մեջբերվող անուղղակի խոսքի դեպքում, որպես շաղկապ կարող է գործածվել թե-ն. սրանց գործածության մասին կարելի է նշել հետևյալը. ա) որ-ն արտահայտում է համեմատաբար հավաստի, թե-ն կասկածելի, թեական իրողություն՝ Ասում են, որ Գրիգորը հիվանդ

է. Ասում են, թե Գրիգորը հիվանդ է. բ) թե-ն կարող է դրվել ուր-ի փոխարեն առանց թեականութիւն արտահայտելու՝ խոսքի բազմազանության (-ու-ը չկրկնելու) համար՝ Ասաց, որ հայտնի, թե ինքը հիվանդ է. գ) ուժեղ կասկած արտահայտելու համար ու-ը կամ թե-ն կարող են ուղեկցվել իբր, իբրև բառերով՝ որ իբր, թե իբր, իբրև թե:

Ընդհանուր առմամբ խոսակցական լեզվում ու-ը կարող է հանդես գալ որպես ընհանրական շաղկապ՝ առանց հարաբերյալի՝ արտահայտելով ժամանակի, պատճառի, պայմանի և այլ հարաբերութիւններ. գրքային լեզվում գերադաս նախադասության մեջ հանդես են գալիս համապատասխան հարաբերյալներ:

ՁԵՎԻ ԱՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ձևի ստորադաս նախադասութիւնը կարող է կապակցվել գերադասի հետ ամենից առաջ ինչպես հարաբերական բառով, որին գլխավորի մեջ համապատասխանում են այնպես, այնպես էլ հարաբերյալները՝ Անում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Հարաբերյալը երբեմն կարող է բացակայել (Արևը փայլում էր, ինչպես կարող է փայլել գարնանային արևը). այս դեպքում խոսքն ավելի քիչ դատողական է և կարող է օգտագործվել գեղարվեստական երկերում՝ համեմատության համար: Ավելի գրքային է այս տեսակետից ինչպես ու-ը (ինչ ձևով-ուր)՝ Կանեմ ինչպես ուր պահանջվում է: Հնացած է ինչպես-ի փոխարեն որպես-ի գործածութիւնը՝ Ես կկարգադրեմ բոլորը, որպես պահանջում է կախադրը (Բ): Ընդհակառակն, խոսակցական-բարբառային երանգ ունի ինչպես, ինչպես-ուր-ի փոխարեն զնց ուր-ի գործածութիւնը: Ենթադրական կամ կասկածելի նմանութիւն են արտահայտում ասես, ասես թե, որ իբր, թե, որ թե, իբր շաղկապները՝ Ասես մի հեղեղ վեր կենար հանկարծ... գլուղից սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ): Առաքելն այդ օրից ձեացնում էր այնպես, որ իբր թե Մանասին չի էլ տեսնում (ԱԲ) և այլն: Սրանցից ուրպես թե-ն արդեն հնացած է:

Ածականի բաղդատական աստիճանի դեպքում քան շաղ-

կապի հետ միասին օգտագործվում է ավելի բառը՝ դրվելով ստորադաս նախադասության մեջ՝ Նա ավելի գեղեցիկ էր, քան ես կարող էի պատկերացնել:

2ԱՓ ՈՒ ՔԱՆԱԿԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Չափ ու քանակի ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցվում են ուրբան, ուշափ, ինչքան, քանի հարաբերական բառերով, որոնց գերադասների մեջ համապատասխանում են այնքան, այնչափ, նույնչափ, նույնքան հարաբերյալները՝ Ուրբան շատ էր տեսնում, այնքան ավելի էր ուզում տեսնել. Քանի շատ էր լուսանում, այնքան նրա վախը սաստկանում էր և այլն: Հարաբերյալները կարող են չդրվել, և այս դեպքում հարաբերական բառերը սովորաբար ուղեկցվում են որ-ով՝ ուրբան որ, ինչքան որ (բայց ոչ՝ քանի որ):

ՏԵՂԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Տեղի ստորադաս նախադասությունները գերադասների հետ կապվում են ուրտեղ, ուր հարաբերական բառերով, որոնց գերադասների մեջ համապատասխանում է այնտեղ հարաբերյալը: Բնականաբար ուրտեղ-ը և այնտեղ-ը կարող են հանդես գալ հոլովված ձևով՝ ուրտեղից, ուրտեղով և արտահայտել մի տեղից ելնելը, մի տեղով անցնելը: Ուրտեղ, ուր բառերի փոխարեն կարող է հանդիպել որ կողմը կապակցությունը՝ իր տարբեր հոլովածներով՝ Գնում է (այն կողմը), ուր կարգադրված է. Գնում է, որ կողմը պատահի:

ԺԱՄԱՆԱԿԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի շաղկապներից ամենատարածվածը և ոճականորեն չեզոքը երբ-ն է: Ըստ գերադաս և ստորադաս նախադասությունների բայական ժամանակների բնույթի և շարա-

դասության՝ երբ-ով նախադասութիւնը կարող է արտահայտել և՛ միաժամանակյա, և՛ հաջորդող, և՛ նախորդող գործողութիւն՝ Կրակն էր ցայտում նրանց աշխ-ունքից, շանթը՝ շրթունքից, երբ խոսում էին ծով ամբոխի մեջ վիշտ ու կարիքից (22)։ Երբ մոտեցավ փաղափն, եղանակն արդեն պարզվել էր. երբ նամակը տուն հասավ, ես նանապարն ընկա։ Միաժամանակյա գործողութիւն արտահայտելու համար՝ գործածվում են մինչ, մինչդեռ, իսկ հաջորդող գործողութիւն արտահայտելու համար՝ քանի, քանի դեռ շաղկապները՝ Մինչդեռ նա խոսում էր, ես շարունակում էի գրել. Հեռացիր, քանի դեռ չեմ բարկացել (ՎՓ)։ Հենց որ շաղկապն արտահայտում է անմիջապէս նախորդող գործողութիւն, մինչև որ-ը՝ ժամանակի տեղութիւն. սրանցից առաջինն ունի խոսակցական, երկրորդը՝ գրքային երանգ։ Խոսակցական լեզվում երբ-ը հաճախակի փոխարինվում է որ-ով՝ Որ գնա, ինձ տեղյակ կպահի։

ՊԱՏՄԱՌԻ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատճառի հարաբերութիւնը սովորաբար արտահայտվում է որովհետև շաղկապով։ Եթե այդ շաղկապով նախադասութիւնը նախադասվում է գերադասին, ապա վերջինիս մեջ հանդես են գալիս ուստի, ուստի և, ապա, ապա ուրեմն, դրա համար, դրա համար էլ, այդ պատճառով, այդ պատճառով էլ հարաբերակից բառերը։ Պատճառի հարաբերութիւնը կարող է արտահայտվել նաև շաղկապական այլ բառերով։ Դրանցից քանի որ-ը գիտական և վարչագործարարական ոճերում գործածվում է առաջադիր ստորադաս նախադասութիւններում՝ ունենալով գրքային երանգ՝ Քանի որ ամեն ինչ հայտնի է դարձել, Ձեր գրութիւնն ավելորդ է։ Ընդհակառակն, ետադաս գործածութիւնմբ նա հանդես է գալիս ավելի շատ խոսակցական լեզվում և ունի ոչ այնքան որոշակի պատճառական արժեք, որքան պայմանի ու ժամանակի երանգ՝ Ձեր գրութիւնը դառնում է ավելորդ, քանի որ ամեն ինչ արդեն հայտնի է։

Խոսակցական լեզվում որովհետև-ը կարող է փոխարինվել որ շաղկապով, որ ուղեկցվում է նրանից, նրա համար,

այն պատճառով հարաբերյալներով (այդ հարաբերյալները կարող են ուրիշ հետ միանալ և միասնական շաղկապի արժեք ստանալ)՝ Այդ նրանից է, որ ձեզ ուրիշ ոչինչ չեն սովորեցրել. եկել է այն պատճառով, որ այլևս անհնար է դարձել ուրիշի տանը մնալը: Սովորական է խոսակցական լեզվի համար պատճառի արտահայտությունը չէ՞ որ կապակցությամբ, որ զգալի չափով պակասեցնում է խոսքի դատողականությունը և նրան տալիս հուզական երանգ:

Ավելի շատ գրքային լեզվին են հատուկ որհանով որ, այն-
ֆան որհան, ֆանգի շաղկապները, որոնցից վերջինը արդեն ընկալվում է որպես հնարանություն: Ավելի թույլ է պատճառի արտահայտությունը նույնպես գրքային երանգ ունեցող մանավանդ որ շաղկապի դեպքում:

Ըստ այն բանի, թե ինչի՞ վրա է կենտրոնացած խոսողի ուշադրությունը, պատճառը և հետևանքը կարող են արտահայտվել նաև հակառակ հարաբերությամբ, այսինքն՝ պատճառի ստորադաս նախադասությունը կարող է հանդես գալ որպես գերադաս, իսկ հետևանքը կարող է արտահայտվել ստորադաս նախադասությամբ. օրինակ՝ Նա մինչև անգամ ձեռքը սեղմեց կրծքին, որովհետև սիրտը սաստիկ արագությամբ սկսեց բաբախել — Սիրտը սաստիկ արագությամբ սկսեց բաբախել, այնպես որ նա մինչև անգամ ձեռքը սեղմեց կրծքին (նշ): Հետևանքի ստորադաս նախադասությունը արտահայտվում է առաջին հերթին այնպես որ շաղկապով՝ Երեք օր անընդմեջ ձյուն էր գալիս, այնպես որ փողոցները և տանիքները ծածկված էին ձյունի հաստ շերտով: Այս նույնը կարող է արտահայտվել նաև որ շաղկապով և գերադաս նախադասության մեջ գտնվող այնպես, այլև այն աստիճան, այն տեսակ, այնքան, այնչափ ցուցական բառերով ու կապակցություններով՝ Այնպես անհետացավ, որ ես այլևս նրան չկարողացա գտնել. Այնքան էր առաջ անցել, որ շուտով կմոտենալ գետափին և այլն:

Սրանցից այն աստիճան որ, այնչափ որ կապակցությունները գրքային են, իսկ այնպես որ, այնքան որ, այն տեսակ որ կապակցությունները հանդիպում են նաև խոսակցական լեզվում, բայց այն-ի բարբառային էն արտասանությամբ՝ էնպես որ, էնքան որ, էն տեսակ որ:

Եթե գլխավոր նախադասությունը հարցական է, մանավանդ երբ հարցական բառեր է պարունակում, որ-ը կարող է հետևանք ցույց տալ, առանց ցուցական բառերի և բառակապակցությունների՝ Ե՞րբ խմեցիր, որ հարբես:

Որոշ դեպքերում որովհետև, քանի որ շաղկապների հետ հանդիպող ուստի, ուստի և, ուրեմն, ապա ուրեմն, հետևաբար, հետևապես բառերը կարող են հանդիպել առանց հիշյալ շաղկապների, հանդես գալ որպես ինքնուրույն շաղկապներ և արտահայտել հետևանք՝ Դուրս իշխանություն եմ գործադրում, ուրեմն դուրս իշխանություն եմ. Այդ բոլորը նա արել է կանխամտածված ձևով, հետևաբար իսկական հանցագործ է և այլն: Այս շաղկապները հատուկ են գրքային լեզվին և նախադասությունների ավելի թույլ կապ են արտահայտում:

ՊԱՅՄԱՆԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Պայմանի ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապակցող հիմնական շաղկապը եթե-ն է: Պայմանի նախադասությունը սովորաբար նախորդում է գերադասին, բայց կարող է նաև հաջորդել և նույնիսկ միջադրվել: Նախորդող ստորադաս նախադասության դեպքում գերադաս նախադասության մեջ կարող են հանդես գալ ապա, հապա բառերը (վերջինս՝ խոսակցական լեզվում և հատկապես հարցական նախադասության դեպքում)՝ Եթե Գրիգորը գա, ես կգնամ. Եթե Գրիգորը գա, ապա ես կգնամ. Եթե Գրիգորը նրա մասին այդպես է ասում, ապա ի՞նչ կասի մյուսների մասին:

Ինչպես պատճառի, նպատակի և այլ նախադասությունների, այնպես էլ պայմանի նախադասության դեպքում պայմանի հարաբերությունը կարող է արտահայտվել որ շաղկապով, որը խոսակցական լեզվում ինքնին պայման է արտահայտում (որ գա, կասես), իսկ գրքային լեզվում ուղեկցվում է այն պայմանով հարաբերյալով (Այդ բոլորը կանեմ միայն այն պայմանով, որ նա վերադառնա): Իբրև ինքնուրույն շաղկապ կարող է հանդես գալ պայմանով որ կապակցությունը:

Եթե-ի փոխարեն իբրև պայմանի արտահայտիչ կարող են հանդես գալ երբ, երբ որ ժամանակային շաղկապները՝ Ժա-

մանակային որոշ երանգով՝ երբ գա (կամ՝ երբ որ գա), խոստումս կկատարեմ:

Խոսակցական լեզվին հատուկ են նաև մի շարք այլ շաղկապներ և շաղկապական բառեր՝ պայմանի արտահայտություններ՝ *թե, թե որ, թե չէ, մեկ որ, ճիմա որ, ճամա թե որ* (վերջին երկուսը՝ բարբառային երանգով)՝ *Թե* կասի կանեմ. *Թե* որ ասի, կանեմ. *Թող* գա, *թե* չէ չեմ անի. Ամա *թե* որ ձեռնեմ *ճանել*, *ճոգիներդ* կհանեմ (*ՀԹ*) և այլն:

ԶԻՋԱԿԱՆ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Զիջական (հակառակ հիմունքի) ստորադաս նախադասությունը իմաստով հակադրվում է պատճառի և պայմանի ստորադաս նախադասություններին: Նա ցույց է տալիս, որ թեև տվյալ պատճառը կամ պայմանը չկա, բայց գերադաս նախադասության մեջ արտահայտված գործողությունը մնում է ուժի մեջ՝ Քանի որ Գրիգորը եկել է, ես իմ բոլոր խոստումները կկատարեմ — Թեև Գրիգորը չի եկել, բայց ես իմ բոլոր խոստումները կկատարեմ. Եթե Գրիգորը գա, ես իմ բոլոր խոստումները կկատարեմ — Թեև Գրիգորը չի գալու, բայց ես իմ բոլոր խոստումները կկատարեմ:

*Զիջական նախադասությունները կապակցվում են թեև, թեպետ, թեպետ և, թեկուզ, թեկուզ և շաղկապներով, որոնց գերադաս նախադասության մեջ համապատասխանում են բայց, սակայն և ավելի ուժեղացնող բայց և այնպես, այնուամենայնիվ, բայց այնուամենայնիվ, այնուհանդերձ հարաբերակից շաղկապներով: Զիջական շաղկապները սովորաբար դրվում են ստորադաս նախադասությունների սկզբում, բայց կարող են դրվել նաև ենթակայից հետո, մանավանդ եթե ստորադաս նախադասության ենթական նույնն է գերադասի ենթակայի հետ՝ Թեև նա ճիվանդ էր (կամ նա թեև ճիվանդ էր), բայց տեղից վեր կացավ: Հազվադեպ է զիջական շաղկապների գործածությունը ստորադաս նախադասության վերջում՝ Քունը տանում էր թեև, բայց նա մտածում էր էն փոքրիկ աղջկա վրա (*ՀԹ*): Զիջական նախադասությունները սովորաբար դրվում են գերադաս նախադասություններից առաջ, բայց կա-*

րող են դրվել և հետո, մանավանդ երբ նրանց իմաստը չի շեշտվում:

Զիջական բուն շաղկապների փոխարեն երբեմն գործածվում են նաև շնայած ուր, շնայելով ուր, նույնիսկ միայն շնայած բառերն ու կապակցությունները, բայց դրանց գործածությունը խրախուսելի չպետք է համարել. առանձնապես պետք է հիշել, որ շնայած-ը հանդես է գալիս որպես կապական բառ (Չնայած Գրիգորի գալուն՝ ես մեկնելու եմ), և նրա գործածությունը քեև-ի փոխարեն շեղում է գրական լեզվի կանոնից (Չնայած Գրիգորը գալիս է... փոխանակ Թեև Գրիգորը գալիս է...):

Զիջական նախադասությունը պայմանի նախադասության մեջ արտահայտվածի ժխտումն է, ուստի և երբեմն պայմանի եթե շաղկապը միայնակ կամ էլ, մինչև իսկ, նույնիսկ բառերի ուղեկցությամբ և բայի ժխտական ձևով կարող է արտահայտել զիջական իմաստ՝ եթե դու չհամաձայնես, ես առանց քեզ էլ կգնամ (Բ). Եթե դու չգաս էլ, միևնույնն է ես կգնամ. Եթե մինչև իսկ չհաջողվի, ես դարձյալ կգնամ և այլն:

Խոսակցական լեզվում զիջական իմաստը կարող է արտահայտվել հարաբերական ով, ինչ, ուր, որտեղ, ինչքան և շաղկապական էլ, ուր, ուր էլ բառերի օգնությամբ, մանավանդ երբ գլխավոր նախադասության ստորոգյալը ժխտական ձև ունի՝ Ուր էլ լինեմ, չեմ մոռանա (ԵԶ). Ինչքան էլ գրի, չեմ պատասխանի և այլն: Որոշ դեպքերում էլ-ի փոխարեն կամ նրա հետ միասին կարող են հանդես գալ ուզել բայը և ուզել-չուզել հարադրական բայը՝ Ով ուզում է գա, չեմ գիշի. Ինչ ուզում եմ ասեն, ասածս անելու եմ. Ուզե՛ր-չուզե՛ր, պիտի գնա՛ր և այլն:

ՆՊԱՏԱԿԻ ՍՏՈՐԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նպատակի ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է որպեսզի շաղկապով, որ հատուկ է գրքային լեզվին: Խոսակցական լեզվում ավելի սովորական է որ շաղկապի գործածությունը՝ բայի ըղձական եղանակի հետ միասին՝ Գնաց, որպեսզի տեղյակ պանի — Գնաց, որ տեղյակ պանի:

խոսակցական լեզվում հանդիպում են նաև նպատակի արտահայտության այլ միջոցներ՝ թե, թե ինչ է, ինչ է թե, թե ուր, թե շիինի, շիինի թե շաղկապները (վերջին երկուսը ժխտական արժեքով)՝ Ձայն չունի, թե երգի. Գնա, գնա, թե գտնես (ՀԹ). Երեխային փաթաթել է, թե շիինի հիվանդանա և այլն:

ԲԱՐԴ ԱՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ՊԱՐԶԻ

Բարդ ստորադասական նախադասությունների մեծ մասը կարող է փոխակերպվել պարզի, և ընդհակառակն: Այս բանը կատարվում է խոսքի բազմազանության համար, և արտահայտման տարբեր տիպերը հարկավոր է նպատակահարմար կերպով օգտագործել խոսքի տարբեր տեսակներում: Բարդ ստորադասական նախադասությունը պարզի փոխարկելիս հարկավոր է նկատի ունենալ հետևյալը.

1) Փոխակերպումը տեղի է ունենում բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասություններից մեկնումեկը (սովորաբար ստորադասը) արտահայտելով դերբայական դարձվածով կամ բայանվանական կառույցով՝ Նա դասի չէր գալիս, որովհետև հիվանդ էր — Նա դասի չէր գալիս հիվանդ լինելու պատճառով կամ Նա դասի չէր գալիս հիվանդության պատճառով:

2) Փոխակերպումը ոճականորեն լիովին հավասարարժեք նախադասություններ չի ստեղծում. բարդ ստորադասական նախադասության դեպքում միշտ էլ ստորադաս նախադասության իմաստն ավելի շեշտված է, քան, օրինակ, համապատասխան դերբայական դարձվածի դեպքում՝ Ես գնում եմ, ու տեսնեմ նրան — Ես գնում եմ նրան տեսնելու համար:

3) Բարդ նախադասության պարզումը ոչ բոլոր դեպքերում է նպատակահարմար կամ հնարավոր. ա) խիստ ընդարձակ ստորադաս նախադասության փոխակերպումը դերբայական դարձվածի կարող է խճողել և ծանրացնել մտքի արտահայտումը՝ Նա պատմում էր, որ մի ֆանի օր առաջ տեսել է իր նախկին ընկերներից մեկին՝ Գրիգորին — Նա պատմում էր մի ֆանի օր առաջ իր նախկին ընկերներից մեկին՝

Գրիգորին, տեսած լինելու մասին. բ) *Եթե փոխակերպվող նախադասության մեջ կա անորոշ առումով տրականաձև խընդիր, ապա փոխակերպումը կարող է առաջ բերել կողմնակի ենթակայի շփոթում հատկացուցիչի հետ. եթե փոխակերպումըն այնուամենայնիվ կատարվում է, ապա կողմնակի ենթական պետք է անջատել բուժով և ըստ հնարավորին փոխել նրա շարահասությունը. օրինակ՝ Նա պատմում էր, որ մի ֆանի օր առաջ Գրիգորը ճանդիպել է ավագակների — Նա պատմում էր մի ֆանի օր առաջ Գրիգորի՝ ավագակների (կամ Գրիգորի՝ մի ֆանի օր առաջ ավագակների) ճանդիպած լինելու մասին. գ) Եթե ստորադաս նախադասությունն ունի ենթաստորադաս նախադասություն, ապա դրանց միաժամանակյա փոխակերպումը կարող է առաջ բերել դերբայական դարձվածների խճողում և դժվարացնել խոսքի ընկալումը՝ Նա ասում էր, որ կգնա, եթե աշխատավարձը ժամանակին վճարեն — Նա ասում էր աշխատավարձի ժամանակին վճարելու դեպքում իր գնալու մասին. դ) փոխակերպումն ընդհանրապես անթույլատրելի է այն բոլոր դեպքերում, երբ կա մտքի խճողման, երկիմաստություն, սերտորեն կապված անդամներն իրարից հեռացնելու վտանգ. համապատասխանաբար՝ դերբայական դարձվածը հարմար չէ փոխակերպել ստորադաս նախադասության, եթե այն պատկանում է լրացյալ (օրինակ՝ հատկացյալ) ունեցող անդամի. այսպես, Միծաղող մարդու դեմքը փայլում է նախադասությունը չի կարելի փոխակերպել Մարդու, որ ծիծաղում է, դեմքը փայլում է նախադասության. իմաստով նույնարժեք չէ Փայլում է այն մարդու դեմքը, որ ծիծաղում է նախադասությունը. ե) փոխակերպումը հնարավոր չէ, երբ բացակայում է տվյալ ժամանակը և սեռն արտահայտող դերբայ՝ Ումից վերցրել ես, նրան էլ տուր. Բնակվիր այնտեղ, որտեղ բնակվել նս և այլն:*

4) Այն բարդ նախադասությունների դեպքում, որոնց մեջ ստորադաս նախադասության հարաբերական դերանունը վերաբերում է ողջ գերադաս նախադասությանը, փոխակերպումը կարելի է կատարել գերադաս նախադասությունը վերածելով դերբայական դարձվածի՝ Խաղախությունը պարզվեց, որի պատճառով նա ստիպված էր մեկնել — խաղախության պարզվելու պատճառով նա ստիպված էր մեկնել: Այսպիսի

փոխակերպում կարելի է կատարել նաև հետևանքի ստորադաս նախադասության դեպքում՝ Այնքան էր տարված գործով, որ ինձ չնկատեց — Գործով տարված լինելու պատճառով ինձ չնկատեց կամ՝ Գործով տարված լինելով՝ ինձ չնկատեց։ Իհարկե, ինչպես նշվել է, այս դեպքում արտահայտության եղանակները հավասարազոր չեն։

5) Այն բոլոր դեպքերում, երբ ստորադաս նախադասությունը փոխակերպվում է դերբայական դարձվածի, երբեմն էլ (սակավածի վրացումների և համապատասխան բայանվան առկայության դեպքում) բայանվանական կառույցի, ա) հարաբերական դերանունները, հարաբերող բառերը և շաղկապները զանց են առնվում, բ) բայը կամ բայանունը հանդես են գալիս այն հոլովով և կապով, որ պահանջում է նրանց պաշտոնը զլխավոր նախադասության մեջ՝ Ով գտել է, թող բերի — Գտնողը թող բերի. Ինչ կորցրել էր գտավ — Կորցրածը գտավ. Եկավ, երբ Գրիգորը գնացել էր — Եկավ Գրիգորի գնալուց հետո. Եթե տեսնեմ կասեմ — Տեսնելու դեպքում կասեմ. Վեր կացավ, որպեսզի զեկուցի — Վեր կացավ զեկուցելու համար. կամ՝ Վեր կացավ զեկուցման համար և այլն։

Առաջադրանք 94. Հետևյալ հատվածները վերաշարադրե՛լ՝ ստորադասական նախադասությունները փոխարկելով պարզի։

1. Իսկույն երևում էր, որ Մարությանի ընտանիքն ինտելիգենտ ընտանիքներից էր։ Շահյանը զարմանքով տեսնում էր, որ Մարությանը, կինը, աղջիկը երբեմն բոլորովին տարբեր, շատ անգամ հակառակ կարծիքներ էին հայտնում միևնույն նյութի մասին։ Երբ չէին կարողանում իրար համոզել, նրանք դիմում էին Շահյանին, իբրև մի հեղինակավոր մարդու, որի կարծիքը վճռական նշանակություն ունի։ Շահյանը շատ լավ տեսնում էր, որ իր խելքը նրանց խելքից բարձր չէ, ուստի երկյուղ էր կրում, թե միգուցե իրեն անժանոթ նյութի մասին հանկարծ այնպիսի անհեթեթ կարծիք հայտնի, որ միանգամից հիասթափեցնի։ Այդ պատճառով հարկավոր դեպքում չափազանց զգույշ էր պահում իրեն և ամեն կերպ աշխատում էր, որ պատվով դուրս գա որոգայթից։

Եվան նստած էր Շահյանի դիմաց, մոր կողքին։ Երբ ժրպտում էր, նրա աչքերը հեգնական, կծու արտահայտություն

էին ստանում: Ժամանակը թռչում էր աննկատելի կերպով: Բացի Սուրենից, որ գլուխը հոր ծնկան վրա դրած, քնել էր, խոսակցութեանը չէր մասնակցում միայն մեկը, որ Մարութ-
յանի եղբոր աղջիկն էր՝ Աշխենը: Նա նստած էր նստարանի
ծայրին, լուսամտի մոտ և կարծես աշխատում էր, որ ան-
նկատ մնա: Շահյանը նայում էր նրա դեմքին և ամենեին
չէր կարողանում հասկանալ, թե ինչ տպավորութեան է թող-
նում իր վրա այդ աղջիկը:

(ՆԱԲ-ԴՈՍ)

II. «Ձեմ ների ոչ մեկին: Երբեք»,— մտածում էր նա նժույ-
գի վրա առաջ թեքված, հայացքը հեռուները, ցանկանալով
կարծես, որ առաջինն ինքը տեսնի, թե ինչ է կատարվում
Ավանում:

Վերջապես այդ օրը՝ այն ժամին, երբ արևը թեքվում էր
դեպի մուտքը, նրա առջև պարզվեց մի օտարոտի տեսարան:
Այնտեղ, ուր լեռների հարթ գոգավորութեան մեջ երևում էր
Ավանը, հիմա ծածկված էր ծխով:

«Հավանաբար մարտը շարունակվում է քաղաքում»,—
մտածեց Արշակը և ձին կանգնեցրեց, որ ավելի լավ տեսնի:
Արշակը ամեն ինչ հասկացավ կարծես. և առաջին բանը, որ
զգաց, ծանր վիրավորանքի զգացումն էր:

Երբ թագավորը մտավ քաղաք, ծուխը տակավին տարած-
վում էր նրա վրա: Առաջ գալով, նա տեսավ տներ, որ այր-
վում էին:

Քաղաքից դուրս գալով՝ Արշակը երկար ժամանակ լուռ էր
և մթնած: Սպասում էր, թե ի՞նչ լուր կբերեն նախարարա-
կան զորքին-հետապնդող իր գնդից, որպեսզի որոշեր իր անե-
լիքը: Նա սպասում էր և համոզված էր, որ իր գունդը պիտի
շախջախեր նրանց:

(ՍՄ. ԶՈՐՅԱՆ)

ՄԵԶԲԵՐՎՈՂ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔ

Հեղինակային խոսքի մեջ ըստ անհրաժեշտութեան կարող
է մեջբերվել մի ուրիշի, երբեմն էլ իր իսկ հեղինակի խոսքը:
Մեջբերվող խոսքը լինում է երկու տեսակ՝ ուղղակի և անուղ-
ղակի:

Ուղղակի կոչվում է այնպիսի խոսքը, որ մեջբերվում է առանց փոփոխության: Անուղղակի կոչվում է այնպիսի խոսքը, որ մեջբերվում է փոփոխված ձևով՝ հեղինակի շարադրանքով:

Ուղղակի խոսքը բերվում է հաղորդում արտահայտող զանազան բայերի հարադրությամբ՝ ասել, գրել, հարցնել, պատասխանել և այլն: Բանավոր խոսքի մեջ հեղինակը աշխատում է պահպանել մեջբերվող խոսքի կառուցվածքային առանձնահատկությունները, նրա հարցական, բացականչական հնչերանգները: Ուղղակի խոսքն այս դեպքում հնչերանգային տեսակետից տարբերվում է հեղինակային խոսքից, որ տվյալ դեպքում պատմողական բնույթի է: Ուղղակի խոսքը լայնորեն տարածված է գեղարվեստական գրականության մեջ և մեծ չափով բարձրացնում է խոսքի արտահայտչականությունը: Գրավոր խոսքում ուղղակի խոսքը մեջբերվում է անշատման գծերով կամ չակերտներով. անշատման գծերը օգտագործվում են սովորաբար բանավոր, չակերտները՝ գրավոր կամ ներքին (արտաքնապես չարտահայտված) խոսքը և մտածմունքը ներկայացնելու համար: Բացթողումներն ու կրճատումներն արտահայտվում են բազմակետերով: Գիտական գրականության մեջ սովորաբար գործածվում են միայն չակերտները, ընդ որում փակագծերով կամ տողատակ ծանոթությամբ նշվում է մեջբերման աղբյուրը:

Անուղղակի խոսքը ներհյուսվում է հեղինակային խոսքի մեջ որպես նրա անբաժանելի մաս: Այս դեպքում ուղղակի խոսքի համեմատությամբ կատարվում են հետևյալ փոփոխությունները. ա) դրվում է որ կամ քե շաղկապը (ըստ հաղորդման հավաստիության)՝ Նա ասաց, որ (քե) գնում է. սրանով իսկ ուրիշի խոսքը դառնում է երկրորդական նախադասություն. բ) հարցական և բացականչական նախադասությունները փոխվում են պատմողականի՝ կորցնելով իրենց հարցական և բացականչական հնչերանգը. հարցական նախադասության հարցական հնչերանգի փոխարեն այս դեպքում հանդես է գալիս արդյո՞ք բառը՝ Նա հարցրեց, քե արդյո՞ք Գրիգորը գալիս է: Եթե կան բացականչություն արտահայտող բառեր, դրանք սովորաբար շեշտ են ստանում՝ Նա պատմեց, քե ինչքա՞ն դժվար է իր գործը. հարցական բառերը (դերա-

նունները) սովորաբար պահպանում են հարցական առոգանությունը, թեև գրության մեջ հարցական նշանը կարելի է փոխարինել նաև շեշտով՝ նա ուզում էր տեղեկանալ, թե Գրիգորն ո՞ւր է գնում (...ո՞ւր է գնում)։ այսպիսի հարցական բառերի առկայության դեպքում գործածվում է թե շաղկապը։ դ) կոչականը վերածվում է գերսուգաս նախադասության մատուցման անուղղակի խնդրի կամ ստորադաս նախադասության ենթակայի՝ նա խնդրեց Գրիգորին, որ գնա տուն կամ նա խնդրեց, որ Գրիգորը գնա տուն (ուղղակի խոսքով՝ նա խնդրեց. «Գրիգոր, գնա տուն»)։ ե) ձայնարկությունները և հուզական երանգ ունեցող մյուս բառերը բաց են թողնվում։

Անուղղակի խոսքը ավելի շատ գործածվում է վարչագործարարական, ընդհանրապես ոչ պատկերավոր և ոչ հուզական խոսքի մեջ։

Գեղարվեստական գրականության մեջ հանդիպում է նաև մեջբերվող խոսքի մի տեսակ, որի մեջ զուգորդվում են ուղղակի և անուղղակի խոսքերի որոշ հատկություններ։ Այստեղ բացակայում է շաղկապը, բայց խոսքը կառուցվում է ինչպես անուղղակի խոսքի դեպքում։ Այսպիսի խոսքը կոչվում է ազատ խոսք. օրինակ՝ նա ինքն իրեն ասում էր. պետք է ամուսնանալ, չենթարկվի այդ չար մարդկանց ազդեցությանը։

Առաջադրանք 95. Հետևյալ հատվածները վերափոխել՝ ուղղակի խոսքերը դարձնելով անուղղակի։ Նշել կատարվող ձևափոխությունները.

I. Կարապետը գիտական բացատրություն է տալիս.

— Ատենություն է հավաքվել մեր ներսում։

— է, իրար վրա՝ պիտի ծախսենք ատենությունը, — պոռթկում է հայրս։

— Բա ո՞ւր տանենք, ո՞ւմ վրա ծախսենք այդքան ատենությունը. ուժերդ հերիք կանե՞ն ուրիշին։ Մենք ենք, մերոնց վրա կարող ենք գոռգոռալ, — ասաց Կարապետը։

— Խելքից դուրս բաներ մի՛ խոսիր, — վրա բերեց Սեդրակը։

Կարապետը փրփրեց, սկսեց քայլել սենյակում, քայլել և թքել, քայլել և թքել, մինչև կոկորդը չորացավ։ Հետո բարկացավ.

— Մո՛ւ, ես գրքեր կկարդամ... իմ գլխից հո չե՞մ ասում:
(Ա. Այվազյան)

II. Հազիվ եմ ծիծաղա զսպում լսելով, թե ինչպես է Գարիկը նորից խորհուրդներ տալիս տղաներին:

— Երբ ներս մտնենք,— ասում է նա,— անընդհատ կրկնեցե՞ք ձեր մտքում. «Ես լավ եմ պատրաստվել, ես լավ եմ պատրաստվել, ես լավ եմ պատրաստվել»: Դա հոգեբանորեն ապացուցված բան է: Մոռա՛յլ չնստեք, կկարծեն, թե չգիտեք, միշտ ժպտացե՞ք դասախոսներին...»:

— Ինչո՞ւ չէիր պարապել: Դուրդ գալի՞ս է, որ մեզ խայտառակեցիր:

— Խելք չկա գլխիդ մեջ,— վրա է տալիս եղբայրը:

— Եթե խելքդ փողոցներին տված չլինեիր, հիմա այդ վիճակին չէիր հասնի,— շարունակում է Վարդանը: Այդ պահին ես ու Մովսիկը՝ ակամա նայում ենք իրար:

(Պ. Զեյթունցյան)

III. Շրջկոմի քարտուղարն իր մոտ կանչեց Յուլակ Շաղափյանին և հարցրեց.

— Դո՛ւք, Յուլա՛կ Շաղափյան, որ շատ մարդկանց կյանք եք դառնացրել, երեխաներ ունե՞ք:

— Զունեմ, դժբախտաբար,— պատասխանեց Շաղափյանը:

— Եվ իսկապես դա դժբախտություն է: Բայց եթե դուք հայր լինեիք, գուցե պատկերացնեիք այն հոր վիճակը, որ անտեղի զրկվել է իր երեխաներից,— շարունակեց քարտուղարը:

— Ես Զեզ չեմ հասկանում,— ասաց Շաղափյանը:

Իսկ Դագեսյանը շարունակեց.

— Շատ էլ լավ հասկանում եք: Ես կանչել եմ ձեզ մի թեթև դառնացնելու համար: Թերթում պետք է աշխատեն ազնիվ և գրագետ մարդիկ: Այդ երկու կարևոր գծերից էլ դուք զուրկ եք: Դուք վաղվանից չպետք է աշխատեք այնտեղ:

(Ս. Այվազյան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գաղափար ոճի մասին

3

Ոճի տեսակները

Գործառական ոճեր	4
Վարչագործարարական ոճ	5
Գիտական ոճ	6
Հրապարակախոսական ոճ	7
Գեղարվեստական ոճ	8
Իրադրական ոճեր	22
Անճատական ոճեր	24
Գրողի ոճ	25

Ոճի հատկությունները

Գաղափար ոճի հատկությունների մասին	26
Ճշգրտություն և պատեհություն	27
Սեղմություն	28
Պարզություն	28
Բովանդակություն	28
Բազմազանություն	29
Կանոնավորություն	29
Արտահայտչականություն, հուզականություն և պատկերավորություն	30

Արտահայտչականության միջոցներ

<u>Մակեր</u>	31
Դարձույթներ և բանդարձումներ	34
Համեմատություն	35
Փոխաբերություն	36
Փոխանունություն	38
Համըմբունում	39
Անձնավորում	39
Զափազանցություն	41
Նվազաբերություն	41
Շրջասույթ	41
Այլաբանություն	42
Կրկնություն	43
Վաստիճանավորում	47
Ջեղչում	48
Ավելադրություն	49
Հակադրություն	49
Ծարտասանական հարց	51
Հեղեանք	54
Պարադոքս	54
Անշաղկապություն	54
Դրդադասություն	54

Բառային ոճարանություն

Քառային ոճարանության առարկան և խնդիրները	57
Համանիշ բառեր	57
Համանուն բառեր	62
Հականիշ բառեր	65
Հնարանություններ և նորարանություններ	66

Գոհակարանություններ և մեղմարանություններ	70
Բարրառային և ծարգոռային բառեր	71
Մասնագիտական բառեր և ասորմիթներ	74
Ստարաբանություն և մաքրամոլություն	75
Պարզաբանություններ և կաղապարային արտահայտություններ	76
Դարձվածքներ	78

Քերականական ոճաբանություն

Քերականական ոճաբանության առարկան և խնդիրները	81
--	----

Ձևաբանական ոճաբանություն

Գոյականի ոճական կիրառությունը. գոյականի թիվը	82
Անձի և իրի անունների ոճական կիրառությունը	87
Հոլովներ	88
Հոլովաձևերի և կապերի համանշտությունը	91
Ածականի ոճական կիրառությունը. համեմատության աստիճաններ	95
Խվականի ոճական կիրառությունը	97
Դերանվան ոճական կիրառությունը	98
Անձնական դերանուններ	99
Ցուցական դերանուններ	102
Որոշյալ, անորոշ և ժխտական դերանուններ	103
Հարցական և հարաբերական դերանուններ	104
Բայական ձևերի ոճական կիրառությունը. բայի դեմքը	108
Բայի եղանակները	110
Բայի ժամանակները	112
Դերբայական ձևեր	113

Ծարառյուսական ոճաբանություն

Ծարահյուսական ոճական հնարավորությունները	116
Ստորոգյալի արտահայտությունը	118
Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը	121
Միակազմ նախադասություն	124
Նախադասության ներգործական և կրավորական կառույցներ	127
Խնդրառություն	129
Նախադասության բազմակի անդամներ	134
Տրոհում և տրոհվող լրացումներ	138
Բարդ նախադասության ոճական կիրառությունը	140
Համադաս նախադասություններ և համադասական շաղկապներ	142
Ստորադաս նախադասությունների և նրանց կապակցության միջոցների ոճական կիրառությունը	144
Որ հարաբերական դերանուն և որ շաղկապ	144
Ձևի ստորադաս նախադասություն	146
Զափ ու քանակի ստորադաս նախադասություն	147
Տեղի ստորադաս նախադասություն	147
Ժամանակի ստորադաս նախադասություն	147
Պատճառի և հետևանքի ստորադաս նախադասություններ	148
Պայմանի ստորադաս նախադասություն	150
Զիջական ստորադաս նախադասություն	151
Նպատակի ստորադաս նախադասություն	152
Բարդ ստորադասական նախադասության փոխակերպումը պարզի	153
Մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսք	156
	163

Գևորգ Բեգլարի Ջահուկյան
Յրիգրիկ Հովհաննեսի Խղաթյան

ՀԱՅՈՑ ԼԵՋՎԻ
ՈՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկ
Վիճակագր. դպրոցի ճախասիրական պատրաստումների համար



Ժամբագիր՝ Վ. Ա. Նեոսիյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Բ. Մանգալուճի
Նկարիչ՝ Ո. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Ա. Գ. Խաչատրյան
Վերատպագր. սրբագրիչ՝ Ա. Փ. Արշակյան

ИБ — № 2526

**Հանձնված է շարվածքի 4. 09. 87 թ.։ Ուտորագրված է տպագրության 8. 12. 87 թ.։ Զախը՝ 84×108_{1/32}։ Թուղթ՝ տպ. № 2։ Տառատեսակը՝ «Գրքի սովորական»։ Տպագրությունը՝ բարձր։ Պայմ. 8,4 մամ., տպ. 8,6 գուն. թ. զտ., հրատ. 7,57 մամ.։ Տպարանակը՝ 5 000, Պատվեր՝ 2315։ Գինը՝ 55 կոպ.։ «Լույս» հրատարակչություն, Երևան—9, Կիրովի 19 ա։
Издательство «Луйс», Ереван-9, ул. Кирова, 19а.**

Հայկ. ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան-9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегاپарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.